



Ecoline
International

ՀԱՅԱՍՏԱՆ. ՈՌՈԳՄԱՆ ԶՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ



Աղբյուրը՝ Խորհրդատուի լուսանկարները Արթուրի, Աստղածորի, Զասախի, Լիճքի և Ելփինի ջրամբարների տարածքներից

Յուլիս 2025

Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ, Բուլղարիա, 1000, Սոֆիա, Ռաչո Դիմչև 1, www.ecoline-int.org

ՀԱՅԱՍՏԱՆ. ՈՌԱԳՄԱՆ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Մշակված է՝



Ecoline
International

Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ (Սոֆիա,
Բուլղարիա)



Տնօրեն. Մայա Գաչեչիլադե Բոժենկով
Հեռ. +38095 11 00 727 + 359 876 63 0522
Էլ. փոստ. mgachechiladze@ecoline-int.org
www.ecoline-int.org

Համագործակցելով



ATMS Solutions

ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս ՍՊԸ
(Երևան, Հայաստան)
Տնօրեն. Արտակ Տեր-Թորոսյան
Հեռ. +37499 109495
Էլ. փոստ. info@atms.am
www.atms.am

Մշակված է

Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության Ջրային Կոմիտեի համար
Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկի համար

© Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ, 2025

Բոլոր իրավունքները պահպանված են: Սույն փաստաթղթի ամբողջական կամ մասնակի
օգտագործումը կարող է կատարվել միայն հղում անելով սկզբնաղբյուրին:

ՓԱՍՏԱՂԹԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

| Տարբերակ | Մշակված է | Ստուգված է | Հրապարակված է | Հրապարակման ամսաթիվը | Նկարագիրը |
|----------|--|------------------|--------------------------|----------------------|---|
| 1 | Մայա Գաչեչիլադե Բոժեսկու Արտակ Տեր-Թորոսյանի, Գայանե Սահակյանի և Սուրեն Գյուրջինյանի մասնակցությամբ | Տաղյանա Ստրիժովա | Մայա Գաչեչիլադե Բոժեսկու | 7 հուլիս 2025 | ՎՁԵԲ-ի և Ջրային Կոմիտեի վերանայման համար տարբերակ |
| 2 | | | | 21 հուլիս 2025 | ՎՁԵԲ-ի և Ջրային Կոմիտեի հաստատման, հայերեն թարգմանության և հրապարակման համար վերջնական տարբերակ |

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|-------|---|
| ԱԵՏՏ | Ազդեցության Ենթարկված Տնային Տնտեսություն |
| ԱԵԱ | Ազդեցության Ենթարկված Անձ |
| ՎՉԵԲ | Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկ |
| ՇՄԱԳ | Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատում |
| ՇՄՍԱԳ | Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատում |
| ԲՍԲ | Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականություն |
| ԵՄ | Եվրոպական Միություն |
| ԸՕՀ | Ընտանեկան Օգուտների Համակարգ |
| ՀԿ | Հայաստանի Կառավարություն |
| ԲՄ | Բողոքարկման Մեխանիզմ |
| ԱԱՄԳ | Անկախ Արտաքին Մշտադիտարկման Գործակալություն |
| ՏԿԵՆ | Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարություն |
| ԾԱԵԱ | Ծրագրի Ազդեցության Ենթարկված Անձ |
| ԾԱԵԿ | Ծրագրի Ազդեցության Ենթարկված Կողմ |
| ԾԻԳ | Ծրագրի Իրականացման Գործակալություն |
| ԻՊ | Իրականացման Պահանջ (ՎՉԵԲ-ի) |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՏՇ | Տարաբնակեցման Շրջանակ |
| ՏՊ | Տարաբնակեցման Պլան |
| ՇՆՊ | Շահառուների Ներգրավվածության Պլան |
| ՍՏՈԼ | Սոցիալտնտեսական Ուսումնասիրություն |
| ՀՀԶԿ | Հայաստանի Հանրապետության Ջրային Կոմիտե |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 Նախաբան..... 6

2 Առաջարկվող Ծրագրի նկարագիրը եվ ժամանակացույցը 8

2.1 Ծրագրի օբյեկտները 8

2.2 Փոխկապակցված կառույցներ և գործունեություն 14

2.3 Ֆիզիկական և տնտեսական տեղահանումը նվազեցնող նախագծային լուծումներ .. 14

2.4 Հողերի օտարման գործընթացի ընթացիկ կարգավիճակը 15

2.5 Ծրագրի ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվություն..... 15

3 ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ շրջանակը 15

3.1 ՀՀ հողերի օտարման և տարաբնակեցման իրավական շրջանակը 15

3.2 ՎՉԵԲ-ի պահանջները..... 21

3.3 Բացերի վերլուծություն 22

4 ԾՐԱԳՐԻ ՀՈՂԱԿԱԿԱՆԱՋԱՐԿԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԵՂԱԿԱՆՄԱՆ ազդեցությունները.. 33

4.1 Կառուցման և շահագործման հողապահանջարկը 33

4.2 Ֆիզիկական տեղահանման ազդեցությունները 34

4.3 Տնտեսական տեղահանման ազդեցությունները 34

5 ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՄԿԱՐԴԱԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ . 47

5.1 Հիմնական սկզբունքներ 47

5.2 Իրավասություն և վերջնաժամկետ 47

5.3 Իրավունքների սխեմա 48

5.4 Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություն ստանալու իրավունքները..... 56

6 Հանրության հետ խորհրդակցություններ, շահագրգիռ կողմերի ներգրավածություն եվ մասնակցություն, փաստաթղթերի հրապարակում 66

6.1 Նախաբան..... 66

6.2 Սույն ՏՇ-ի մշակման համար իրականացված խորհրդակցություններ 66

6.3 Տեղեկատվության հրապարակումը 68

6.4 Ներգրավումը և խորհրդակցությունները ՏՊ-ի շրջանակում 68

7 բողոքարկման մեխանիզմ..... 69

8 Պատասխանատվություն, Իրականացման կարգավորումներ եվ բյուջե 71

8.1 Դերերը և պատասխանատվությունը 71

8.2 Ժամանակացույցը 74

8.3 Իրականացման ծախսերը և բյուջեն 75

8.4 ՏՇ-ի և ՏՊ-ի իրականացման կարողությունների ստեղծում 76

9 Մշտադիտարկում եվ հաշվետվողականություն 76

9.1 Ներքին մշտադիտարկում 76

9.2 Արտաքին ավարտական աուդիտ 77

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Արթիկի ջրամբարի տեխնիկական մասնագրերը 9

Աղյուսակ 2. Աստղածորի ջրամբարի տեխնիկական մասնագրերը 10

Աղյուսակ 3. Քասախի ջրամբարի տեխնիկական մասնագրերը 11

Աղյուսակ 4. Լիճքի ջրամբարի տեխնիկական մասնագրերը 12

Աղյուսակ 5. Ելփինի ջրամբարի տեխնիկական մասնագրերը 13

Աղյուսակ 6. Տարաբնակեցման բացերի վերլուծություն՝ ՀՀ օրենսդրություն և ՎՉԵԲ-ի հողերի օտարման պահանջներ 23

Աղյուսակ 7. Գնահատված հողապահանջարկը և հողերի սեփականության կարգավիճակն ըստ առանձին բաղադրիչների 33

Աղյուսակ 8. Իրավունքների կողմնորոշիչ սխեմա 49

Աղյուսակ 9. ՏՇ-ի մշակման համար Ծրագրի տարածաշրջաններում շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունները 67

Աղյուսակ 10. Ջրային կոմիտեի հողերի օտարման, կամ բողոքների և ընդհանուր հարցերով կոնսուլտային տվյալներ 71

Աղյուսակ 11. ՏՇ/ՏՊ համար կազմակերպչական կարգավորումները 72

Աղյուսակ 12. ՏՊ-ի իրականացման նախնական ժամանակացույց 75

Նկար 1. Հայաստանում վեց ջրամբարների տեղադիրքերը 6

Նկար 2. Արթիկի ջրամբարի և հարակից բնակավայրերի տեղադիրքը 9

Նկար 3. Աստղածորի ջրամբարի և հարակից բնակավայրերի տեղադիրքը 10

Նկար 4. Քասախի ջրամբարի և հարակից բնակավայրերի տեղադիրքը 11

Նկար 5. Լիճքի ջրամբարի և հարակից բնակավայրի տեղադիրքը 12

Նկար 6. Ելփինի ջրամբարի և հարակից բնակավայրի տեղադիրքը 13

Նկար 7. Արթիկի ջրամբար՝ սխեմատիկ քարտեզ և տարածքը պատկերող նկարներ 36

Figure 8. Աստղածորի ջրամբար՝ սխեմատիկ քարտեզ և տարածքը պատկերող նկարներ 38

Նկար 9. Քասախի ջրամբար՝ սխեմատիկ քարտեզ և տարածքը պատկերող նկարներ 41

Նկար 10. Լիճքի ջրամբար՝ սխեմատիկ քարտեզ և տարածքը պատկերող նկարներ 43

Նկար 11. Ելփինի ջրամբար՝ սխեմատիկ քարտեզ և տարածքը պատկերող նկարներ 45

1 ԱՆՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (ՀԿ) դիմել է Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկին (ՎՉԵԲ)՝ Հայաստանի տարբեր մարզերում վեց ջրամբարների կառուցման (Ծրագիր) համար վարկ տրամադրելու հայցով (**Նկար 1**):

- Արթիկ ջրամբարը Շիրակի մարզում,
- Աստղածոր և Արգիչի ջրամբարների Գեղարքունիքի մարզում,
- Քասախ ջրամբարը Արագածոտնի մարզում,
- Լիճք ջրամբարը Սյունիքի մարզում, և
- Ելփինի ջրամբարը Վայոց Ձորի մարզում:

Ծրագրի իրականացման մարմինը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) կազմում գործող ՀՀ Ջրային Կոմիտեն է (Պատվիրատու կամ ՀՀՋԿ):



Աղբյուր՝ մշակվել է Խորհրդատուի կողմից Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա

Նկար 1. Հայաստանում վեց ջրամբարների տեղադիրքերը

Հայաստանը բախվում է ջրի սակավության և աղտոտման, ջրի պահեստավորման անբավարար և հնացած կառույցների, անարդյունավետ ոռոգման համակարգերի և կլիմայի փոփոխության ջրի հասանելիության վրա ազդեցության հետ կապված մարտահրավերների (Համաշխարհային բանկ, 2023)¹: Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, այդ թվում՝ գյուղատնտեսական օգտագործման համար, և ջրի պահեստավորման հզորությունների ընդլայնումը երկրի առաջնահերթություններից են:

¹ Համաշխարհային Բանկ, 2023: Հայաստանի մակերևութային ջրամբարների բազմաչափ գնահատում

Ջրային ռեսուրսների խնդիրները լուծելու և երկրում ջրային ու պարենային անվտանգությունը բարձրացնելու համար ՀՀ կառավարությունը մտադիր է կառուցել 17 ջրամբար Հայաստանի տարբեր շրջաններում²: Ծրագիրը ներառում է առաջարկվող ջրամբարներից վեցը: Այն նաև տեղավորվում է ՀՀ կառավարությանը ԵՄ աջակցության շրջանակներում «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում. Արևելյան գործընկերության առաջնահերթությունները 2020թ-ից հետո» նախաձեռնության «Լրացուցիչ «Բ» նախաձեռնության», ինչպես նաև Հայաստանի համար նախատեսված 1-ին առաջնահերթության ոլորտում դիմադրողական, կայուն և ինտեգրված տնտեսություն, որը խթանում է «կանաչ և կայուն գյուղատնտեսությունը և գյուղատնտեսական վերամշակումը՝ ռացիոնալ ջրային կառավարման համակարգերով և ենթակառուցվածքներով» ԵՄ 2021-2027 թվականների բազմամյա ինդիկատիվ ծրագրի³ շրջանակներում:

Բոլոր ջրամբարների համար ավարտվել են տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները: Արթիկի, Աստղածորի, Բասախի, Լիճքի և Ելփինի ջրամբարների համար մշակվել են աշխատանքային նախագծային փաստաթղթեր, բացառությամբ Արգիչի ջրամբարի նախագիծը, որը նախատեսվում է մշակել ավելի ուշ:

Արթիկի, Աստղածորի, Բասախի, Լիճքի և Ելփինի ջրամբարների համար ավարտվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ազգային ընթացակարգերը, և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը դրանց համար տվել է դրական փորձաքննական եզրակացություններ (թույլտվություններ) 2024 թվականի սեպտեմբերից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում: Արգիչի ջրամբարի ՇՄԱԳ գործընթացը կսկսվի նախագծային փաստաթղթերի մշակումից հետո:

Ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության և սոցիալական գնահատման փաստաթղթերը ցույց տվեցին, որ այն չի հանգեցնի ֆիզիկական, սակայն կբերի տնտեսական տեղահանման՝ ակտիվների կորստի կամ գույքի հասանելիության կորստի և հողօգտագործման սահմանափակման պատճառով: Այսպիսով, այս փաստաթուղթը՝ *Տարաբնակեցման Շրջանակը* ("ՏՇ"), մշակվել է սկզբունքներ ուրվագծելու և Ծրագրի օբյեկտների (և դրանց փոխկապակցված կառույցների, որքանով դրանք հայտնի են) հետ կապված հողերի հետագա օտարման, փոխհատուցման և կենսապահովման վերականգնման գործողությունների ուղեցույց տրամադրելու համար: ՏՇ-ն կազմվել է ՎՉԵԲ-ի համապատասխան պահանջներին և ազգային կանոնակարգերին համապատասխան (**Բաժին 2.2**): Այն սահմանում է շրջանակ՝ նախատեսվող ջրամբարների համար առանձին Տարաբնակեցման Պլաններ (ՏՊ) մշակելու համար:

ՏՇ-ը հիմնված է հետևյալ տեղեկատվության վրա՝

- 2024 թվականին Պատվիրատուի կողմից ներգրավված ՇՄԱԳ խորհրդատուի կողմից մշակված ՇՄԱԳ հաշվետվություններ,
- Արթիկ, Բասախ, Աստղածոր, Լիճք և Ելփին ջրամբարների նախագծային փաստաթղթեր,
- Բնապահպանական և սոցիալական բացերի վերլուծություն (2025)՝ պատվիրված ՎՉԵԲ-ի կողմից և խորհրդակցություններ ՎՉԵԲ-ի բացերի վերլուծության առաջադրանքի համար պատասխանատու խորհրդատուի հետ,

² Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր հաստատված ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման Հավելված 1-ով՝ <https://www.arlis.am/hy/acts/201370>

³ https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/document/download/151aae61-d6b4-45cb-992b-38edce55b33f_en

- Արթիկի ջրամբարի տարաբնակեցման շրջանակի նախագիծ և Ելիկի, Քասախի, Լիճքի և Աստղածորի ջրամբարների ՏՊ-ներ նախնական նախագծեր (բոլորը պատվիրված են պատվիրատուի կողմից),
- Տեղեկատվություն, որը ստացված է համայնքներից (Հայաստանի վարչական համակարգում կոչվում են "համայնքապետարաններ"), որոնց տարածքներում նախատեսվում է կառուցել ջրամբարները,
- Խորհրդակցություններ Պատվիրատուի և նրա խորհրդատուների հետ, որոնք պատասխանատու են ՏՊ-ների, նախագծման և ՇՄԱԳ հաշվետվությունների մշակման համար,
- 2024 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին Ծրագրի տարածքներում ՏՇ-ի նախապատրաստման նպատակով անցկացված խորհրդակցություններ և հարցազրույցներ (**Բաժին 6**):

ՎՉԵԲ-ը այս Ծրագիրը դասակարգել է որպես "Ա" կատեգորիայի՝ համաձայն իր բնապահպանական և սոցիալական քաղաքականության (2019թ.)⁴, քանի որ այն կարող է առաջացնել զգալի բնապահպանական և սոցիալական ազդեցություններ: Դա նշանակում է, որ Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատման ("ՇՄԱԳ") հաշվետվությունը և դրան կից բնապահպանական և սոցիալական փաստաթղթերը⁵, ներառյալ այս ՏՇ-ը, պետք է մշակվեն և հրապարակվեն Պատվիրատուի և ՎՉԵԲ-ի կողմից առնվազն 120 օրվա ընթացքում: ՎՉԵԲ-ը որոշում կկայացնի ֆինանսավորման տրամադրման վերաբերյալ՝ 120 օրվա հրապարակումից հետո:

2 ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

2.1 Ծրագրի օբյեկտները

Եթե հակառակը նշված չէ, այս բաժնում ներկայացված տեղեկատվությունը վերցված է ջրամբարների համար մշակված նախագծային փաստաթղթերից և ՇՄԱԳ հաշվետվություններից: Քանի որ Արգիչիի ջրամբարի նախագիծը սույն փաստաթղթի մշակման պահին հասանելի չէր, այն չի քննարկվում այս բաժնում և միայն հասանելիության սահմաններում է ներառված փաստաթղթի մյուս բաժիններում:

Նախագծվող ջրամբարները բաղկացած են հետևյալ բաղադրիչներից. i) պատվար և կատար⁶, ii) հեղեղատարից⁷, iii) ոռոգման ջրթողից⁸ և ոռոգման ջրանցքից, iv) գետը շրջանցող ջրանցքից⁹, v) աղբյուրին միացող էլեկտրասնուցման միավորից, vi), դարպասներով մետաղական պարսպից, vii) ջրամբարի տարածքի մուտքին անվտանգության կետից, viii) այլ անհրաժեշտ կառույցներից և հսկման ու չափման սարքերից: Որոշ ջրամբարների համար անհրաժեշտ կլինեն նաև մոտեցման ճանապարհներ և մտող կամ շրջանցող ջրանցքներ (այլ աղբյուրից ջուրը տեղափոխելու համար): Ջրամբարների տարբեր կառուցվածքների չափսերը տարբերվում են՝ կախված նախագծերից: Ստորև բերված ջրամբարների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն:

⁴ <https://www.ebrd.com/news/publications/policies/environmental-and-social-policy-esp.html>

⁵ Սույն փաստաթղթի մշակման պահին հինգ ջրամբարների ՇՄԱԳ փաթեթները պատրաստման փուլում էին,

⁶ Պատվարը՝ առվի, գետի կամ գետաբերանի հոսքի վրա կառուցված կառույց է՝ ջուրը պահելու համար: Կատարը պատվարի վերին շերտն է, որը կարող է ունենալ մի քանի մետր լայնությամբ: Մեծ պատվարը այն է, որն ունի 15 մ և ավել բարձրություն ամենացածր հիմքից մինչև կատարը կամ 5-ից 15 մ բարձրությամբ պատվար, որը կուտակում է ավելի քան 3 մլն. մ³ ջուր,

⁷ Հեղեղատարը կառուցվում է ջրամբարից գետը ներքևի հոսանքն ի վար ավելցուկային կամ ջրհեղեղային ջրի վերահսկվող արտահոսքն ապահովելու համար: Հեղեղատարները կոչվում են նաև "ջրհեղեղատարներ",

⁸ Սա կառույց է, որն անհրաժեշտ է ջրամբարի կանոնավոր շահագործման ընթացքում ոռոգման նպատակով ջրի բացթողումը վերահսկելու համար: Ջրթողը ներառում է համեմատաբար երկար պողպատե խողովակ՝ երկու ծայրերում փականներով,

⁹ Սա ժամանակավոր ջրանցք է, որը նախատեսված է շինարարության ընթացքում գետի հոսքը շեղելու համար՝ շինարարական չոր պահելու նպատակով:

2.1.1 Արթիկի ջրամբար

Արթիկի ջրամբարը նախատեսվում է կառուցել Շիրակի մարզի Կարկաչուն գետի Արթիկջուր վտակի վրա՝ Նոր Կյանք, Վարդաքար, Փանիկ, Անուշավան և Մեղրաշեն գյուղերի գյուղատնտեսական հողերը ոռոգելու համար: Արթիկի սկզբնական ջրամբարը սկսել է շահագործվել 1992 թվականին, իսկ 1994 թվականին դրա ամբարտակը վնասվել է ջրհեղեղների պատճառով, և ջրամբարը կորցրել է իր ջրի պահեստավորման կարողությունը: Նոր ամբարտակը նախատեսվում է կառուցել հին ամբարտակից 400 մ վերև: Ջրամբարը կտեղակայվի Նոր Կյանք գյուղից (Արթիկ համայնք) մոտ 600 մ հարավ-արևմուտք և Արթիկ քաղաքից մոտ 2.6 կմ հյուսիս-արևմուտք (**Նկար 2**):



Աղբյուր՝ մշակվել է Խորհրդատուի կողմից Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա

Նկար 2. Արթիկի ջրամբարի և հարակից բնակավայրերի տեղադիրքը

Առաջարկվող Արթիկի ջրամբարի տեխնիկական բնութագրերը ներկայացված են **Աղյուսակ 1**-ում: Այս ջրամբարի համար անհրաժեշտ է կառուցել 5.6 կմ երկարությամբ սնուցող ջրանցք հարակից՝ Արթիկ գետից, և 6.7 կմ երկարությամբ ոռոգման ջրանցք, որը ջուրը կտեղափոխի Նոր Կյանք, Փանիկ գյուղեր և հյուսիս (**Նկար 2**):

Աղյուսակ 1. Արթիկի ջրամբարի տեխնիկական մասնագրերը


| Հարաչափեր | Միավոր | Արժեքը |
|-------------------------|--------------------|----------------|
| Ջրամբար | | |
| Ընդհանուր տարողությունը | մլն.մ ³ | 1.25 |
| Ջրամբարի մակերեսը | հա | 22.0 |
| Սնուցման աղբյուրը | | Արթիկ գետ |
| Պատվար | | |
| Տիպը | | embankment dam |
| Պատվարի կարգը | | II |
| Մարմնի կյուրը | | ճալաքարակոպիճ |

| Հարաչափեր | Միավոր | Արժեքը |
|------------------------------|--------|--------|
| Պատվարի բարձրությունը | մ | 10.0 |
| Պատվարի կատարի նիշը | մծմ | 1670.0 |
| Պատվարի կատարի երկարությունը | մ | 610 |
| Պատվարի կատարի բարձրությունը | մ | 6.0 |

2.1.2 Աստղածորի ջրամբար

Աստղածորի ջրամբարը առաջարկվում է կառուցել Գեղարքունիքի մարզի Աստղածոր գետի վրա՝ գետի վարարումները կուտակելու և Աստղածոր, Վաղաշեն, Մարտունի և Չոլաքար բնակավայրերի գյուղատնտեսական հողերի սակավաջուր ամիսներին կայուն ոռոգում ապահովելու համար:

Ջրամբարի տարածքը գտնվում է Աստղածոր գյուղից մոտ 1.3 կմ վերև, Սևանա լճից հարավ (**Նկար 3**):



Աղբյուր՝ մշակվել է Խորհրդատուի կողմից Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա

Նկար 3. Աստղածորի ջրամբարի և հարակից բնակավայրերի տեղադիրքը

Աստղածորի ջրամբարի տեխնիկական մասնագրերը բերված են **Աղյուսակ 2**-ում:

Աղյուսակ 2. Աստղածորի ջրամբարի տեխնիկական մասնագրերը

| Հարաչափեր | Միավոր | Արժեքը |
|-------------------------|--------------------|----------------|
| Ջրամբար | | |
| Ընդհանուր տարողությունը | մլն.մ ³ | 1.55 |
| Ջրամբարի մակերեսը | հա | 13.53 |
| Սնուցման աղբյուրը | | Աստղածոր գետ |
| Պատվար | | |
| Տիպը | | գրունտային |
| Պատվարի կարգը | | II |
| Մարմնի նյութը | | ճալաքարակուպիճ |

| Հարաչափեր | Միավոր | Արժեքը |
|------------------------------|--------|--------|
| Պատվարի բարձրությունը | մ | 39.0 |
| Պատվարի կատարի նիշը | մծմ | 2157.0 |
| Պատվարի կատարի երկարությունը | մ | 264.0 |
| Պատվարի կատարի բարձրությունը | մ | 10.0 |

2.1.3 Քասախի ջրամբար

Քասախի ջրամբարը նախատեսվում է կառուցել Արագածոտնի և Արմավիրի մարզերի Աշտարակ և Խոյ համայնքների տարածքներում՝ Քասախ և Ամբերդ գետերի միախառնման հատվածում: Ջրամբարը նախատեսված է տարածաշրջանի 21 բնակավայրերի հողերը ոռոգելու նպատակով Ստորին Հրազդան ջրանցքի 2-րդ հերթին լրացուցիչ ջուր մատակարարելու համար: Ջրամբարի տարածքը գտնվում է այն շրջապատող բնակավայրերից մոտ 150-500 մ հեռավորության վրա (**Նկար 4**):



Աղբյուր՝ սշակվել է Խոյի հողատուի կողմից Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա

Նկար 4. Քասախի ջրամբարի և հարակից բնակավայրերի տեղադիրքը

Քասախի ջրամբարի տեխնիկական մասնագրերը բերված են **Աղյուսակ 3**-ում:


Աղյուսակ 3. Քասախի ջրամբարի տեխնիկական մասնագրերը

| Հարաչափեր | Միավոր | Արժեքը |
|-------------------------|--------------------|----------------------|
| Ջրամբար | | |
| Ընդհանուր տարողությունը | մլն.մ ³ | 10.0 |
| Ջրամբարի մակերեսը | հա | 89.7 |
| Սնուցման աղբյուրը | | Քասախ և Ամբերդ գետեր |
| Պատվար | | |
| Տիպը | | գրունտային |
| Պատվարի կարգը | | II |
| Մարմնի նյութը | | ճալաքարակոպիճ |
| Պատվարի բարձրությունը | մ | 31.0 |
| Պատվարի կատարի նիշը | մծմ | 980.0 |

| Հարաչափեր | Միավոր | Արժեքը |
|------------------------------|--------|--------|
| Պատվարի կատարի երկարությունը | մ | 1830.0 |
| Պատվարի կատարի բարձրությունը | մ | 8.0 |

2.1.4 Լիճքի ջրամբար

Լիճքի ջրամբարը նախատեսվում է կառուցել Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք բնակավայրից 1.5 կմ հարավ-արևելք (**Նկար 5**): Ջրամբարը նախատեսվում է Մեղրի գետի վրա՝ Մեղրի, Ագարակ, Ալվանք, Շվանիձոր, Նռնաձոր, Լեհվազ, Վարդանիձոր և Կարճևան բնակավայրերի գյուղատնտեսական հողերը ոռոգման ջրով ապահովելու համար:



Աղբյուր՝ սշակվել է Խորհրդատուի կողմից Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա

Նկար 5. Լիճքի ջրամբարի և հարակից բնակավայրի տեղադիրքը

Լիճքի ջրամբարի տեխնիկական մասնագրերը բերված են **Աղյուսակ 4**-ում:


Աղյուսակ 4. Լիճքի ջրամբարի տեխնիկական մասնագրերը

| Հարաչափեր | Միավոր | Արժեքը |
|------------------------------|--------------------|----------------|
| Ջրամբար | | |
| Ընդհանուր տարողությունը | մլն.մ ³ | 3.93 |
| Ջրամբարի մակերեսը | հա | 22.1 |
| Սնուցման աղբյուրը | | Մեղրի գետ |
| Պատվար | | |
| Տիպը | | embankment dam |
| Պատվարի կարգը | | II |
| Սարմսի կյուրթը | | pebble-gravel |
| Պատվարի բարձրությունը | մ | 64.0 |
| Պատվարի կատարի նիշը | մծմ | 1610.0 |
| Պատվարի կատարի երկարությունը | մ | 365.6 |
| Պատվարի կատարի բարձրությունը | մ | 8.0 |

2.1.5 Ելփինի ջրամբար

Ելփինի ջրամբարը նախատեսվում է կառուցել Արփա գետի Ելփին վտակի վրա, Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Ելփին գյուղից 2 կմ հյուսիս-արևելք (**Աղբյուր՝** մշակվել է Խորհրդատուի կողմից Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա

Նկար 6): Այն նախատեսված է Ելփին և Զիվա գյուղերը ոռոգման ջրով ապահովելու համար (վերջինս գտնվում է առաջարկվող ջրամբարից 6 մ հեռավորության վրա):



Աղբյուր՝ մշակվել է Խորհրդատուի կողմից Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա

Նկար 6. Ելփինի ջրամբարի և հարակից բնակավայրի տեղադիրքը

Ելփինի ջրամբարի տեխնիկական մասնագրերը բերված են **Աղյուսակ 5**. Ծրագիրը ներառում է Զիվա տանող 1.8 կմ ոռոգման խողովակաշարի կառուցում:

Աղյուսակ 5. Ելփինի ջրամբարի տեխնիկական մասնագրերը

| Հարաչափեր | Միավոր | Արժեքը |
|------------------------------|--------------------|----------------------|
| Ջրամբար | | |
| Ընդհանուր տարողությունը | մլն.մ ³ | 0.93 |
| Ջրամբարի մակերեսը | հա | 5.434 |
| Սնուցման աղբյուրը | | Արփա գետի Ելփին վտակ |
| Պատվար | | |
| Տիպը | | գրունտային |
| Պատվարի կարգը | | II |
| Մարմնի կյուբը | | pebble-gravel |
| Պատվարի բարձրությունը | մ | 36.0 |
| Պատվարի կատարի նիշը | մծմ | 1697.0 |
| Պատվարի կատարի երկարությունը | մ | 155.0 |
| Պատվարի կատարի բարձրությունը | մ | 8.0 |

2.2 Փոխկապակցված կառույցներ և գործունեություն

Սույն փաստաթղթի մշակման պահին Ծրագրի առնչվող "փոխկապակցված կառույցներ"¹⁰ չկան, բացառությամբ էլեկտրահաղորդման գծերից: Ըստ Պատվիրատուի, մոտեցման ճանապարհները, տեղում հաղորդակցությունը և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքները կազմում են Ծրագրի մաս և կմշակվեն մանրամասն նախագծերում (նշում. "Նախագծում և կառուցում" (կամ "ճարտարագիտություն, մատակարարում և շինարարություն") պայմանագրեր են նախատեսված Ծրագրի համար, ինչը նշանակում է, որ մեկ կապալառու ընկերություն պատասխանատու կլինի ինչպես մանրամասն նախագծման, այնպես էլ շինարարության համար): Ներկայումս ո՛չ էլեկտրահամակարգին միանալու կետը, ո՛չ էլ առաջարկվող էլեկտրահաղորդման գծի երթուղին որոշված չեն:

Եթե ապագայում հայտնվեն փոխկապակցված կառույցներ, դրանց հետևանքով ի հայտ եկած ցանկացած հողի հարկադիր օտարում կամ հողօգտագործման սահմանափակում պետք է համապատասխանի այս ՏԾ-ում նշված սկզբունքներին:

2.3 Ֆիզիկական և տնտեսական տեղահանումը նվազեցնող նախագծային լուծումներ

Պատվիրատուն և նախագծային թիմերը հայտնել են, որ տեղանքի ընտրությունը մեկնարկել է ավելի քան 20-30 տարի առաջ և բնակելի տարածքների վրա ազդեցությունից (այսինքն՝ ֆիզիկական տեղահանման) խուսափումը ջրամբարների և դրանց օժանդակ ենթակառուցվածքների տեղակայման համար կիրառված չափանիշներից մեկն է եղել ուսումնասիրման տարիների ընթացքում: Սա հանգեցրել է հետևյալին.

- **Արթիկի ջրամբարը** նախատեսված է կառուցվել 1992 թվականի գործող սահմաններում (չնայած պատվարը նախատեսված է տեղադրել հին կառույցներից 400 մ հեռավորության վրա), ընդ որում՝ հողի օտարումը պահանջվում է միայն ջրանցքների համար: Նախագծողները ձգտել են սնուցող և ոռոգման ջրանցքները անցկացնել պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներով, իսկ երբ դա անհնար է եղել, ուղեգծերը համապատասխանեցնել հողամասերի սահմանագծերին կամ եզրերին՝ խուսափելու համար «տեր չունեցող» հողերից և մշակաբույսերի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով:
- **Աստղածորի, Քասախի, Լիճքի և Ելփինի ջրամբարների** պարագայում համապատասխան ազգային ՇՄԱԳ հաշվետվություններում բացատրվում է, որ ջրամբարների տեղանքների ընտրությունը մեկնարկել է 2000-ականների կեսերին, և այդ ժամանակից սկսած սահմանափակ տարբերակներ են քննարկվել: Նախագծողների կողմից առաջարկված վերջնական տարբերակը ընտրվել է երկրաբանական, սեյսմիկ, տեղագրական (ներառյալ հողի, տեղանքի, բարձրության և այլնի առանձնահատկությունները), տնտեսական և հիդրոլոգիական նկատառումների (ներառյալ ջրի օպտիմալ կուտակման հզորության հասնելու լուծումները) հիման վրա: Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման հաշվետվությունների մշակման շրջանակում իրականացվում է յուրաքանչյուր ջրամբարի տեղանքի այլընտրանքների մանրամասն վերլուծություն՝ բնապահպանական, սոցիալական, տեխնիկական և տնտեսական նպատակահարմարության նկատառումներով: Արդյունքները կներառվեն առանձին համապատասխան ՏՊ-ներում:

¹⁰ Համաձայն ՎՁԵԲ-ի ԲՍԶ-ի (2019), փոխկապակցված կառույցները այն կառույցներն են կամ գործունեությունները, որոնք չեն ֆինանսավորվում ՎՁԵԲ-ի կողմից որպես ծրագրի մաս, բայց որոնք, ՎՁԵԲ-ի կարծիքով, կարևոր են ծրագրի հաջողությունը որոշելու կամ համաձայնեցված ծրագրի արդյունքներ ստանալու համար: Սրանք նոր կառույցներ կամ գործունեություններ են՝ (i) առանց որոնց ծրագիրը կենսունակ չէր լինի, և (ii) չէին կառուցվի, ընդլայնվի, իրականացվի կամ նախատեսված չէր լինի կառուցել կամ իրականացնել, եթե ծրագիրը չլիներ:

2.4 Հողերի օտարման գործընթացի ընթացիկ կարգավիճակը

2024 թվականի ամռանը Պատվիրատուն նախաձեռնեց Արթիկի, Աստղածորի, Բասախի, Լիճքի և Ելփինի ջրամբարների հողերի օտարման պլանավորման գործընթացը: Արդյունքում, Ելփինի, Բասախի, Լիճքի և Աստղածորի ջրամբարների համար մշակվեցին ՏՊ-երի նախագծեր, իսկ Արթիկի ջրամբարի համար մինչև 2024 թվականի ավարտը մշակվեց ՏՇ-ը: Այս փաստաթղթերում ներառված են նախնական գույքագրման և ծախսերի գնահատական արդյունքները, որոնք թույլ կտան Ջրային կոմիտեին պատրաստել գերակա շահ ճանաչելու մասին կառավարության որոշում, որը կներառի բոլոր հինգ ջրամբարները և կապահովի առանձին ՏՊ-ների իրականացման մոտավոր բյուջեն:

ՀՀ կառավարության կողմից գերակա շահ ճանաչելու մասին որոշումը ընդունելուց հետո Պատվիրատուն կպատվիրի մարդահամարներ, սոցիալ-տնտեսական ուսումնասիրություններ և գույքագրումների թարմացում/ստուգում: Այս ուսումնասիրությունների հիման վրա, բոլոր առաջարկվող ջրամբարների համար կմշակվեն համապարփակ ՏՊ-ներ¹¹:

Հողերի օտարման գործընթացը կմեկնարկի ՏՊ-երը ամփոփելուց և հրապարակելուց հետո:

Ջրամբարի տարածքում աշխատանքներ չեն մեկնարկի մինչև հողօգտագործողներին/սեփականատերերին փոխհատուցումների վճարումը:

2.5 Ծրագրի ժամանակագրույցի վերաբերյալ տեղեկատվություն

Ջրամբարների նախագծման և կառուցման պայմանագրերի շնորհման մրցույթային գործընթացը նախատեսվում է սկսել 2025 թվականի վերջին:

Շինարարական աշխատանքները, ենթադրաբար, կսկսվեն 2026 թվականի կեսերին՝ պայմանով, որ մրցույթները և մանրամասն նախագծման ու հողի օտարման գործընթացները հաջողությամբ կիրականացվեն (որտեղ նպատակահարմար է):

Շինարարության ժամկետը Բասախի և Լիճքի ջրամբարների համար կկազմի մոտ 3-5 տարի, իսկ մյուս ջրամբարների համար՝ 3-4 տարի:

Ջրամբարները կշահագործվեն 50 տարի և, հնարավոր է, նույնիսկ ավելի:

3 ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ

3.1 ՀՀ հողերի օտարման և տարաբնակեցման իրավական շրջանակը

3.1.1 ՀՀ հողի նկատմամբ սեփականության իրավունքը և հողի դասակարգումը

Հայաստանում հողի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է պատկանել պետությանը, համայնքներին կամ իրավաբանական և ֆիզիկական անձանց¹²: Սեփականության իրավունքի ենթաձևերն են՝ համատեղ և բաժնային սեփականությունը: Հողօգտագործման իրավունքները ներառում են սերվիտուտի իրավունքը, վարձակալության և ենթավարձակալության իրավունքը և այլն: Իր նպատակային նշանակությամբ, ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ինը կատեգորիայի¹³:

¹¹ ՏՊ-երի տեխնիկական առաջադրանքը մշակվել է ԻՊ5-ի պահանջների համաձայն: Պատվիրատուի հետ համաձայնեցված է, որ վերջնական ՏՊ-երը պետք է մշակվեն սույն ՏՇ-ին համապատասխան

¹² ՀՀ հողային օրենսգիրք No ՀՕ-185 առ 02.05.2001թ. <https://www.arlis.am/hy/acts/206785>

¹³ ՀՀ հողային օրենսգրքի գլուխ 2

1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հողեր, որոնք նախատեսված են գյուղատնտեսական գործունեության համար և բաժանվում են վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի և այլ հողատեսքերի),
2. Բնակավայրերի հողեր,
3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության,
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր,
5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր,
6. Հատուկ նշանակության հողեր,
7. Անտառային հողեր,
8. Ջրային հողեր,
9. Պահուստային հողեր:

3.1.2 Հիմնական օրենքները և կարգավորումները

Համաձայն ՀՀ Սահմանադրության¹⁴ (այսուհետ՝ Սահմանադրություն, ընդունվել է 1995թ.-ին, վերջին փոփոխությունը 2020թ.-ին) 60-րդ հոդվածի կետ 5-ի. հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ: Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Հողի օտարման, փոխհատուցման և վերաբերելի այլ ընթացակարգերը կարգավորվում են ՀՀ հետևյալ իրավական ակտերով՝

- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք No ՀՕ-239 առ 05.05.1998թ.¹⁵ (վերջին փոփոխությունը 2025թ.-ին),
- ՀՀ հողային օրենսգիրք No ՀՕ-185 առ 02.05.2001թ.¹⁶ (վերջին փոփոխությունը 2025թ.-ին),
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք No ՀՕ-110-Ն առ 09.02.2018թ.¹⁷ (վերջին փոփոխությունը 2025թ.-ին),
- ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք No ՀՕ-139-Ն առ 05.12.2013թ.¹⁸ (վերջին փոփոխությունը 2025թ.-ին),
- Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին ՀՀ օրենք No ՀՕ-185-Ն առ 27.11.2006թ.¹⁹ (այսուհետ՝ Սեփականության օտարման մասին օրենք) (վերջին փոփոխությունը 2021թ.-ին),
- Գնահատման գործունեության մասին ՀՀ օրենք No ՀՕ-189-Ն առ 04.10.2005թ.²⁰ (վերջին փոփոխությունը 2024թ.-ին),

¹⁴ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=143723>

¹⁵ <https://www.arlis.am/hy/acts/208933>

¹⁶ <https://www.arlis.am/hy/acts/206785>

¹⁷ <https://www.arlis.am/hy/acts/206786>

¹⁸ <https://www.arlis.am/hy/acts/209493>

¹⁹ <https://www.arlis.am/hy/acts/153844>

²⁰ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=198690>



- Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենք No ՀՕ-295 առ 14.04.1999թ.²¹ (վերջին փոփոխությունը 2025թ.-ին),
- Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման ստանդարտը հաստատելու մասին ՀՀ կառավարության No 955-Ն որոշում առ 08.06.2006թ.²² (վերջին փոփոխությունը 2012թ.-ին):

ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ, 104-րդ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածներն ամրագրում են, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով հողամասի սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ: Դա ամրագրվել է Սեփականության օտարման մասին ՀՀ օրենքում՝ Սահմանադրության և վերոնշյալ իրավական ակտերի դրույթներին համահունչ: Սեփականության օտարման մասին ՀՀ օրենքը երկրում հողերի օտարման և փոխհատուցման ընթացակարգերը կարգավորող հիմնական իրավական ակտն է: Այն սահմանում է հանրության և պետական շահերի համար սեփականության օտարման հիմքը և կարգը, օտարված սեփականության համար փոխհատուցում տրամադրելու կարգը, հանրության և պետական շահերի համար սեփականության օտարման նպատակները, սկզբունքները, ինչպես նաև հանրության և պետական շահերը ճանաչելու կարգը:

Սեփականության օտարման մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման սահմանադրական պայմանները. ա) օտարումը պետք է իրականացվի օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով, բ) օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի նախնական և համարժեք փոխհատուցում:

Սեփականության օտարման մասին ՀՀ օրենքի 4.1 հոդվածը թվարկում է հանրության նպատակներով սեփականության օտարման համար գերակա հանրային շահի բացառիկ դեպքերի որոշման սկզբունքները, իսկ 4.2 հոդվածը սահմանում է բացառիկ գերակա հանրային շահի հնարավոր նպատակները:

Սեփականության օտարման մասին ՀՀ օրենքը սահմանում է այն հիմնարար սկզբունքը, համաձայն որի. ա) հանրության շահը պետք է գերակա լինի օտարվող սեփականության սեփականատիրոջ շահերից, բ) հանրության գերակա շահի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց տվյալ սեփականության օտարման, գ) հանրության գերակա շահից ելնելով՝ սեփականության օտարումը չպետք է չհիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը, դ) հանրության շահը գերակա է ճանաչվում կառավարության որոշմամբ և ե) հանրության գերակա շահի առկայության փաստը կարող է վիճարկվել դատական կարգով:

Գերակա հանրային շահը կարող է հետապնդել հետևյալ նպատակները՝

- Պետության պաշտպանության, պետության ու հասարակության անվտանգության ապահովումը,
- ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովումը,
- Միջազգային և հանրապետական նշանակության պատմության և մշակութային արժեքների կամ հուշարձանների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կամ պահպանության ապահովումը,
- Շրջակա միջավայրի պահպանության ապահովումը,

²¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=204832>

²² <https://www.arlis.am/hy/acts/74961>

- Կրթության, առողջության, սպորտի, ինչպես նաև գիտության կամ մշակույթի զարգացման ապահովումը,
- Էներգետիկայի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման, քաղաքաշինական, ընդերքի հետախուզման, ընդերքօգտագործման, տրանսպորտի, հաղորդակցության ուղիների կամ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը,
- Անձանց կյանքի, առողջության կամ սեփականության պաշտպանությունը,
- Արտակարգ իրավիճակների կանխումը, արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցումը, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացումը:

Սեփականության օտարման մասին ՀՀ օրենքը նաև պարունակում է սեփականության ձեռքբերման, փոխհատուցման և օտարման վերաբերյալ որոշումների կայացման կարգը: Մասնավորապես, դրա 5-րդ հոդվածի համաձայն, եթե օտարվում է հողամասը, ապա հողամասի հետ միասին օտարման են ենթակա նաև հողամասի վրա գտնվող անշարժ գույքը (շենքեր, շինություններ, այլ ամրացված գույք և այլն), ինչպես նաև հողամասի վրա գտնվող այլ բարելավումները: Եթե օտարվում է շենք կամ շինություն, ապա շենքի կամ շինության հետ միասին օտարման են ենթակա նաև այդ շենքի կամ շինության սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը:

Սեփականության օտարման մասին ՀՀ օրենքը սահմանում է կարգավորումներ ֆիզիկական և իրավաբանական անձանց, համայնքային (այսուհետ՝ Սեփականատերեր) սեփականության և բոլոր այլ տեսակի գույքերի (շարժական և անշարժ գույք, սեփականության իրավունքներ և այլն) համար, որոնք գտնվում կամ գրանցված են երկրում համաձայն ՀՀ օրենսդրության (այսուհետ՝ Ձեռք բերվող գույք), ինչպես նաև գույքի օտարման և փոխհատուցման հիմնական ընթացակարգերի համար: Մասնավորապես.

1. Հանրության գերակա շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն (գերակա շահ ճանաչելու մասին որոշում) ուժի մեջ մտնելուց հետո կառավարության սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմինը կազմում է օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը, որին իրավունք ունեն մասնակցելու ձեռքբերողը, սեփականատերը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները, եթե սեփականության նախնական ուսումնասիրության ժամանակ արձանագրություն չի կազմվել: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակը, այն կազմելուց հետո ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում, պատշաճ ձևով ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց, որոնք իրավունք ունեն արձանագրությունն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, այն բողոքարկել լիազոր մարմին կամ դատարան,
2. Օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից 15% (տասնհինգ տոկոս) ավելի գումարը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է Պնահատման գործունեության մասին ՀՀ օրենքով (No ՀՕ-189-Ն առ 04.10.2005թ.) սահմանված կարգով,
3. Սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն: Այս դեպքում, կողմերի համաձայնությամբ են միայն որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող փոխհատուցման գումարի չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու պարտավորությունները,

4. Եթե օտարման պայմանագիրը, այն ուղարկելուց հետո երեք ամսվա ընթացքում չի կնքվում Ծրագրի Ազդեցության Ենթարկված Կողմերի (ԾԱԵԿ) կողմից, ձեռքբերողը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում սեփականության օտարման դիմաց փոխհատուցման ենթակա գումարը հանձնել դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշիվ՝ այդ մասին պատշաճ ձևով տեղեկացնելով օտարվող սեփականության սեփականատիրոջը և օտարվող սեփականության նկատմամբ ձեռքբերողին հայտնի գույքային իրավունքներ ունեցողներին: Փոխհատուցման գումարի չափը պետք է հաշվարկված լինի այն դեպոզիտային հաշվին փոխանցելու պահից ոչ ուշ քան մեկ շաբաթ առաջ,
5. Եթե օտարման պայմանագիրը չի ստորագրվում ԾԱԵԿ-երին ներկայացնելու պահից երեք ամսվա ընթացքում, ձեռքբերողը պարտավոր է մեկամսյա ժամկետում դատարան դիմել գույքի ձեռքբերման պահանջով: Այս դեպքում դատարանում կարող է դիտարկվել միայն փոխհատուցման չափը:

Օրենքը սահմանում է սեփականատիրոջ իրավունքներն ու երաշխիքները հանրային շահերի համար գույքի ձեռքբերման գործընթացում կշռելով, որ գույքի սեփականատերը մինչև դրա ձեռքբերումը կամ դրա ձեռքբերումից բխող իրավունքների պետական գրանցումը իրավունք ունի տիրապետել, օգտագործել, տնօրինել և կատարել միայն այնպիսի բարելավումներ, որոնք ապահովում են գույքի օգտագործումը դրա նշանակությանը համապատասխան:

Օրենքը սահմանում է որոշակի սահմանափակումներ օտարվող գույքի նկատմամբ: Կառավարության սահմանած կարգով կազմված օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը կազմելու օրվանից հետո օտարվող սեփականության վրա գրանցվածից ավելի կատարված բարելավումները, ինչպես նաև օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում չի տրվում:

3.1.3 Ջրամբարների պաշտպանիչ գոտիների վերաբերյալ օրենսդրությունը

Հողային օրենսգրքի (Հողված 26.3) համաձայն, հատուկ սանիտարական պաշտպանություն պահանջող բնական և արհեստական ջրային օբյեկտների պահպանության համար օրենսդրությանը համապատասխան սահմանվում են սանիտարական պահպանության գոտիներ, որոնցում սահմանվում են հողօգտագործման հատուկ սահմանափակումներ, որոնք ամրագրվում են հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերում: Նման սահմանափակումները ներառում են շինարարությունը, հողային, հորատման, պայթեցման և այլ տեսակի աշխատանքները:

Ջրային օրենսգրքի (2002թ.)²³ Հողված 1-ը համաձայն, ջրային Էկոհամակարգերի համար սահմանվում են ջրապահպան գոտիներ: Ջրային օրենսգրքի պահանջները գործարկելու համար ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի No 64-Ն որոշմամբ²⁴ սահմանվել են ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, Էկոտոնի²⁵ և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները²⁶:

Ջրապահպան գոտիների տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

²³ <https://www.arlis.am/hy/acts/207835>

²⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=13388>

²⁵ Ջրային օրենսգրքի համաձայն, Էկոտոնը ջրային և ցամաքային Էկոհամակարգերի փոխկապակցված անցումային գոտի է, որը ներառում է ափամերձ և ջրամերձ տարածքները

²⁶ Ջրային օրենսգրքի համաձայն, անօտարելի գոտին ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների օգտագործման, վերականգնման և պահպանման որոշակի ռեժիմ ունեցող առանձնացված տարածք է, որը ենթակա չէ մասնավորեցման կամ առգրավման

- ա) տարածքներ, որտեղ ապահովվում են ջրային ռեսուրսների աղբոսման, աղտոտման, տղմակալման և հյուժման կանխարգելումը, ինչպես նաև ջրային ռեժիմի համար բարենպաստ պայմանները,
- բ) ջրապահպան գոտիների տարածքներն ընդգրկում են ջրային ռեսուրսների պահպանության համար նախատեսված բոլոր տարածքները,
- գ) ջրապահպան գոտիների տարածքները սահմանվում են մինչև 32 մ երկարությամբ շերտի տեսքով:

Էկոտոնի տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

- ա) ջրամերձ և ափամերձ առավել խոցելի տարածքներ, որոնք պահպանվում են մարդու գործունեության հետևանքով դրանց խախտումների նկատմամբ դրանց խոցելիության պատճառով,
- բ) Էկոտոնի տարածքներն ընդգրկում են գետերի, լճերի, լճակների, բնական ջրագոյացումների խոցելի ջրամերձ և ափամերձ հատվածները,
- գ) Էկոտոնի տարածքները սահմանվում են մինչև 150 մ շառավղով:

Անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

- ա) տարածքներ, որտեղ ապահովվում են ջրամատակարարման, ջրահեռացման, ինչպես նաև հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործումը, վերականգնումը և պահպանումը,
- բ) տարածքներն ընդգրկում են ջրամատակարարման, ջրահեռացման և հիդրոտեխնիկական կառուցվածքներին անմիջապես հարող տարածքները,
- գ) անօտարելի գոտիների տարածքները սահմանվում են մինչև 10 մ երկարությամբ շերտի տեսքով:

Հինգ ջրամբարների ՇՄԱԳ հաշվետվությունների վերաբերյալ Շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված փորձաքննության եզրակացությունները պահանջում են, որ Ջրային կոմիտեն որոշի և հաստատի ջրապահպան ռեժիմները՝ ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի No 64-Ն որոշման համաձայն:

3.1.4 Բացակա սեփականատերեր

Բացակա սեփականատերերը (օրինակ՝ հողի նկատմամբ օրինական իրավունքներ ունեցող անձինք, որոնք ապրում են այլուր) դեռևս իրավունք կունենան փոխհատուցում ստանալու: Հայաստանի օրենքները նախատեսում են մասնավոր սեփականություն ձեռք բերելու մեխանիզմ այն դեպքերում, երբ սեփականատերերը չեն կարող ներկա լինել կամ գտնվել: Անհասանելի բացակա հողատերերի հարցը լուծելու համար, կնախաձեռնվեն հետևյալ ընթացակարգերը՝

- Որտեղ հնարավոր է բացակա սեփականատերերի մասին կոնտակտային տվյալները և այլ հնարավոր տեղեկատվությունը կհավաքագրվեն համայնքային իշխանությունից, հարազատներից և/կամ ընկերներից,
- ԾԱԵԿ-երը կտեղեկացվեն/կիրառվեն իրենց հողի/գույքի օտարման և ձեռնարկված միջոցառումների, ինչպես նաև իրենց մասնակցության կարևորության մասին,
- Եթե Ազդեցության Ենթարկված Անձը (ԱԵԱ) դեռևս հայտարարում է, որ չի կարողանում ներկայանալ, նրան կառաջարկվի ուղարկել լիազորագիր իր ներկայացուցչի անունով, որը կգործի իր անունից պայմանագիրը ստորագրելիս,
- Պայմանագիրը չստորագրելու դեպքում ձեռքբերող մարմինը կսկսի բռնագրավման գործընթացը, փոխհատուցման գումարը պետք է որպես դեպոզիտ պահվի դատարանում: Սեփականատերը կարող է դատարանից պահանջել փոխհատուցման գումարը՝ ներկայացնելով համապատասխան իրավական փաստաթղթերը:

Նրանք կարող են նաև փոխհատուցման պահանջ ներկայացնել ակտիվների գույքագրումն ավարտելուց հետո՝ Ծրագրի բողոքարկման մեխանիզմի միջոցով (տես **Բաժին Error!** **Reference source not found.**-ը)։

3.2 ՎՉԵԲ-ի պահանջները

Սույն Ծրագիրը, ըստ ՎՉԵԲ-ը պահանջների, պետք է համապատասխանի ՎՉԵԲ-ի Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականությանը (2019) և սպեցիֆիկ հրագործման Պահանջներին (ԻՊ), ընդգրկելով հիմնական բնապահպանական և սոցիալական հարցերը: Տարաբնակեցման շրջանակը (ՏՇ) հաշվի է առնում ՎՉԵԲ-ի հետևյալ ԻՊ-երը՝

- ԻՊ1՝ Բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների գնահատումը և կառավարումը,
- ԻՊ5՝ Հողի օտարումը, հողօգտագործման սահմանափակումները և հարկադիր տարաբնակեցումը, և
- ԻՊ10՝ Տեղեկատվության հրապարակումը և շահագրգիռ կողմերի ներգրավումը:

ՎՉԵԲ ԻՊ1-ը պահանջում է գնահատել սոցիալական, այդ թվում՝ հողի ձեռքբերման հետ կապված, ռիսկերն ու ազդեցությունը, ինչպես նաև մշակել և իրականացնել համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

ՎՉԵԲ ԻՊ5-ի հիմնական պահանջները հետևյալն են՝

- խուսափել կամ, անխուսափելիության դեպքում, նվազագույնի հասցնել հարկադիր տարաբնակեցումը՝ ուսումնասիրելով ծրագրի այլընտրանքային նախագծերը,
- մեղմել հողի օտարումից կամ ազդակիր անձանց կողմից ակտիվների և հողերի օգտագործման և դրանց հասանելիության սահմանափակումներից բխող անբարենպաստ սոցիալական և տնտեսական ազդեցությունները՝ (i) ակտիվների կորստի համար փոխհատուցում տրամադրելով փոխարինման արժեքով, և (ii) ապահովելով, որ տարաբնակեցման գործողությունները իրականացվեն տեղեկատվության պատշաճ հրապարակմամբ, խորհրդակցություններով և ազդակիր անձանց տեղեկացված մասնակցությամբ,
- վերականգնել կամ, որտեղ հնարավոր է, բարելավել տեղահանված անձանց կենսապայմանները և կենսամակարդակը՝ մինչև տեղահանումը եղած մակարդակների, և
- բարելավել ֆիզիկապես տեղահանված անձանց կենսապայմանները՝ ապահովելով համապատասխան ապրուստի պայմաններ, ներառյալ տարաբնակեցման վայրերում բնակության անվտանգությունը:

ԻՊ5-ը կիրառվում է, երբ տարաբնակեցումը համարվում է *հարկադիր*, այսինքն՝ երբ ազդեցություն կրող անհատները կամ համայնքները իրավունք չունեն հրաժարվել հողի օտարումից, որը հանգեցնում է տեղահանման: ՎՉԵԲ-ը *հարկադիր տարաբնակեցումը* մեկնաբանում է որպես ինչպես ֆիզիկական տեղահանում (տեղափոխում կամ կացարանի կորուստ), այնպես էլ տնտեսական տեղահանում (ակտիվների կամ ակտիվներին հասանելիության կորուստ, որը հանգեցնում է եկամտի աղբյուրների կամ կենսապահովման միջոցների կորստի)՝ ծրագրին առնչվող հողերի օտարման կամ հողօգտագործման/բնական ռեսուրսներին հասանելիության սահմանափակման արդյունքում:

Հողերի օտարման/տարաբնակեցման համատեքստում շահագրգիռ կողմերի ներգրավմանը վերաբերող ԻՊ10-ի հիմնական պահանջները հետևյալն են՝

- ազդեցության ենթարկված անձանց հնարավորություն տալ մասնակցելու իրավասության պահանջներին, փոխհատուցման փաթեթների բանակցություններին, տարաբնակեցման օգնությանը, առաջարկվող տարաբնակեցման վայրերի պիտանիությանը և առաջարկվող ժամանակացույցին,

- շարունակել խորհրդակցությունները փոխհատուցման վճարման և տարաբնակեցման իրականացման, մոնիթորինգի և գնահատման ընթացքում ԻՊ5-ի նպատակներին համապատասխանող արդյունքների հասնելու համար,
- ապահովել ազդակիր համայնքների և այլ շահագրգիռ կողմերի բողոքներին արձագանքումը և դրանք պատշաճ կառավարումը:

3.3 Բացերի վերլուծություն

Այս բաժնում դիտարկվում է ազգային օրենսդրությունը, որը կարգավորում է հանրության շահերի համար հողերի ձեռք բերման (սեփականության օտարման) և կենսամիջոցների վերականգնման հետ կապված հարցերը՝ համեմատած ՎՁԵԲ-ի համապատասխան պահանջների հետ: Բացերի վերլուծությունը, ինչպես նաև այդ բացերը լրացնելու նպատակով առաջարկվող միջոցառումները ներկայացված են ստորև **Աղյուսակ 6**-ում:

Աղյուսակ 6. Տարաբնակեցման բացերի վերլուծություն՝ ՀՀ օրենսդրություն և ՎՉԵԲ-ի հողերի օտարման պահանջներ

| Խնդիր | ՀՀ օրենսդրական պահանջներ | ՎՉԵԲ պահանջներ | Բացերը լրացնելու համար առաջարկվող միջոցառումներ |
|---|--|---|--|
| <p>Տարաբնակեցումից խուսափում կամ դրա նվազեցում</p> <p>Հարկադիր տեղահանումից խուսափում</p> | <p>«Հանրության գերակա շահերը ապահովելու նպատակով սեփականության օտարման մասին» օրենքը չի նախատեսում հողերի ձեռք բերումից կամ հողի օգտագործման սահմանափակումներից խուսափելու կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով բոլոր իրագործելի այլընտրանքների ուսումնասիրության պահանջ: Սակայն ԵՆԲ պահանջները նախատեսում են այլընտրանքների, այդ թվում՝ տեղակայման տարբերակների դիտարկում ԵՆԲ ընթացակարգի շրջանակում՝ հողօգտագործման ազդեցություններից խուսափելու կամ դրանք նվազեցնելու նպատակով:</p> | <p>Պատվիրատուն պետք է դիտարկի իրագործելի այլընտրանքային նախագծային լուծումներ և տեղակայումներ՝ ֆիզիկական և/կամ տնտեսական տարիանումից խուսափելու կամ այն նվազեցնելու նպատակով:</p> | <p>Համապատասխանում է՝ լրացուցիչ միջոցառումներ չեն առաջարկվում:</p> |
| <p>Հարկադիր տարաբնակեցում</p> | <p>«Հանրության գերակա շահերը ապահովելու նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում չեն օգտագործվում «պարտադիր տարաբնակեցում» կամ «հարկադիր տեղահանում» տերմինները. կիրառվում է «օտարում» տերմինը, որը հիմնված է կառավարության գերակա հանրային շահ ճանաչելու լիազորության վրա:</p> <p>ՀՀ օրենսդրությունը պահանջում է, որ օտարման որոշումը անհատապես ներկայացվի ազդակիր սեփականատերերին, և օտարման նախնական պայմանագրերի նախագծերը տրամադրվեն ուսումնասիրության համար: Դրան հաջորդում են անհատական քննարկումներ ԱԵԱ-ների հետ, որոնք կարող են ավարտվել հաշտության</p> | <p>Պատվիրատուն չպետք է դիմի հարկադիր տարաբնակեցման ²⁷:</p> <p>Հանրության գերակա շահի ճանաչման, օտարման կամ նմանատիպ լիազորությունների իրականացումը պատվիրատուի կողմից չի համարվում հարկադիր տարաբնակեցում, եթե այն իրականացվում է ազգային օրենսդրությանը և ՎՉԵԲ ԻՊ 5-ի դրույթներին համապատասխան, և եթե գործընթացը ապահովվում է պատշաճ դատավարական սկզբունքներին համապատասխանություն (օրինակ՝</p> | <p>Համապատասխանում է՝ լրացուցիչ միջոցառումներ չեն առաջարկվում:</p> |

²⁷ Ըստ ՎՉԵԲ-ի ԻՊ 5-ի՝ հարկադիր տարաբնակեցումը դրսևորվում է գործողություններով և/կամ անգործությամբ, որը ներառում է անհատների, խմբերի և համայնքների պարտադրված, մշտական կամ ժամանակավոր հարկադիր տեղահանում իրենց տներից, հողերից և/կամ ընդհանուր սեփականության ռեսուրսներից, որոնք իրենք զբաղեցնում են կամ կախված են դրանցից, ինչն էլ վերացնում կամ սահմանափակում է անհատի, խմբի կամ համայնքի հնարավորությունը բնակվելու կամ աշխատելու որոշակի բնակավայրում, կացարանում կամ տարածքում՝ առանց համապատասխան իրավական կամ այլ պաշտպանության ձևերի տրամադրման և դրանց հասանելիության:

| Խնդիր | ՀՀ օրենսդրական պահանջներ | ՎՇԵԲ պահանջներ | Բացերը լրացնելու համար առաջարկվող միջոցառումներ |
|--|---|--|---|
| | <p>պայմանագրով:</p> <p>Հարկադիր օտարումը օգտագործվում է որպես վերջին միջոց՝ այն դեպքում, երբ ԱԵԱ-ները տարբեր պատճառներով (օրինակ՝ անհամաձայնություն, օրինականացման չլուծված հարցեր և այլն) երեք ամսվա ընթացքում՝ պայմանագրերի նախագծերի մասին ծանուցում ստանալու պահից, չեն ստորագրում պայմանագրերը: Այդ դեպքում օտարման գործընթացը իրականացվում է դատական կարգով:</p> | <p>Նախնական ծանուցման տրամադրում, բողոքներ ներկայացնելու և բողոքարկման արդյունավետ հնարավորությունների ապահովում, ինչպես նաև ավելորդ, անհամաչափ կամ չափազանցված ուժի կիրառման բացառում):</p> | |
| <p>Օտարում փոխադարձ համաձայնությամբ</p> | <p>Հողի սեփականության իրավունքը կամ հողի օգտագործման իրավունքը կարող է ձեռք բերվել կամ սահմանափակվել գույքային իրավունքներ ունեցող անձանց հետ փոխադարձ համաձայնությամբ օտարման միջոցով:</p> <p>Փոխադարձ համաձայնությամբ օտարումը նախատեսված է «Հանրության գերակա շահերը ապահովելու նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով, և այն կարող է իրականացվել որպես վերջին փուլ՝ փոխհատուցման պայմանագրի նախագծի տրամադրումից հետո: Ազդեցության ենթարկված գույքի սեփականատերերի հետ քննարկվում է գույքի համար փոխհատուցման առաջարկը, և նրանց նախապես տրամադրվում է փոխհատուցման պայմանագիրը, որը ներառում է առաջարկվող փոխհատուցման գումարը: Օտարման լիազորված մարմինները պարտավոր են նպաստել բանակցությունների անցկացմանը և խրախուսել փոխհատուցման պայմանագրի կնքումը: Հողի փոխհատուցման շուրջ բանակցությունները հիմնվում են գույքի գնահատման արդյունքների վրա:</p> | <p>Պատվիրատուն պետք է ձգտի գույքային իրավունքները ձեռք բերել փոխադարձ համաձայնությամբ օտարման միջոցով նույնիսկ այն դեպքում, երբ ունի հողի նկատմամբ իրավունք ձեռք բերելու օրինական իրավասություն՝ առանց վաճառողի համաձայնության:</p> <p>Փոխադարձ համաձայնությամբ օտարումը օգնում է խուսափել սեփականության հարկադիր օտարումից և դրան ուղեկցող վարչական կամ դատական ձգձգումներից, ինչպես նաև նվազեցնում է հարկադիր օտարմամբ պայմանավորված ազդեցությունները ազդակիր անձանց վրա: Փոխադարձ համաձայնությամբ օտարումը սովորաբար կարող է իրականացվել արդար և համարժեք փոխհատուցում տրամադրելով ազդակիր անձանց կամ համայնքներին:</p> | <p>Համապատասխանում է՝ լրացուցիչ միջոցառումներ չեն առաջարկվում:</p> |
| <p>խոցելի խմբերի դիտարկում</p> | <p>Ազգային օրենսդրությունը չի նախատեսում խոցելի խմբերի հատուկ դիտարկում կամ նրանց համար հատուկ աջակցության տրամադրում հողերի</p> | <p>Պատվիրատուն պետք է բացահայտի, գնահատի և անդրադառնա խոցելի խմբերի վրա ազդեցություններին,</p> | <p>Անհամապատասխանություն՝ ջրամբարի ՏՊ-ներ մշակելիս՝</p> <ul style="list-style-type: none"> • որոշել նախագծի տարածքին |

| Խնդիր | ՀՀ օրենսդրական պահանջներ | ՎՁԵԲ պահանջներ | Բացերը լրացնելու համար առաջարկվող միջոցառումներ |
|---|--|---|---|
| | <p>օտարման գործընթացի ընթացքում:</p> | <p>մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> Սոցիալոնտեսական Ուսումնասիրության (ՍՏՈՒ) ընթացքում իրականացնի վերլուծություն՝ նախագծի տարածքում համատեքստին համապատասխան խոցելիության գործոնները որոշելու նպատակով, սահմանի խոցելի խմբերը խոցելիության այս վերլուծության արդյունքների հիման վրա, իրականացնի հատուկ խորհրդակցություններ խոցելի խմբերի հետ, և նախատեսի աջակցության միջոցառումներ, որոնք համապատասխանեցված կլինեն խոցելի խմբերի տարբեր կարիքներին: | <p>բնորոշ խոցելիության գործոնները և այդ գործոնների հիման վրա նույնականացնել այն տուժած խմբերն ու անձանց, որոնք կարող են համարվել խոցելի Ծրագրի գործողությունների համատեքստում,</p> <ul style="list-style-type: none"> իրականացնել հատուկ խորհրդակցություններ այս խմբերի / անձանց հետ, մշակել հատուկ գործողություններ խոցելի տուժած խմբերին աջակցելու համար և ներառել դրանք Տարաբնակեցման Պլանների (ՏՊ) մեջ: |
| <p>Գենդերային առանձնահատկությունների դիտարկում</p> | <p>Հայաստանը ընդունել է մի շարք օրենսդրական ակտեր, որոնք կարգավորում են տնտեսական և գույքային հարաբերությունները, անշարժ գույքին, ինչպես նաև սեփականության իրավունքին վերաբերող հարցերը տղամարդկանց և կանանց հավասարության սկզբունքի հիման վրա (օրինակ՝ ՀՀ Սահմանադրությունը, 2013 թվականի մայիսի 20-ի № ՅՕ-57 «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը և այլն) :</p> <p>Ազգային օրենսդրությունը չի պահանջում գենդերային հարցերի հատուկ դիտարկում ՇՄԱԳ ընթացակարգի կամ հողերի օտարման գործընթացների ընթացքում:</p> | <p>Գենդերային չափորոշիչները պետք է դիտարկվեն ելակետային տվյալների հավաքագրման, ազդեցության գնահատման, մեղմացման և մշտադիտարկման գործընթացների ամբողջ ընթացքում:</p> <p>Ծրագրի նախաձեռնողը պետք է ապահովի կանանց և տղամարդկանց իմաստային մասնակցությունը հողերի օտարման և տարաբնակեցման ցանկացած խորհրդատվության ընթացքում:</p> | <p>Անհամապատասխանություն՝ ջրամբարի տարաբնակեցման պլաններ (ՏՊ) մշակելիս՝</p> <ul style="list-style-type: none"> օգտագործել սեռերով առանձնացված տվյալների հիման վրա իրականացված հատուկ ՍՏՈՒ արդյունքները, դիտարկել հողերի օտարմանը վերաբերող ազդեցությունների գենդերային չափորոշիչները, ապահովել, որ փոխհատուցման իրավունքների ճանաչումը և տրամադրումը հաշվի առնեն գենդերային ասպեկտները: |

| Խնդիր | ՀՀ օրենսդրական պահանջներ | ՎՇԵԲ պահանջներ | Բացերը լրացնելու համար առաջարկվող միջոցառումներ |
|--|---|--|--|
| <p>Սոցիալոնտեսական ուսումնասիրություններ, մարդահամար, ազդակիր գույքի գույքագրում և վերջնաժամկետ</p> | <p>Հայաստանի օրենսդրությունը պահանջում է մշակել օտարման փաստաթղթեր (Հանրության գերակա շահի մասին որոշումներ), որոնք պետք է ներառեն հողամասերի (գույքի) ցուցակը, որոնց նկատմամբ ճանաչվում է հանրության շահի գերակայությունը, օտարվող գույքի կադաստրային կողերի տվյալները և գույքային իրավունքների սեփականատերերի անունները, որպեսզի նրանք կարողանան նույնականացվել և փոխհատուցվել: Այդպիսի ուսումնասիրությունները չեն ընդգրկում չգրանցված օգտագործողներին:</p> <p>Ազգային օրենսդրությունը չի պահանջում USՈՒ անցկացում որպես հողերի օտարման գործընթացի մաս:</p> <p>Գույքի նկարագրության արձանագրության կազմման օրվանից հետո լրացուցիչ բարելավումների համար (բացառությամբ այն բարելավումների, որոնք ապահովում են գույքի նպատակային օգտագործումը), ինչպես նաև գույքի վրա երրորդ անձանց կողմից տրված կամ ձեռք բերված որևէ ծանրաբեռնվածության կամ իրավունքների համար փոխհատուցում չի նախատեսվում, եթե դրանք կիրառվել են նշված օրվանից հետո:</p> | <p>Պատվիրատուն պետք է իրականացնի USՈՒ՝ ԱԵԱ-երի ելակետային վիճակի նկարագրության համար: Այդ ուսումնասիրությունները կիրականացվեն քանակական և որակական մեթոդների համադրությամբ:</p> <p>Պատվիրատուն պետք է կազմակերպի ազդակիր անձանց մարդահամար և ազդակիր գույքի, այդ թվում՝ հողի, շինությունների, բերքի, հասարակական հարմարությունների և բնական ռեսուրսների գույքագրում:</p> <p>Պատվիրատուն պետք է սահմանի իրավունքների վերջնաժամկետ (այսինքն՝ այն օրը, որից հետո առաջացած գույքերը փոխհատուցման ենթակա չեն) : Այդ ժամկետը որոշվում է օրենքով կամ մարդահամարի կամ գույքագրման ավարտի ամսաթվով (ավելի ուշ ժամկետը):</p> | <p>Մասնակի համապատասխանություն՝ ջրամբարի ՏՊ-ներ մշակելիս՝</p> <ul style="list-style-type: none"> գույքի նկարագրության արձանագրությունների բոլոր կողմերի կողմից ստորագրման օրը համարվում է վերջնաժամկետ և պետք է արձանագրվի ՏՊ-ներում՝ հրապարակման համար, «Վերջնաժամկետ» սահմանումը պետք է ներկայացվի մարդահամարի/ USՈՒ-ի խորհրդատվություններից առաջ կամ դրանց շրջանակում (հասանելի լինի նաև չգրանցված օգտագործողների համար), հիմնվելով ՎՇԵԲ-ի պահանջների վրա՝ մշակել USՈՒ և մարդահամարի մեթոդաբանություններ, կազմակերպել և իրականացնել ջրամբարի համար հատուկ USՈՒ և մարդահամարներ՝ անհատական ՏՊ-ների մշակման նպատակով: |
| <p>Իրավասության դասակարգում (կատեգորիաները)</p> | <p>Օրենսդրությունը վերաբերվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքի (այսուհետ՝ «Սեփականատերեր») սեփականությանը և ՀՀ օրենսդրությամբ և կանոնակարգերով Հայաստանի տարածքում գտնվող, գրանցված կամ հաշվառված բոլոր այլ գույքերին (շարժական և անշարժ գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) (այսուհետ՝ «օտարման ենթակա գույք»):</p> | <p>Սեփականության վկայականի բացակայությունը չպետք է խոչընդոտի փոխհատուցմանը: Իրավունքի վկայագիր չունեցող հողօգտագործողները նույնպես պետք է ստանան փոխհատուցում՝ հողից բացի կորցրած այլ գույքի համար (օրինակ՝ բերք, տնկված ծառեր և բույսեր, կառույցներ և հողի վրա կատարված այլ բարելավումներ, եկամտաբեր աղբյուրների կորուստ և այլ կենսապահովման միջոցներ):</p> <p>Տարաբնակեցման ենթակա անձինք կարող են դասակարգվել հետևյալ</p> | <p>Մասնակի համապատասխանություն: ՏՇ-ն նախատեսում է լրացուցիչ միջոցառումներ (ինչպես նշված է իրավունքների սխեմայում)՝ չգրանցված հողօգտագործողների հետ կապված բացերը լրացնելու և ՎՇԵԲ պահանջներին համապատասխանելու համար:</p> <p>Մասնավորապես, յուրաքանչյուր ջրամբարի ՏՊ-ում կապահովվի, որ՝</p> <ul style="list-style-type: none"> օտարվող հողամասերի նկատմամբ գրանցված իրավունք չունեցող ազդակիր անձինք ներառված լինեն ՏՊ-ում, |

| Խնդիր | ՀՀ օրենսդրական պահանջներ | ՎՁԵԲ պահանջներ | Բացերը լրացնելու համար առաջարկվող միջոցառումներ |
|---|--|---|---|
| | | <p>խմբերի՝</p> <p>(i) անձինք, որոնք ունեն հողի նկատմամբ օրենքով սահմանված կարգով գրանցված իրավունքներ,</p> <p>(ii) անձինք, որոնք մարդահամարի պահին չունեն հողի նկատմամբ գրանցված իրավունքներ, սակայն ունեն հողի նկատմամբ պահանջ, որը ճանաչվում է կամ կարող է ճանաչվել ազգային օրենսդրության համաձայն,</p> <p>(iii) անձինք, որոնք չունեն հողի նկատմամբ գրանցված իրավունք կամ ճանաչելի պահանջ (հայտնի են նաև որպես չգրանցված օգտագործողներ):</p> <p>Հարկադիր տարաբնակեցման պահանջները տարածվում են բոլոր երեք խմբերի վրա:</p> | <ul style="list-style-type: none"> այդ անձինք պետք է նույնականացվեն, նրանց հողերի օտարմամբ պայմանավորված կորուստները գնահատվեն, և մշակվեն ու իրականացվեն համապատասխան փոխհատուցման միջոցառումներ / լուծումներ: |
| <p>Փոխհատուցում և ազդակիր անձանց օգուտները</p> | <p>Փոխհատուցում տրամադրվում է միայն պետական գրանցում ունեցող գույքի՝ շենքերի և կառույցների համար:</p> <p>Անօրինական շինությունների և կառույցների համար փոխհատուցում չի տրամադրվում: Բերքի կորուստների համար առանձին փոխհատուցում չի հաշվարկվում:</p> <p>Գույքի սեփականատերը իրավունք ունի ստանալու համարժեք փոխհատուցում օտարվող գույքի համար՝ գումարած դրա շուկայական արժեքի 15 տոկոսը: Շուկայական արժեքը գույքի առավել հավանական շուկայական գինն է, որը կարող է որոշվել անկախ որակավորված գնահատողի կողմից:</p> <p>Եթե օտարվող գույքի համար բաց կամ մրցակցային շուկա չկա, ապա շուկայական արժեքը որոշվում է այն մեթոդով, որը դատարանի կողմից համարվում է արդար:</p> | <p>Պատվիրատուն պետք է բոլոր տարաբնակեցման ենթակա անձանց և համայնքներին առաջարկի գույքի կորուստների համար փոխհատուցում՝ դրա լիարժեք փոխարինման արժեքով, ինչպես նաև այլ աջակցություն՝ տարաբնակեցումից առաջ ունեցած կենսամակարդակի և/կամ կենսապահովման միջոցների վերականգնման, և հնարավորության դեպքում՝ բարելավման նպատակով:</p> <p>Հողի դիմաց հող տրամադրումը պետք է նախընտրելի լինի հողի վրա հիմնված տնտեսությունների դեպքում:</p> <p>Դրամական փոխհատուցումը կարող է համարվել ընդունելի, եթե հողի դիմաց հող տրամադրելը հնարավոր չէ և եթե հողի կորուստը չի խաթարում ԱԵԱ-ների կենսապահովման միջոցները:</p> <p>Պատվիրատուն պետք է փոխհատուցի տնտեսական տարաբնակեցման</p> | <p>Մասնակի համապատասխանություն: ՏՇ-ն նախատեսում է լրացուցիչ միջոցառումներ չգրանցված հողօգտագործողների հետ կապված բացերը լրացնելու և ՎՁԵԲ-ի պահանջներին համապատասխանելու համար: Մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> ՏՇ-ում նախատեսված են ՎՁԵԲ ԻՊ5-ի պահանջներին համահունչ համապատասխան փոխհատուցման միջոցառումներ, որոնք ավելի մանրամասն կնկարագրվեն ջրամբարի հատուկ ՏՊ-ներում, պետք է հաշվի առնվեն և խորհրդակցվեն ազդակիր անձանց հետ այլընտրանքային փոխհատուցման և հասանելիության տարբերակները: <p>ՏՊ-ները պետք է նախատեսեն, որ՝</p> |

| Խնդիր | ՀՀ օրենսդրական պահանջներ | ՎՁԵԲ պահանջներ | Բացերը լրացնելու համար առաջարկվող միջոցառումներ |
|------------------------------|---|---|---|
| | | <p>Ենթակա անձանց գույքի կամ գույքին հասանելիության կորուստների համար (կամ ապահովի այլընտրանքային հասանելիություն)՝ տարաբնակեցումից առաջ:</p> <p>Բերքի կորուստների փոխհատուցում պետք է տրամադրվի հողի սեփականատերերին, համատեղ մշակողներին / վարձակալներին, ինչպես նաև չգրանցված օգտագործողներին՝ անկախ նրանց իրավական կարգավիճակից:</p> | <ul style="list-style-type: none"> • հողը փոխհատուցվում է լիարժեք փոխարինման արժեքով, որը հավասար է հաշվարկված շուկայական արժեքին գումարած 15%-ը, • շենքերն ու կառույցները (բացառությամբ անօրինական կառույցների) փոխհատուցվում են լիարժեք փոխարինման արժեքով + 15%՝ առանց մաշվածության, գործարքների ծախսերի և ապամոնտաժված կյուբերի դիմաց հաշվարկված նվազեցումների, • դրամական փոխհատուցումն առաջարկվում է լիարժեք փոխարինման արժեքով (անշարժ գույքի և բերքի համար), ինչպես սահմանված է ՏՇ-ում, • անօրինական կառույցների փոխհատուցումն իրականացվում է ՏՇ-ի պահանջների համաձայն, • Ծրագրի համար անհրաժեշտ գույքի փոխանցումը պետք է համաձայնեցվի և փոխհատուցվի նախքան կառուցման աշխատանքների սկսվելը և գույքի հանձնումը, • բերքի կորուստների փոխհատուցումն պետք է տրամադրվի հողօգտագործողներին՝ անկախ հողի իրավական կարգավիճակից: |
| Հանրային քննարկումներ | ՀՀ կառավարության որոշումը՝ սեփականության նկատմամբ բացառիկ գերակա հանրության շահ ճանաչելու մասին, օտարման ենթակա գույքի նկարագրության արձանագրության պատճենը և օտարման ենթակա գույքի նախնական պայմանագրի նախագիծը ուղարկվում են գույքի | Պատվիրատուն պետք է իրականացնի իմաստայից և շարունակական խորհրդակցություններ ազդակիր անձանց և համայնքների հետ տարաբնակեցման պլանավորման և իրականացման ողջ ընթացքում՝ | <p>Մասնակի համապատասխանություն: Այս ՏՇ-ն նախատեսում է հետևյալ լրացուցիչ միջոցառումները՝</p> <ul style="list-style-type: none"> • ջրամբարի հատուկ ՏՊ-ների պատրաստման և իրականացման ընթացքում իրականացնել ԱԵԿ-ների |

| Խնդիր | ՀՀ օրենսդրական պահանջներ | ՎՇԵԲ պահանջներ | Բացերը լրացնելու համար առաջարկվող միջոցառումներ |
|---|--|--|--|
| | <p>սեփականատիրոջը և գույքային իրավունքներ ունեցող անձանց:</p> <p>Ձեռք բերողը պարտավոր է տեղեկացնել փոխհատուցման գումարը դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին փոխանցելու մասին:</p> <p>Եթե ձեռք բերողը իրականացնում է օտարման ենթակա գույքի նախնական հետազոտություն, ապա համապատասխան տեղեկատվությունը ընթացակարգի բնույթի, էության և իրավական հետևանքների վերաբերյալ պետք է տրամադրվի գույքի սեփականատիրոջը, տիրապետողին և օգտագործողին՝ նախքան դրանց սկսվելը:</p> | <p>համահունչ ՎՇԵԲ ԻՊ5 և ԻՊ10 պահանջներին:</p> <p>խորհրդակցությունները պետք է զուգորդվեն տարաբնակեցման փաստաթղթերի հրապարակմամբ:</p> <p>Առաջին փուլերից սկսած և ողջ գործունեության ընթացքում պատվիրատուն պետք է ներգրավի ազդակիր տղամարդկանց և կանանց, հյուրընկալող համայնքներին և խոցելի խմբերին:</p> | <p>հետ խորհրդակցություններ՝ համաձայն ՎՇԵԲ ԻՊ5 և ԻՊ10 պահանջների (տես Բաժին 6),</p> <ul style="list-style-type: none"> • Իրականացնել ծրագրի համար մշակված Շահառուների ներգրավվածության պլանը (ՇՆՊ) (և, անհրաժեշտության դեպքում՝ ջրամբարի հատուկ ՇՆՊ-երը), որոնք նախատեսում են շարունակական ներգրավվածություն ազդակիր շահագրգիռ խմբերի, այդ թվում՝ խոցելի խմբերի և ԱԵԱ-ների հետ ՏՊ-ների պատրաստման, իրականացման և մշտադիտարկման փուլերում, • 120 օր ժամկետով հրապարակել ծրագրի ՏՇ-ն՝ միաժամանակ ՇՄԱԳ փաթեթի հետ, ինչպես նաև հրապարակել հողերի օտարման և կենսամակարդակի վերականգնման բուկլետը, • հրապարակել ջրամբարի հատուկ ՏՊ-ները նրանց պատրաստման և ՎՇԵԲ-ի և ՀՀՋԿ/ՏԿԵՆ հաստատումից հետո, ինչպես նաև դրանց ոչ տեխնիկական ամփոփագրերը: |
| <p>Հողերի օտարում, տարաբնակեցման պլանավորում ու իրականացում և կենսամակարդակի վերականգնում</p> <p><i>Տարաբնակեցման և կենսամակարդակի վերականգնման պլան և շրջանակ</i></p> | <p>ՀՀ օրենսդրության համաձայն բացառիկ գերակա հակրության շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումը պետք է արտացոլի բոլոր ազդակիր անձանց և գույքային ակտիվները, սակայն օրենսդրությամբ նախատեսված չէ որևէ պլանավորման փաստաթուղթ, որը կարելի է համեմատել տարաբնակեցման պլանի կամ շրջանակի հետ:</p> <p>Կորցրած եկամտի և փոփոխված կենսապահովման միջոցների վերականգնման միջոցառումները, ինչպես նաև զգալի ազդեցության ենթարկված և խոցելի ԱԵԱ-ներին տրամադրվող աջակցությունը չեն դիտարկվում ազգային օրենսդրությամբ:</p> | <p>Պատվիրատուն պարտավոր է մշակել տարաբնակեցման (կենսամակարդակի վերականգնման) պլան, որը համարժեք է ծրագրի հետ կապված ռիսկերին և ազդեցություններին, և պատասխանատու է այդ պլանի իրագործման համար:</p> <p>Եթե ծրագրի մշակման փուլում հնարավոր չէ մշակել լիարժեք տարաբնակեցման/կենսամակարդակի վերականգնման պլան, ապա որպես առաջին քայլ պետք է մշակել տարաբնակեցման/կենսամակարդակի</p> | <p>Անհամապատասխանություն:</p> <ul style="list-style-type: none"> • սպասվում է, որ Ծրագիրը ֆիզիկական տարաբնակեցում չի առաջացնելու, սակայն կհանգեցնի տնտեսական տարաբնակեցման: Այս պատճառով էլ մշակվել է Ծրագրի ներկայիս ՏՇ-ն՝ օրենսդրական բացերը լրացնելու համար: • Ծրագրի ՏՇ-ն պետք է հրապարակվի որպես ՇՄԱԳ փաթեթի մաս: • Կմշակվեն և կիրականացվեն ջրամբարի հատուկ ՏՊ-ներ՝ ելնելով Ծրագրի ՏՇ-ով սահմանված |

| Խնդիր | ՀՀ օրենսդրական պահանջներ | ՎՁԵԲ պահանջներ | Բացերը լրացնելու համար առաջարկվող միջոցառումներ |
|------------------------------------|---|--|---|
| | <p>Ազգային օրենսդրությունը չի նախատեսում տեղահանված անձանց համար լրացուցիչ փոխհատուցումներ, ինչպիսիք են անցումային աջակցությունը, տեղափոխման նպաստը և այլն:</p> | <p>վերականգնման շրջանակային փաստաթուղթ: Տարաբնակեցման պլանավորման փաստաթղթերը պետք է ինտեգրվեն ԻՊ1-ի կողմից պահանջվող շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգում: «Ա» դասի ծրագրերի համար այդ փաստաթղթերը պետք է հրապարակվեն՝ համաձայն ԻՊ10-ով սահմանված հանրային քննարկման ընթացակարգի և ժամկետների: Պատվիրատուն պարտավոր է տրամադրել տարաբնակեցման աջակցություն բոլոր ֆիզիկապես տեղահանվող անձանց, իսկ կենսամակարդակի բարելավման կամ վերականգնման աջակցություն՝ տնտեսական տարաբնակեցման ենթարկվող անձանց՝ անկախ նրանց վերոնշյալ իրավասության կատեգորիաներից:</p> | <p>սկզբունքներից և պահանջներից, համաձայնեցված ՎՁԵԲ-ի հետ: ՏՊ-ները կհիմնվեն առաջիկա ՄՍՈՒ տվյալների, ԱԵԱ-ների հետ խորհրդակցությունների, գույքագրման և մարդահամարների տվյալների վրա:</p> |
| <p>Բողոքարկման մեխանիզմ</p> | <p>Ըստ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր մարդ ունի արդյունավետ պաշտպանության իրավունք դատարաններում և պետական մարմիններում: Ազդակիր բնակչությունն, համայնքները կամ իրավաբանական անձինք իրավունք ունեն բողոքարկել կառավարության հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշումը, ինչպես նաև գույքի օտարման պայմանագրի նախագծը՝ դատարանում: Միևնույն ժամանակ, օտարման ենթակա գույքի նախնական ուսումնասիրության արձանագրությունը կարող է բողոքարկվել վարչական վարույթի շրջանակում՝ բողոք ներկայացնելով համապատասխան լիազոր մարմին: Հայտերի, բողոքների, առարկությունների և առաջարկությունների ներկայացումը ձեռք բերողին և համապատասխան</p> | <p>Ազատ, անկախ և լայնորեն հրապարակված բողոքների մեխանիզմ, որը ներառում է ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական խողովակներ, պետք է մշակվի համաձայն ԻՊ10-ի համապատասխան պահանջների և հասանելի լինի ԱԵԱ-ներին: Մեխանիզմը պետք է ստեղծվի հնարավորինս վաղ՝ հողօտարման և տարաբնակեցման գործընթացի սկզբնական փուլերում, և ամենաուշը՝ մինչև մարդահամարի իրականացումը, որպեսզի հնարավոր լինի արձագանքել փոխհատուցման, տարաբնակեցման կամ կենսամակարդակի վերականգնման միջոցառումների</p> | <p>Մասնակի համապատասխանություն: ՏՇ-ն նախատեսում է լրացուցիչ միջոցառումներ՝ ՎՁԵԲ-ի պահանջներին համապատասխանելու համար, այն է՝ մշակել և կիրառել ծրագրի համար հատուկ բողոքների լուծման մեխանիզմ տարաբնակեցումից ազդակիր և արտաքին շահագրգիռ կողմերի համար՝ համաձայն ՎՁԵԲ ԻՊ5 և ԻՊ10 պահանջների (ներառյալ բողոքների համակարգված մշտադիտարկում/գնահատում, անսնուն բողոքների դիտարկման տարբերակներ և մեխանիզմ), ինչպես մանրամասն ներկայացված է Բաժին Error! Reference source not found..</p> |

| Խնդիր | ՀՀ օրենսդրական պահանջներ | ՎՉԵԲ պահանջներ | Բացերը լրացնելու համար առաջարկվող միջոցառումներ |
|---|--|---|--|
| | պետական մարմիններին, ինչպես նաև դատարան բողոք ներկայացնելը հնարավոր է օտարման գործընթացի յուրաքանչյուր փուլում: | վերաբերյալ ազդակիր անձանց/այլ շահագրգիռ կողմերի կողմից բարձրացված կոնկրետ մտահոգություններին: | Այս բողոքների մեխանիզմը կիրառարակվի որպես ՏՇ-ի մաս: Այն համադրված է ջրամբարների ՇՆՊ-երի շրջանակում կիրառարակվելիք ընդհանուր բողոքների մեխանիզմի հետ: Բողոքների մեխանիզմը չի սահմանափակում դատարան դիմելու իրավունքը: |
| Համայնքային կառույցների, կոմունալ ծառայությունների հանրային օբյեկտների կորուստ | Հասարակական ծառայություններ մատուցող օպերատորները (պետական և մասնավոր) պարտավոր են իրենց ենթակառուցվածքները տեղափոխել սեփական ծախսերով, եթե դրանք խանգարում են հանրային շահ ներկայացնող ծրագրին: | Ծրագրի ԱԵԿ-երի և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների (ԱԵՏՏ) գույքի և կենսամակարդակի վրա Ծրագրի բացասական ազդեցությունը մեղմելու համար ձեռնարկված բոլոր միջոցառումները, այդ թվում՝ աջակցությունը, տեղափոխությունը և վնասված, ավերված ենթակառուցվածքների, շենքերի, կառույցների վերականգնումը, համարվում են տարաբնակեցում: | Անհամապատասխանություն: ՎՉԵԲ-ի պահանջներին համապատասխանելու նպատակով ՏՇ-ն նախատեսում է, որ կոմունալ ծառայությունները կտեղափոխվեն Ծրագրի բյուջեի հաշվին, իսկ կորցրած կառույցները կվերակառուցվեն և դրանց գործառնությունները կվերականգնվեն համայնքային/պետական մարմինների հետ խորհրդակցությամբ: |
| Մշտադիտարկում և գնահատում | Ազգային օրենսդրությունը չի նախատեսում ՏՊ իրականացման մշտադիտարկում և գնահատում, ինչպես նաև արտաքին ավարտական աուդիտի պահանջներ: | Պատվիրատուն պետք է հաստատի տարաբնակեցման պլանի իրականացման մշտադիտարկման և գնահատման ընթացակարգեր: Մշտադիտարկման գործընթացում պետք է ներգրավվեն հիմնական շահագրգիռ կողմերը, այդ թվում՝ ազդակիր համայնքները: Չգայի տեղահանման ազդեցություններ ունեցող Ծրագրերի դեպքում պատվիրատուն կարող է որոշել նշանակել համապատասխան փորձառու մասնագետների՝ ՏՊ-ների իրականացման մշտադիտարկման համար, ինչպես նաև ուղղիչ միջոցառումները հստակեցնելու և ներքին մշտադիտարկման հաշվետվությունները պարբերաբար պատրաստելու համար: | Անհամապատասխանություն: Այս ՏՇ-ն նախատեսում է հետևյալ լրացուցիչ միջոցառումները՝ <ul style="list-style-type: none"> Մշակել մշտադիտարկման և գնահատման դրույթներ Ծրագրի ՏՇ-ում և առաջիկա ջրամբարի հատուկ ՏՊ-ներում (տես Բաժին 9), տեղեկատվական մշտադիտարկում և գնահատում իրականացնել ջրամբարի հատուկ ՏՊ-ների կատարման ժամանակ՝ կիրառելով ներքին մշտադիտարկման և գնահատման ընթացակարգեր; անհրաժեշտության դեպքում ներգրավել արտաքին տարաբնակեցման խորհրդատուների, ՎՉԵԲ-ին տրամադրել ՏՊ-ների կատարման վերաբերյալ |

| Խնդիր | ՀՀ օրենսդրական պահանջներ | ՎՁԵԲ պահանջներ | Բացերը լրացնելու համար առաջարկվող միջոցառումներ |
|---|--|--|--|
| | | <p>Այդպիսի ծրագրերի դեպքում ՎՁԵԲ-ը կարող է պահանջել՝</p> <p>i) պարբերական արտաքին համապատասխանության գնահատումներ և/կամ</p> <p>ii) անկախ փորձագետների կողմից իրականացվող արտաքին ավարտական աուդիտ:</p> | <p>վշտադիտարկման հաշվետվություններ,</p> <ul style="list-style-type: none"> Նախաձեռնել արտաքին տարաբնակեցման ավարտական աուդիտների իրականացում Քասախի, Լիճքի, Արթիկի և Աստղածորի ջրամբարների համար (նշում՝ անկախ փորձագետների (կազմակերպությունների) տեխնիկական առաջադրանքները համաձայնեցնել ՎՁԵԲ-ի հետ): |
| <p>Կազմակերպչական կարողություններ և հանձնառություն</p> | <p>Ոչ մի հատուկ պահանջ չկա հողերի ձեռքբերման հետ կապված պլանավորված գործողությունների ազդեցությունները հաղթահարելու և իրականացման ընթացքը վերահսկելու համար անհրաժեշտ կազմակերպչական կառուցվածքի, անձնակազմի և ռեսուրսների վերաբերյալ:</p> | <p>Պատվիրատուն պետք է նշանակի հատուկ աշխատակիցներ, ներառյալ ղեկավարության ներկայացուցիչ(ներ), հստակ սահմանված պարտականություններով և լիազորություններով՝ հողերի ձեռքբերման և տարաբնակեցման գործընթացների պլանավորման և իրականացման համար:</p> <p>Պատվիրատուն պետք է ապահովի համապատասխան աջակցություն, ինչպես նաև մարդկային և ֆինանսական ռեսուրսներ՝ հողերի ձեռքբերման և տարաբնակեցման հանձնառությունների արդյունավետ և շարունակական իրականացումն ապահովելու նպատակով:</p> | <p>Տես Բաժին 8.4՝ ՏՇ և ՏՊ իրականացման կարողությունների զարգացում:</p> |

4 ԾՐԱԳՐԻ ՀՈՂԱՊԱՀԱՆՁԱՐԿԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԵՂԱՀԱՆՄԱՆ ԱՇԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կառուցման և շահագործման հողապահանջարկը

Աղյուսակ 7-ը ամփոփում է ծրագրի առանձին բաղադրիչների համար հողի գնահատված կարիքները և նշում դրանց սեփականության կարգավիճակը: Հողապահանջը ճշգրտորեն կորոշվի մանրամասն նախագծման և ՏՊ-ի մշակման փուլում (մանրամասն գույքագրման ընթացքում):

Աղյուսակ 7. Գնահատված հողապահանջարկը և հողերի սեփականության կարգավիճակն ըստ առանձին բաղադրիչների

| Ծրագրի ջրամբար | Գնահատված հողապահանջ (մ ²) | Մասնավոր (մ ²) | Համայնքային (մ ²) | Սեփական (մ ²) |
|-----------------|---|----------------------------|-------------------------------|---------------------------|
| Արթիկ | 96,065 <i>նշում միայն ջրանցքների համար, քանի որ մոտ 23 հա ջրամբարի համար հատկացվել է 1980-1990 թվականներին</i> | 6,090 | 71,171 | 18,804 |
| Աստղածոր | 420,111 | 66,601 | 353,510 | 0 |
| Քասախ | 1,452,605 | 726,241 | 716,206 | 10,158 |
| Լիճք | 582,502 | 17,491 | 531,849 | 33,162 |
| Ելփին | 315,725 | 0 | 315,725 | 0 |
| Ընդամենը | 2,867,008 | 816,423 | 1,988,461 | 62,124 |

Աղբյուր՝ կազմվել է Աստղածորի, Քասախի, Լիճքի և Ելփինի ջրամբարների նախնական ՏՊ-ների և Արթիկի ջրամբարի ՏԾ-ի հիման վրա (բոլորը թվագրված են 2024թ.)

Վերոնշյալ հողապահանջարկի կարիքների գնահատականները ներառում են ջրապահպան, Էկոտոնի և անօտարելի գոտիները՝ հետևյալ կերպ.

- Աստղածորի, Քասախի և Լիճքի նախագծային փաստաթղթերը թարմացվել են 2024 թվականի հուլիսին՝ ներառելով ջրապահպան, Էկոտոնի և անօտարելի գոտիները: Այս երեք գոտիները որոշվել են հիդրոլոգիական կառույցների առանձնահատկությունների, դրանց կառուցման, շահագործման և պահպանման կարիքների, տեղական ռելիեֆի, հաղորդակցությունների անցկացման համար անհրաժեշտ առկա ճանապարհների և վերը նշված գոտիները սահմանող չափանիշների շարքում թվարկված այլ գործոնների հիման վրա: Գոտիները տատանվում են 10 մ-ից մինչև 150 մ ջրամբարների շրջակայքի տարբեր վայրերում:
- Ելփինի ջրամբարի համար նախագծով սահմանվել է 100 մ ջրապահպան գոտի (որը ներառում էր ինչպես Էկոտոնի, այնպես էլ անօտարելի գոտիները):
- Արթիկի ջրամբարի համար նախագծով նախատեսվում էր ջրամբարի շուրջ 10 մ անօտարելի գոտի և ջրանցքների երկայնքով 4-10 մ լայնությամբ գոտի՝ դրանք կառուցելու և պահպանելու համար: Ջրամբարի ջրապահպան և Էկոտոնի գոտիների վերաբերյալ դեռևս հիմնավորող փաստաթղթեր չկան:

Այսպիսով, ջրամբարների ընդհանուր մակերեսները (**Աղյուսակ 7**) համարվում են, որ կներառեն օրենքով պահանջվող պահպանվող գոտիները և դրանք ամբողջությամբ կօտարվեն Ծրագրի կողմից:

Ջրային կոմիտեն որոշում է կայացրել խուսափել Ծրագրի բաղադրիչների, ինչպիսիք են ստորգետնյա ջրագծերը/խողովակները, մոտեցման ճանապարհները, ստորգետնյա

հաղորդակցությունները²⁸ և այլն, սերվիտուտի ցանկացած կարգավորումից: Չնայած այս մոտեցումը կարող է լավ գործելակերպ չլինել ազդեցության նվազագույնի հասցնելու տեսանկյունից, Պատվիրատուն ունի դրա համար երկու պատճառ.

- Առաջինը այն է, որ ջրամբարները, կառուցվելուց հետո, կհանձնվեն դրանց շահագործողներին, և սերվիտուտի իրավունքների փոխանցումը բարդ է և կապված է ԾԱԵԱ-ների կողմից որոշակի դիմադրության հետ:
- Երկրորդը՝ Ջրային կոմիտեի այլ ծրագրերի փորձը ցույց է տալիս, որ սերվիտուտի իրավունքների կիրառումը ժամանակի ընթացքում խոչընդոտվում է սերվիտուտի հողերի նկատմամբ սեփականության փոփոխությունների պատճառով, և կառույցների շահագործողները ինդիվիդուալ են ունեն դրանց սպասարկման համար հասանելիությամբ պայմանավորված:

Ջրամբարների ընդհանուր գնահատված մակերեսները (**Աղյուսակ 7**) հաշվի չեն առնում դրանց բոլոր գծային կառույցների համար անհրաժեշտ շահագործման և սպասարկման գոտիները (բացառությամբ Արթիկի): Հետևաբար, լրացուցիչ հողատարածք կպահանջվի ջրանցքների, մոտեցման ճանապարհների և հաղորդակցությունների համար, և հողատարածքի ճշգրիտ պահանջարկը կորոշվի առանձին ՏՊ-ներում՝ հիմնվելով մանրամասն նախագծի վրա:

4.2 Ֆիզիկական տեղահանման ազդեցությունները

Ծրագրի համար անհրաժեշտ հողատարածքներում բնակելի տներ չկան: Լիճքում կան մասամբ կառուցված և մեկ չբնակեցված ամառանոցներ, որոնք չեն օգտագործվում որպես բնակելի: Այսպիսով, չի կանխատեսվում, որ Ծրագիրը կհանգեցնի ԾԱԵԱ-ների ֆիզիկական տեղահանման (այսինքն՝ տեղափոխման կամ բնակատեղիի կորստի):

4.3 Տնտեսական տեղահանման ազդեցությունները

4.3.1 Նախակառուցում

Նախնական տվյալներով, Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մոտ 286.7 հա հողատարածք (**Աղյուսակ 7**), որից՝

- համայնքային սեփականության հողերը կազմում են 69.4% (մոտ 198.8 հա),
- պետական հողերը՝ 2.1% (մոտ 6.2 հա), և
- մասնավոր սեփականության հողերը՝ 28.5% (81.6 հա):

Արթիկի, Քասախի և Լիճքի ջրամբարները կազդեն պետական, համայնքային և մասնավոր հողերի և ակտիվների վրա:

Աստղածորը կազդի համայնքային և մասնավոր հողերի վրա:

Ելփինի ջրամբարը կազդի միայն համայնքային հողերի վրա:

Բոլոր այս հողերը պետք է օտարվեն կառուցման աշխատանքների մեկնարկից առաջ և, հետևաբար, կառաջացնեն տարբեր մասշտաբների և չափերի տնտեսական տեղահանման ազդեցություններ, ինչպես նկարագրված է ստորև բերված ենթաբաժիններում:

²⁸ Համաձայն Ջրային կոմիտեի բնապահպանական և սոցիալական մասնագետների հետ 2025 թվականի մայիսի 29-ի հաղորդակցության

4.3.1.1 Արթիկի ջրամբար՝ հողօգտագործման և հնարավոր ազդեցությունների վերաբերյալ հիմնական տեղեկատվություն

Արթիկի ջրամբարի ջրանցքային ենթակառուցվածքների համար նախատեսվում է ձեռք բերել 96,065 մ² մակերեսով մոտ 130 հողամասեր, որից՝

- 71,171 մ² մակերեսը գտնվում է Նոր Կյանք, Անուշավան, Փանիկ, Արթիկ, Տուֆաշեն և Պեմզաշեն բնակավայրերի մոտ 80-85 համայնքային սեփականության հողամասերի վրա,
- 18,804 մ² մակերեսը գտնվում է Փանիկ, Արթիկ և Տուֆաշեն բնակավայրերի մոտ 15-17 պետական հողամասերի վրա, և
- 6,090 մ² մակերեսը գտնվում է Արթիկ, Փանիկ և Նոր Կյանք բնակավայրերի մոտ 27-28 մասնավոր հողամասերի վրա:

Ազդակիր մասնավոր հողամասերը հիմնականում գյուղատնտեսական հողեր են: Մասնավոր հողատերերի մեծ մասը զբաղվում է գյուղատնտեսական գործունեությամբ. ՇՄԱԳ-ի խորհրդակցությունների ժամանակ նրանք բողոքել են ջրի սակավությունից և, հետևաբար, բերքի սահմանափակ լինելուց: Այնուամենայնիվ, կանխատեսվում է ազդեցություն բերքի վրա: Ծրագրի որոշ ազդակիր տնային տնտեսություններ աջակցության կարիք կունենան հողի նկատմամբ իրենց իրավունքները օրինականացնելու համար: Արթիկ համայնքի քարտուղարի խոսքով՝ ջրամբարի կառուցումը դրականորեն կանդրադառնա համայնքի գյուղատնտեսության զարգացման վրա, հատկապես ամառային սեզոնին, երբ տարածաշրջանում ոռոգման ջրի պակաս կա:

Ծրագրի տարածաշրջանում կա մեկ տուֆի հանք (Արթիկի ջրամբարի տեղամասից մոտ 4.0-4.5 կմ հեռավորության վրա), որը ներկայումս չի շահագործվում սպառված պաշարների պատճառով, սակայն հանքի սեփականատերը դեռ կարող է պահպանել հանքարդյունաբերական իրավունքները, ուստի տարածքը պետք է կամ շրջանցեն Արթիկի ջրամբարի ենթակառուցվածքները, կամ պետք է փոխհատուցվի այս ՏԸ-ին համապատասխան:

Ջրամբարի համար նախկինում հատկացված հողատարածքում կա փոքր ջրամբար և հին բետոնե ջրանցքներ ու կառույցներ (**Նկար 7**): Որոշ հատվածներ օգտագործվում են որպես արոտավայրեր: Եթե ջրապահպան գոտին ընդլայնվի մինչև 90-100 մ, ապա որոշ հին (ամենայն հավանականությամբ չօգտագործվող) կառույցներ կհայտնվեն դրա մեջ (ներկայումս Ծրագրով նախատեսվում է ջրամբարի շուրջ 10 մ շառավիղով անբաժանելի գոտի):





Աղբյուր՝ մշակվել է Խարիրդատուի դաշտային այցելությունների (նկարներ) և նախագծային փաստաթղթերի հիման վրա

Նկար 7. Արթիկի ջրամբար՝ սխեմատիկ քարտեզ և տարածքը պատկերող նկարներ

4.3.1.2 Աստղածորի ջրամբար՝ հողօգտագործման և հնարավոր ազդեցությունների վերաբերյալ հիմնական տեղեկատվություն

Ջրամբարը, ենթադրաբար, կազդի Աստղածոր և Չոլաքար բնակավայրերում գտնվող 54 հողամասերի վրա՝ 420,111.30 մ² մակերեսով: Դրանցից 19-ը համայնքային սեփականություն են, իսկ 35-ը՝ մասնավոր: Համայնքային սեփականության 19 հողամասերը գյուղատնտեսական վարելահողեր են՝ ընդհանուր 353,510.10 մ² մակերեսով: 35 մասնավոր հողամասերը զբաղեցնում են 66,601.20 մ² մակերես, որից 27 հողամաս (52,875.10 մ²) դասակարգված են որպես գյուղատնտեսական վարելահողեր, իսկ 8 հողամաս (13,726.10 մ²)՝ որպես գյուղատնտեսական խոտհարքեր: Ջրամբարի տարածքում գտնվող արոտավայրերը կազմում են գյուղի վարչական տարածքի ընդհանուր արոտավայրերի մոտ 1.5%-ը: Շինությունների / կառույցների և ծառերի վրա ազդեցություններ չեն սպասվում:

Աստղածոր բնակավայրի վարչական ղեկավարի հետ հարցազրույցի համաձայն՝ ջրամբարի կառուցման համար հատկացված տարածքում կա մոտ 17 հա համայնքային հող, որն օգտագործվում է որպես արոտավայր: Բացի այդ, կան մոտ 4 հա մասնավոր հողեր, որոնք նույնպես օգտագործվում են որպես արոտավայր: Սակայն տեղանքը լիովին հարմար չէ արոտավայրերի համար, և մշակաբույսերի արտադրության համար հատկացված հողերը մնում են անմշակ:

Ջրամբարի տարածքը հատվում է բարձր լեռնային արոտավայրեր տանող տնային կենդանիների տեղաշարժման ճանապարհներով. տեղի բնակիչների հետ հարցազրույցների համաձայն՝ շրջակայքում կան նաև այլընտրանքային ճանապարհներ:

Խորհրդատուն չի գրանցել հողի որևէ լայնածավալ մշակում: Օտարվող հողատարածքում պտղատու այգիներ չկան: Այնուամենայնիվ, հողօգտագործողների հետ հարցազրույցների համաձայն, կան հողի ֆորմալ և ոչ ֆորմալ օգտագործողներ, օրինակ՝ Աստղածորում հարցմանը մասնակից բնակիչը նշել է, որ օտարվող համայնքային հողամասում մշակում է անասնապահական մշակաբույսեր և ազնվամորի: Աստղածորի մեկ այլ հարցված բնակիչ ունի մասնավոր հողամաս և զբաղվում է խոտհունձով: Ընդհանուր առմամբ, ՏՊ-ի մշակման ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել այս ջրամբարի տարածքում գտնվող ոչ ֆորմալ հողօգտագործողներին:

Նախատեսվող ջրամբարի տարածքում կա խաչքարով հուշավայր և ջրառի կետ՝ Ռոռզման ջրանցքով (**Աղբյուր**՝ մշակվել է Խարհրդատուի դաշտային այցելությունների (նկարներ) և բուժերային գոտու նախագծային փաստաթղթերի հիման վրա

Figure 8): Խաչքարի և հանրային/մասնավոր ենթակառուցվածքների հետ կապված ազդեցությունը հաշվի է առնվել իրավունքների կողմնորոշիչ սխեմայում:

Վանքի Բերդ եկեղեցին, որը գտնվում է ջրամբարի տարածքից դուրս գտնվող բլրի վրա (**Աղբյուր**՝ մշակվել է Խարհրդատուի դաշտային այցելությունների (նկարներ) և բուժերային գոտու նախագծային փաստաթղթերի հիման վրա

Figure 8), չի ենթարկվի ազդեցության, սակայն եկեղեցի տանող առկա գրունտային ճանապարհը կանցնի ջրի տակ: Հետևաբար, Ծրագրի կողմից անհրաժեշտ կլինի կազմակերպել այլընտրանքային երթուղի:





Աղբյուր՝ մշակվել է Խարիրդատուի դաշտային այցելությունների (Նկարներ) և բուժերային գոտու Նախագծային փաստաթղթերի հիման վրա

Figure 8. Աստղածորի ջրամբար՝ սխեմատիկ քարտեզ և տարածքը պատկերող նկարներ

4.3.1.3 Զասախի ջրամբար՝ հողօգտագործման և հնարավոր ազդեցությունների վերաբերյալ հիմնական տեղեկատվություն

Ընդհանուր առմամբ, Զասախի ջրամբարը սպասվում է, որ կազդի հինգ բնակավայրերի (Ամբերդ, Այգեշատ, Ոսկեհատ, Ոսկեվազ և Օշական) 1,452,605.40 մ² մակերեսով 280 հողամասերի վրա, որոնցից.

- 172-ը մասնավոր հողամասեր են՝ ընդհանուր 726,241.40 մ² մակերեսով, որոնցից 171-ը գյուղատնտեսական հողամասեր են, իսկ 1-ը՝ կոմերցիոն: Այս հողերի վրա ապօրինի օգտագործողներ կամ վարձակալներ չեն հայտնաբերվել,
- 106-ը համայնքային հողամասեր են՝ 716,205.80 մ² մակերեսով, որոնցից 103-ը գյուղատնտեսական (հիմնականում վարելահողեր) և 3-ը՝ հատուկ օգտագործման ջրային հողեր (6,521.00 մ²), և

- 2 հողամասեր պետական սեփականություն են (10,158.20 մ²), որոնց վրա ապօրինի օգտագործողներ չկան:

Ծրագիրը, ինչպես կանխատեսվում է, կազդի ութ կառույցների վրա՝ 793.64 մ² ընդհանուր մակերեսով, վեց հողամասերի վրա, որոնցից մեկը 156 մ² բնակելի տնակ է (չի օգտագործվում որպես բնակելի տարածք, ուստի բնակելի կորուստներ չկան), մյուսները՝ ոչ բնակելի: Ծրագիրը, ինչպես կանխատեսվում է, կազդի նաև համայնքային և մասնավոր հողամասերի վրա՝ 640 մրգատու/հատապտղային թփերի և 15,928 մրգատու ծառերի վրա (որոնց մոտ 14%-ը դեռևս բերքատու չէ/տնկիներ են): Որոշ մշակաբույսեր նույնպես կազդվեն:

Խոյ համայնքի ղեկավարի խոսքով՝ համայնքն ամբողջությամբ բաղկացած է գյուղական բնակավայրերից՝ լավ զարգացած խաղողագործությամբ, գինեգործությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Անասունների արածեցումը հիմնականում իրականացվում է բարձր լեռնային արոտավայրերում: Ամբերդ և Այգեշատ գյուղերի վարչական տարածքները մասամբ գտնվում են ջրամբարի տարածքում, սակայն ջրամբարի մոտ 90%-ը կգտնվի Աշտարակի համայնքի վարչական սահմաններում:

Աշտարակ համայնքի Օշական, Ոսկեվազ և Ոսկեհատ գյուղերը պատմականորեն կենտրոնացած են եղել գյուղատնտեսության, մասնավորապես՝ այգեգործության և հողագործության վրա: Չբաղվում են նաև խաղողագործությամբ, չնայած դրա ծավալները նվազել են: Չարգացած է նաև անասնապահությունը, սակայն այն հիմնականում տեղի է ունենում գյուղերի վարչական սահմաններից դուրս գտնվող բարձր լեռնային արոտավայրերում:

Ոսկեվազ գյուղի վարչական ղեկավարի խոսքով՝ նախատեսված ջրամբարի տարածքում գտնվող հողերը հիմնականում օգտագործվում են որպես արոտավայրեր: Շրջակա տարածքները հիմնականում զբաղեցված են գյուղատնտեսական մշակաբույսերով և պտղատու այգիներով: Արոտավայրերն օգտագործվում են երեք տնային տնտեսությունների կողմից: 1997 թվականից ի վեր հողերի մեծ մասը անապատացել է: Գետի ջուրն օգտագործվում է ոռոգման համար՝ պոմպերի միջոցով: Ջրամբարի ազդեցության տարածքում ձկնորսություն, ձկնաբուծություն կամ ռեստորաններ չկան:

Օշական գյուղի վարչական ղեկավարը նշեց, որ տեղի բնակչությունը հետաքրքրված է ջրամբարի կառուցմամբ: Գյուղի բնակիչների մոտ 20%-ը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Նախատեսվող ջրամբարի և հարակից տարածքներում մարդիկ հիմնականում զբաղվում են հողագործությամբ և այգեգործությամբ (*Աղբյուր՝ մշակվել է Խարիրդատուի դաշտային այցելությունների (նկարներ) և բուժերային գոտու նախագծային փաստաթղթերի հիման վրա*)


Նկար 9): Նույն միտումները նկատվում են նաև Ոսկեհատ գյուղում:

Տեղի բնակիչների հետ հարցազրույցների համաձայն՝ նախատեսված ջրամբարի տարածքում տնկված են ծիրանի, դեղձի, տանձի, սալորի և խնձորի ծառեր: Որոշ բնակիչներ այնտեղ ունեն նաև ընկույզի և խաղողի այգիներ: Տեղանք այցելության ժամանակ Քասախ գետի մոտ նկատվել է ձկնորս:

Նախատեսված ջրամբարի տարածքում նկատվել են Էլեկտրամատակարարման գիծ և ենթակայան (*Աղբյուր՝ մշակվել է Խարիրդատուի դաշտային այցելությունների (նկարներ) և բուժերային գոտու նախագծային փաստաթղթերի հիման վրա*)

Նկար 9): Պոմպակայանը սպասարկող մեկ այլ Էլեկտրակայան գտնվում է ջրամբարի տարածքից դուրս (*Աղբյուր՝ մշակվել է Խարիրդատուի դաշտային այցելությունների (նկարներ) և բուժերային գոտու նախագծային փաստաթղթերի հիման վրա*)

Նկար 9), բուժերային գոտու մոտ:



1 - Պոմպակայան և էլեկտրամատակարարման ենթակայան 40°15'8.84"N, 44°16'51.98"E



2 - էլեկտրամատակարարման գիծ 40°15'8.84"N, 44°16'51.98"E



3 - էլեկտրամատակարարման ենթակայան 40°15'6.78"N, 44°16'52.90"E



4 - Զանդված կառույցներ 40°15'5.58"N, 44°16'48.33"E





Աղբյուր՝ մշակվել է խարիրդատուի դաշտային այցելությունների (նկարներ) և բուժերային գոտու նախագծային փաստաթղթերի հիման վրա

Նկար 9. Քառախի ջրամբար՝ սխեմատիկ քարտեզ և տարածքը պատկերող նկարներ

4.3.1.4 Լիճքի ջրամբար՝ հողօգտագործման և հնարավոր ազդեցությունների վերաբերյալ հիմնական տեղեկատվություն

Լիճքի ջրամբարի համար հողերի օտարումը, ենթադրաբար, կազդի Լիճք բնակավայրերի 75 հողամասերի վրա (582,501.60 մ²), որոնցից.

- 7-ը մասնավոր սեփականության հողամասեր են (2 գյուղատնտեսական և 5 ոչ գյուղատնտեսական)՝ 17,490.50 մ² մակերեսով: Բոլոր գյուղատնտեսական հողամասերը վարելահողեր են (14,084.40 մ²): Հինգ ոչ գյուղատնտեսական հողամասերից մեկը ներառում է էներգետիկ նշանակության հողամաս (1,499.10 մ²) և 4 բնակելի նշանակության հողամասեր (1,907.0 մ²):
- 58-ը համայնքային սեփականության հողամասեր են (531,848.70 մ²): Բոլոր հողամասերը գյուղատնտեսական են, այդ թվում՝ 50 վարելահող (115,387.60 մ²) և 8-ը՝ այլ հողեր:
- 10-ը պետական հողամասեր են (5 գյուղատնտեսական և 5 ոչ գյուղատնտեսական)՝ 33,162.40 մ² մակերեսով: Հինգ գյուղատնտեսական հողամասերից 1-ը վարելահող է (1,496.90 մ²), 3-ը՝ արոտավայրեր է և 1-ը՝ այլ նշանակության: Հինգ ոչ գյուղատնտեսական հողամասեր նախատեսված են հանքարդյունաբերության համար (29,528.40 մ²): Պետական հողերի վրա ապօրինի օգտագործողներ չեն հայտնաբերվել:

Ծրագիրը, ենթադրաբար, կազդի երեք շինությունների վրա՝ 128.10 մ² մակերեսով, երեք հողամասերի վրա, որոնցից մեկը 53 մ² մակերեսով բնակելի տնակ է (չի օգտագործվում որպես բնակելի տարածք, ուստի բնակելի կորուստներ չկան), մյուս երկուսը ոչ բնակելի շինություններ են: Կա նաև մեկ 27 մ² մակերեսով շարժական մետաղական կառույց, որը կարող է տեղափոխվել այլ վայր: Նախագիծը, ենթադրաբար, կազդի նաև համայնքային և մասնավոր հողամասերի վրա գտնվող 6 մրգատու թփերի և 2358 մրգատու ծառերի վրա:

Ծրագիրը սպասված և ողջունելի է Մեղրի համայնքի ղեկավարի կողմից, ինչպես նշվեց խորհրդատուի հետ հանդիպման ժամանակ: Լիճք գյուղական բնակավայրի վարչական ղեկավարի խոսքով՝ տարածքում եկամտի հիմնական աղբյուրը գյուղատնտեսությունն է,

այդ թվում՝ լրբազգիների, կարտոֆիլի և պտղատու այգիների մշակումը: Ջրամբարի տարածքում և դրա բուժերային գոտում հնարավոր է գտնվի ընկույզի այգի:

Ջրամբարի տարածքում կան ինչպես մասնավոր, այնպես էլ համայնքային սեփականության հողամասեր, որոնք օգտագործվում են խոտհունձի և անասնապահական արածեցման համար: Սակայն այս օգտագործումը նշանակալի չէ այլընտրանքային օգտագործման համար մնացած ընդհանուր հողատարածքի համեմատ: Նախատեսվող ջրամբարի տարածքում վարձակալված հողամասեր չկան:

Հիդրոէկետրակայանի շրջանցիկ խողովակները անցնում են նախատեսվող ջրամբարի տարածքով: Ջրամբարի բուժերային գոտում կան հանքարդյունաբերական գործունեության համար հատկացված հողամասեր:

Լիճք գյուղի բնակիչների հետ հարցազրույցները ցույց են տալիս, որ մեկ տնային տնտեսություն զբաղվում է անասնապահությամբ, մինչդեռ մոտ 20 տնային տնտեսություն՝ գյուղատնտեսությամբ: Նախատեսվող ջրամբարի տարածքում մշակվում են պտղատու, այդ թվում գետնանուշի, տանձի և ծիրանի ծառեր: Ռոռզման ջուրը մատակարարվում է գետից:

Տեղի բնակիչների հետ խորհրդակցությունների համաձայն՝ օրինական վարձակալված հողամասեր չկան: Երկու տնային տնտեսություններ զբաղվում են խոտհունձով իրենց հողամասերում, որոնք գտնվում են նախատեսված ջրամբարի տարածքում (**Նկար 10**): Տեղի բնակչությունը չի զբաղվում ձկնորսությամբ:

Նախատեսվող ջրամբարի տարածքում կան կիսակառույց և լքված ամառանոցներ, ինչպես նաև հանգստի վայր և կամուրջ, որը տանում է դեպի կոլաժներից մեկը (**Նկար 10**): Տարածքը հատում են երկու օդային էլետրահաղորդման գծեր (110 կՎ և 6/10 կՎ) և մի քանի հենասյուներ գտնվում են Լիճքի ջրամբարի տարածքում (**Նկար 10**):





Աղբյուր՝ մշակվել է Խարիրդատուի դաշտային այցելությունների (Նկարներ) և բուժերային գոտու նախագծային փաստաթղթերի հիման վրա

Նկար 10. Լիճքի ջրամբար՝ սխեմատիկ քարտեզ և տարածքը պատկերող նկարներ

4.3.1.5 Ելփինի ջրամբար՝ հողօգտագործման և հնարավոր ազդեցությունների վերաբերյալ հիմնական տեղեկատվություն


Ելփինի ջրամբարը կազմի Արենի համայնքի միայն մեկ համայնքային հողամասի վրա: Սա գյուղատնտեսական արոտավայր է՝ 4,017,142.4 մ² ընդհանուր մակերեսով, որից 315,724.9 մ²-ը նախատեսվում է օտարել ճրագրի շրջանակներում: Ակնկալվում է, որ ջրամբարի ենթակառուցվածքները (գլխավոր ջրանցք/ջրագիծ, ճանապարհներ և այլն) նույնպես հիմնականում կտեղակայվեն համայնքային հողերի վրա: Շինությունների / կառույցների և ծառերի վրա ազդեցություններ չեն սպասվում:


Արենի համայնքի ղեկավարի խոսքով՝ ճրագրի տարածքում սոցիալ-տնտեսական զարգացման միջամտություններ չեն նախատեսվում:

Հարցազրույցի ընթացքում Ելփին գյուղի վարչական ղեկավարը Խորհրդատուին տեղեկացրել է, որ ջրամբարի համար նախատեսված տարածքը ներկայումս չի օգտագործվում որպես արոտավայր՝ համապատասխան բուսականության բացակայության պատճառով: Տարածք այցելության ժամանակ Խորհրդատուն այնտեղ չի նկատել որևէ անասուն, ինչպես նաև հողօգտագործման ոչ մի նշան (որը կվերահաստատվի ՏՊ-ի մշակման ընթացքում): Ելփին գյուղի ղեկավարը նաև նշել է, որ գյուղն ունի մոտ 4000 հա նախատեսված արոտավայր, ուստի չօգտագործվող արոտավայրերի օտարումը համարվում է աննշան ազդեցություն:

Տարածքում կա փոքր ջրառ և ջրատար, որը ջուրը տեղափոխում է Ռոճգման համար (Նկար 11): ճրագրի իրականացման հետևանքով տուժած ցանկացած մասնավոր կամ հանրային ենթակառուցվածք կտեղափոխվի և/կամ կփոխհատուցվի՝ համաձայն իրավունքների կողմնորոշիչ սխեմայի (Աղյուսակ 8):

Ելփին գյուղի վարչական ղեկավարի խոսքով՝ ջրամբարից ներքև ձկնորսություն չի իրականացվում Ելփին գետի ցածր ջրի մակարդակի պատճառով:





Աղբյուր՝ մշակվել է Խարիրդատուի դաշտային այցելությունների (Նկարներ) և բուժերային գոտու նախագծային փաստաթղթերի հիման վրա

Նկար 11. Ելփինի ջրամբար՝ սիսեմատիկ քարտեզ և տարածքը պատկերող Նկարներ

4.3.2 Եզրակացություն

Կառուցման փուլում անհրաժեշտ կլինի որոշակի լրացուցիչ հողատարածք, օրինակ՝ շինարարական ճամբարների և պահեստավորման վայրերի և այլնի համար: Կվարձակալվեն ժամանակավոր շինարարության նպատակներով՝ համայնքների կամ հողատերերի հետ կամավոր համաձայնագրերի հիման վրա: Ակնկալվում է, որ ճանապարհների, հաղորդակցության և խողովակաշարերի հետ կապված բոլոր աշխատանքները կկատարվեն Ծրագրի կողմից օտարված հողամասերում:

Շինարարության ընթացքում ժամանակավոր հողերի անհրաժեշտությունը դեռևս լիովին որոշված չէ: Նախագծողները նշել են, որ Աստղածորի ջրամբարի շրջակայքի որոշ հատվածներ, որոնք հնարավոր է օգտագործվեն որպես հանքավայրեր (մոտ 1-1.5 հա), կարող են վերականգնվել շինարարության ավարտից հետո և վերադարձվել Աստղածոր գյուղին՝ գյուղատնտեսական օգտագործման համար: Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ ցանկացած ժամանակավոր օգտագործման հողամաս պետք է տրամադրվի ՎՁԵԲ-ի պահանջներին համապատասխան, և կբանակցվի շինարարական կապալառուի և հողի սեփականատիրոջ(երի) միջև: Փոխկապակցված կառույցների (Էլեկտրահաղորդման գիծ) ժամանակավոր հողերի կարիքները նույնպես նախատեսվում է ապահովել կամավոր համաձայնագրերի միջոցով:

Շինարարական աշխատանքներից կամ տեխնիկայից հողին, մշակաբույսերին կամ այլ ակտիվներին պատճառված ցանկացած պատահական վնաս կգնահատվի և կփոխհատուցվի՝ համաձայն ազգային և ՎՁԵԲ պահանջների:

Ինչպես նշվել է, օտարվող տարածքներում կիրականացվեն փորման և հողային այլ աշխատանքներ՝ սնուցման, ոռոգման կամ այլ ջրանցքներ տեղադրելու համար: Ստորգետնյա խողովակաշարերի տեղադրումից հետո հողը կլցվի, և տարածքը կվերականգնվի: Նման տարածքները, եթե հարմար են, կարող են օգտագործվել տեղի բնակիչների կողմից որպես արոտավայր:

Շինարարության ընթացքում որոշ վայրերում հնարավոր է մուտքի արգելափակում՝ i) դեպի մասնավոր հողամասեր (ներառյալ գյուղատնտեսական հողամասերը), ii) դեպի համայնքների ընդհանուր ռեսուրսներ (օրինակ՝ արոտավայրեր, գետեր, անտառներ և ոռոգման ջրանցքներ), և iii) սոցիալական ենթակառուցվածքներ և հանրային կառույցներ: Նախատեսվում է, որ շինարարությունից առաջ Ծրագրի բոլոր տեղամասերի համար պետք է մշակվի երթևեկության կառավարման պլան՝ ապահովելու համար տեղի բնակիչների հասանելիությունը հողամասերին, ընդհանուր ռեսուրսներին և հանրային ենթակառուցվածքներին:

Մասնավոր ընկերություններին, ինչպես նաև պետական կազմակերպություններին պատկանող հանրային կոմունալ հաղորդագծերը (գազ, ջուր, Էլեկտրաէներգիա և այլն) և ենթակառուցվածքային կառույցները, որոնք կարող են տուժել, կտեղափոխվեն անհատական տեղափոխման ծրագրերի համաձայն: Նման տեղափոխման ծրագրերը կհամաձայնեցվեն համապատասխան մարմինների հետ և կապահովեն օգտատերերին ծառայությունների անխոչընդոտ մատուցումը:

4.3.3 Շահագործում

Շահագործման և սպասարկման ընթացքում հողերի օտարման և տարաբնակեցման հետ կապված լրացուցիչ ազդեցություններ չեն կանխատեսվում:

Հաշվի առնելով, որ ջրապահպան, Էկոտոնի և անօտարելի գոտիները կօտարվեն Պատվիրատուի կողմից, այդ տարածքներում պահպանվող հողօգտագործման սահմանափակումները չեն ազդի տեղի բնակիչների գործունեության վրա:

5 ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ՎԵՐԱԿԱՆՁՆՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

5.1 Հիմնական սկզբունքներ

Պատվիրատուն ծրագրի իրականացման ընթացքում կկիրառի և կպահպանի հողի օտարման, փոխհատուցման և կենսամակարդակի վերականգնման հետևյալ սկզբունքները՝

- Տարաբնակեցումից պետք է հնարավորինս խուսափել, նվազեցնել, մեղմել և փոխհատուցել:
- Պետք է դիտարկել բոլոր ազդեցությունները՝ ներառյալ ծրագրի օբյեկտների ուղիղ զբաղեցրած տարածքում և խողովակաշարերի երկայնքով հողի օգտագործման սահմանափակման գոտիներում առաջացած ազդեցությունները:
- Եթե հողերի օտարումը անխուսափելի է, նախապատվությունը պետք է տրվի չօգտագործվող պետական հողերի տրամադրմանը:
- Գույքի հարկադիր օտարումը կամ գույքին հասանելիության սահմանափակումը, ինչպես նաև ԱԵԱ-ների և տնտեսավարող սուբյեկտների գույքի ու կորուստների փոխհատուցումը պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությանը և ՎՉԵԲ-ի պահանջներին (տես **Բաժին 2.5**): Ազգային օրենսդրության և ՎՉԵԲ-ի պահանջների տարբերությունների դեպքում կընդունվի ԱԵԱ-ների համար առավել բարենպաստ տարբերակը:
- Ցանկացած փոխհատուցում պետք է համապատասխանի լիարժեք փոխարինման արժեքին՝ ինչպես սահմանված է ՎՉԵԲ ԻՊ5-ում: Արժեքը պետք է որոշվի անկախ, որակավորված և հավատարմագրված գնահատող փորձագետների կողմից:
- ԱԵԱ-ներին (ներառյալ ազդակիր տնային տնտեսություններին) կտրամադրվի ծրագրի վերաբերյալ ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն և իմաստալից մասնակցության հնարավորություններ՝ հողերի օտարման և կենսամակարդակի վերականգնման գործընթացների նախագծման, իրականացման և մշտադիտարկման փուլերում՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի տնային տնտեսությունների և կանանց կարիքներին:
- Այն անձանց, որոնց կենսապահովման միջոցները ենթարկվել են բացասական ազդեցության, կտրամադրվի աջակցություն՝ ազդակիր գործունեության, կենսապահովման միջոցների, կենսամակարդակի և եկամուտների վերականգնման նպատակով:

Այս ՏԾ-ի **Բաժին Error! Reference source not found.**-ում չներառված, բայց ապագայում ծրագրի համար հնարավոր լրացուցիչ հողօտարումները պետք է առաջնորդվեն նույն սկզբունքներով, և դրանց համար պետք է պատրաստվի առանձին ՏՊ:

5.2 Իրավասություն և վերջնաժամկետ

Յուրաքանչյուր ջրամբարի համար փոխհատուցման և կենսապահովման վերականգնման իրավասության առանձին վերջնաժամկետ կսահմանվի: Համապատասխան ՎՉԵԲ ԻՊ 5-ին և ազգային կարգավորումների՝ վերջնաժամկետը կլինի **ազդեցության ենթարկված գույքի/ակտիվների նկարագրության արձանագրությունների երկկողմ ստորագրման օրը**:

Վերջնաժամկետի հայեցակարգը կներկայացվի հանրային խորհրդատվությունների առաջին հանդիպումների ընթացքում (յուրաքանչյուր համայնքում՝ ՏՊ-ների նախապատրաստման մեկնարկին) և կարձանագրվի հանդիպումների արձանագրություններում, ինչպես նաև կհաղորդակցվի անհատական հանդիպումների միջոցով: Բոլոր անձինք, ովքեր մինչև կամ այդ օրը հանդիսանում են ձեռքբերվող հողատարածքների և սահմանափակումների գոտիների սեփականատեր կամ օգտագործող, իրավասու են ճանաչվելու որպես ԱԵԱ և ստանալու համապատասխան փոխհատուցում/տարաբնակեցման աջակցություն:

Այն անձինք, ովքեր զբաղեցրել են Ծրագրի տարածքը վերջնաժամկետից հետո, իրավասու չեն Ծրագրի փոխհատուցման կամ տարաբնակեցման աջակցությանը: Սակայն նրանք կտեղեկացվեն նախապես, և նրանցից կխնդրվի ազատել տարածքը և ապամոնտաժել համապատասխան կառույցները (եթե այդպիսին կան)՝ Ծրագրի իրականացմանը նախորդող ժամանակահատվածում: Վերջնաժամկետից հետո ձեռք բերված հողատարածքներում առաջացած գույքը (օր.՝ շինություններ կամ մշակաբույսեր), ինչպես նաև իրականացված ցանկացած բարելավումներ փոխհատուցման ենթակա չեն:

Փոխհատուցման և կենսապահովման վերականգնման աջակցության իրավասությունը կճշգրտվի՝ ԱԵԱ-ների մարդահամարի, գույքագրման և ՍՏՈՒ հիման վրա:

5.3 Իրավունքների սխեմա

Իրավունքների սխեման սահմանում է փոխհատուցման և կենսամակարդակի վերականգնման սկզբունքները ԱԵԱ-ների տարբեր խմբերի համար՝ կախված Ծրագրի հետևանքով ազդակիր գույքի, ունեցվածքի և կենսապահովման աղբյուրների տեսակից: Համաձայն ՎՁԵԲ պահանջների՝ այն սահմանում է յուրաքանչյուր հնարավոր ազդեցության տեսակին համապատասխան փոխհատուցման սկզբունքները: Իրավունքների կողմնորոշիչ սխեման ներկայացված է ստորև՝ **Աղյուսակ 8**-ում: Սխեման կստուգվի և կճշգրտվի՝ հիմք ընդունելով մանրամասն նախագիծը, ՍՏՈՒ-ն, գույքագրումը, մարդահամարը ու շահագրգիռ ԱԵԱ-ների հետ խորհրդակցությունները:

Աղյուսակ 8. Իրավունքների կողմնորոշիչ սխեմա

| Կորստի տեսակը | Նկարագրություն | Իրավատերը (իրավունքի սուբյեկտը) | Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները |
|---|---|--|---|
| Փոխհատուցում ստանալու իրավունքները | | | |
| 1. Հողի կորուստ | ԱԵԱ-ներ, որոնք կորցնում են իրենց հողամասը (ցանկացած նշանակության) կամ դրա մի մասը | <p>Սեփականատերեր</p> <p>Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ներ</p> <p>Վարձակալ (համայնքային կամ պետական հողամասի վարձակալություն և ենթավարձակալություն)</p> | <p>Դրամական փոխհատուցում փոխարինման լրիվ արժեքով՝ գնահատված շուկայական կամ կադաստրային²⁹ (որն ավելի բարձր է) արժեքին գումարած 15% գումարի չափով:</p> <p>ԿԱՍ</p> <p>Եթե ԱԵՏՏ-ի ապրուստը հիմնված է հողի վրա, համայնքում առկա է նման և բավարար որակի³⁰ հող և պահանջվում է սեփականատիրոջ կողմից, ինչպես նաև համայնքը համաձայն է տրամադրել այդ հողը ԱԵՏՏ-ին, ապա՝ կտրամադրվի հավասար բնութագրերով փոխարինող հողատարածք (հաշվարկված փոխհատուցման սահմաններում՝ ինչպես նշված է վերևում): Այս դեպքում ձեռք բերողը կապահովի ԱԵԱ-ի փոխարինող հողի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը, ինչպես նաև իրավական աջակցություն՝ ըստ անհրաժեշտության:</p> <p>ԵՎ</p> <p>Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռք բերողի կողմից:</p> <p>Օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ները հողի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը գրանցելու դեպքում կփոխհատուցվեն որպես սեփականատեր:</p> <p>ԵՎ</p> <p>Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ հողի գրանցման հետ կապված վճարները և ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, հատուցվելու են ձեռք բերողի կողմից:</p> <p>Օրենսդրությամբ սահմանված դեպքերում, վարձակալը կարող է ձեռք բերել սեփականության իրավունք և դառնալ ազդակիր հողամասի սեփականատեր: Նման դեպքերում, նրանք կփոխհատուցվեն որպես սեփականատեր՝ սեփականության իրավունքը գրանցելուց հետո, (հողի սեփականության իրավունքը ձեռք բերելու հետ կապված վճարները պետք է կատարվեն վարձակալի կողմից),</p> <p>ԿԱՍ</p> <p>Վարձակալին կարող է տրվել նոր փոխարինող վարձակալություն:</p> <p>Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, վարձակալը (և/կամ ենթավարձակալը) պետք է ստանա ազդեցության ենթակա վարձակալված հողի շուկայական արժեքին գումարած 15%-ին համարժեք փոխհատուցումից (վարձակալության մնացած տարիների թվից կախված) հետևյալ մասնաբաժինը՝ 1) մինչև 1 տարի՝ փոխհատուցման արժեքի 5%-ի չափով, 2) մինչև 15 տարի՝ փոխհատուցման արժեքի 14%-ի չափով, 3) մինչև 25 տարի՝ փոխհատուցման արժեքի 20%-ի չափով, 4) 25 և ավելի տարի՝ փոխհատուցման արժեքի 25%-ի չափով:</p> <p>ԵՎ</p> |

²⁹ Կադաստրային արժեքը որոշվում է ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

³⁰ «Նման և բավարար որակի հող» նշանակում է այնպիսի հողատարածք, որը՝ ա) ունի համարժեք գյուղատնտեսական ներուժ, բ) գտնվում է նույն հեռավորության վրա կամ ավելի մոտ ԱԵՏՏ-ի բնակության վայրից կամ ունի հուսալի տրանսպորտային կապ այդ վայրին, գ) ունի նման չափս (մեկ քառ. մետրի դիմաց մեկ քառ.մետր հաշվարկով): Փոխարինող հողի տրամադրումը ներառում է նաև այդ հողի նախապատրաստումը ԱԵՏՏ-ների կողմից օգտագործման համար:

| Կորստի տեսակը | Նկարագրություն | Իրավատերը (իրավունքի սուբյեկտը) | Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները |
|---|--|--|---|
| | | | <p>Հողամասի ձեռք բերման մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի հողի ձեռք բերման պահից առնվազն երեք ամիս առաջ՝ վարձակալին վարձակալության համար այլ հող գտնելու հնարավորություն տալու համար:</p> <p>Մասնավոր հողի վարձակալ (մասնավոր հողամասի վարձակալություն և ենթավարձակալություն)</p> <p>Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի և վարձատուի համաձայնությամբ կատարված անբաժանելի բարելավումների համար կանխիկ փոխհատուցում:</p> <p>ԵՎ</p> <p>Հողամասի ձեռք բերման մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի հողի ձեռք բերման պահից առնվազն երեք ամիս առաջ՝ վարձակալին վարձակալության համար այլ հող գտնելու հնարավորություն տալու համար:</p> <p>Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ</p> <p>Այս ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում միայն հողի վրա կատարված բարելավումների և մշակաբույսերի/ բերքի դիմաց, սույն ՏԸ-ով սահմանված կարգով:</p> |
| | <p>Հողի օգտագործման սահմանափակումներ բուժֆերային / ջրապաշտպան գոտիներում, որոնք չեն ձեռք բերվում: Բուժֆերային գոտին սահմանվում է նախագծով:</p> | <p>Սեփականատերեր և իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ներ</p> | <p>Փոխհատուցում հողի առկա կատեգորիայի և այն նոր կատեգորիայի միջև տարբերության համար, որին ազդակիր հողատարածքը կվերափոխվի.</p> <p>ԿԱՍ</p> <p>Հողամասի այն մասը/երը, որը չի կարող օգտագործվել իր նշանակությամբ՝ պայմանավորված կոմունալ ենթակառուցվածքների, բուժֆերային գոտիների կամ այլ պաշտպանական/ անվտանգության գոտիների պատճառով, կփոխհատուցվի շուկայական արժեքով հողօգտագործման/ սերվիտուտի պայմանագրի հիման վրա:</p> <p>Եթե հողամասը չի կարող օգտագործվել իր նշանակությամբ, քանի որ այն դառնում է տնտեսապես ոչ կենսունակ կամ անհասանելի, ապա ամբողջ հողամասը ձեռք կբերվի փոխարինման լրիվ արժեքով:</p> |
| <p>2. Բնակելի շենքեր, շինությունների կորուստ</p> | <p>Բնակելի շենքեր և շինությունների</p> | <p>Համայնքային հողամաս</p> <p>Համայնք (տեղական ինքնակառավարման մարմին)</p> | <p>Համայնքային հողամասի փոխհատուցում շուկայական կամ կադաստրային (որն ավելի բարձր է) արժեքին գումարած 15% գումարի չափով:</p> <p>ԵՎ</p> <p>Հողի օտարման հետ կապված առաջացած հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցում է ձեռք բերողը:</p> <p>Փոխհատուցում փոխարինման լրիվ արժեքին գումարած 15%-ի չափով, առանց ամորտիզացիոն մասհանումների և գործարքային ծախսերի նվազեցումների:</p> <p>Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար այն դեպքում, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:</p> <p>ԵՎ</p> <p>Եթե տարաբնակեցումը անխուսափելի է, ապա տան ձեռք բերման մասին գրավոր ծանուցումը պետք է տրամադրվի շինության ապամոնտաժումից առնվազն վեց ամիս առաջ՝ բնակիչներին այլ կացարան գտնելու հնարավորություն տալու համար:</p> <p>ԵՎ</p> <p>Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքներողի կողմից:</p> <p>Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի և վարձատուի համաձայնությամբ կատարված անբաժանելի բարելավումների համար դրամական փոխհատուցում:</p> <p>Տան ձեռք բերման մասին գրավոր ծանուցումը պետք է տրամադրվի շինության ապամոնտաժումից առնվազն վեց ամիս առաջ՝ բնակիչներին այլ կացարան գտնելու հնարավորություն տալու համար:</p> |
| | | <p>Վերաբնակեցվող վարձակալ</p> | |

| Կորստի տեսակը | Նկարագրություն | Իրավատերը (իրավունքի սուբյեկտը) | Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները |
|--|---|---|--|
| <p>3. Ոչ բնակելի շենքերի և շինությունների կորուստ (այդ թվում ցանկապատեր, ամբարներ, ծածկեր և այլն):</p> | <p>ԱԵԱ-ների և սեփականության իրավունքով պատկանող և պետական գրանցում ստացած շենք, շինություններ</p> | <p>Սեփականատեր</p> | <p>Շենք, շինության կորստի դեպքում փոխհատուցման տրամադրում փոխարինման լրիվ արժեք գումարած 15%-ի չափով: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասնահանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության ազդեցության ենթակա հատվածի համար գումարած շինության վերանորոգման ծախսերը, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է: ԵՎ Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքներողի կողմից:</p> |
| | <p>ԱԵԱ-ների և սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա առկա ինքնակամ շենքեր և շինություններ</p> | <p>Ինքնակամ շենքը կամ շինությունը կառուցած կամ օգտագործող ԱԵԱ-ներ (որոնք հանդիսանում են հողամասի սեփականատեր)</p> | <p>Ինչպես նկարագրված է վերևում, սակայն շինությունը օրինականացնելուց/գրանցելուց հետո՝ եթե դա հնարավոր է: Եթե հնարավոր չէ, ապա՝ վերականգնման օժանդակություն ինքնակամ շենքի կամ շինության փոխարինման լրիվ արժեքի չափով՝ առանց 15 տոկոս հավելավճարի: ԵՎ Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքներողի կողմից:</p> |
| | <p>Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա առկա ինքնակամ շենք կամ շինություն</p> | <p>Ինքնակամ շենքը կամ շինությունը կառուցած կամ օգտագործող ԱԵԱ-ներ</p> | <p>Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ շենքը կամ շինությունը կառուցած կամ օգտագործող ԱԵԱ-ին կտրամադրվի վերականգնման օժանդակություն՝ ինքնակամ կառույցի փոխարինման լրիվ արժեքի չափով՝ առանց 15 տոկոս հավելավճարի: ԵՎ Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքներողի կողմից:</p> |
| | <p>Օգտագործվող ցանկացած շինություն</p> | <p>Վարձակալներ</p> | <p>Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դիմաց դրամական փոխհատուցում:</p> |
| <p>4. Հանրային շենքի/կառույցի կորուստ</p> | <p>Համայնքային կամ պետական գույք</p> | <p>Համայնք, պետություն</p> | <p>Ազդակիր կառույցի վերակառուցում և նրանց գործառույթների վերականգնում՝ համայնքային/պետական իրավասու մարմինների հետ խորհրդակցելով. ԿԱՍ Կտրամադրվի փոխհատուցում փոխարինման լրիվ արժեքին գումարած 15%-ի չափով, առանց մաշվածության/գործարքի ծախսերի և ապամոտաժված նյութերի:</p> |
| <p>5. Կոմունալ ծառայություններ (գազ, ջուր, էլեկտրականություն և այլն) և մասնավոր կազմակերպությունների և պատկանող ենթակառուցվածքային կառույցներ</p> | <p>Մասնավոր սեփականություն</p> | <p>Կոմունալ ենթակառուցվածքի կամ կառույցի սեփականատերերը կամ օպերատորը</p> | <p>Ազդակիր կառույցի վերակառուցում և նրանց գործառույթների վերականգնում՝ համայնքային/պետական իրավասու մարմինների և ենթակառուցվածքի սեփականատիրոջ կամ օպերատորի հետ խորհրդակցելով: ԿԱՍ Բոլոր նման ենթակառուցվածքները կարտացույցվեն Գլխավոր կապալառուի մանրամասն նախագծում և աշխատանքների ծավալում և կտեղափոխվեն Շրագրի հաշվին: Ազդեցության ենթակա կոմունալ ենթակառուցվածքների տեղափոխման հետևանքով առաջացած ցանկացած գույքի վրա նոր ազդեցությունները կփոխհատուցվեն՝ համաձայն սույն ՏԾ իրավունքների:</p> |
| <p>6. Բերքի և մշակաբույսի կորուստ</p> | <p>Ազդեցության ենթակա կանգուն մշակաբույսեր</p> | <p>Մշակաբույսեր ցանած և բարելավումներ կատարած բոլոր ԱԵՏՏ-ները (անկախ հողի նկատմամբ</p> | <p>Մշակաբույսի փոխհատուցում փոխարինման արժեքով հաշվարկված ընթացիկ միջին շուկայական արժեքով 1 տարվա միջին բերքի համար (տարեկան բերք):</p> |

| Կորստի տեսակը | Նկարագրություն | Իրավատերը (իրավունքի սուբյեկտը) | Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները |
|---|---|--|--|
| | | սեփականության իրավունքներից) | <i>Նշում՝ Եթե բերքի սեփականատերը կարողանում է հավաքել բերքը մինչև հողատարածքի փաստացի ձեռք բերումը ծրագրի համար, ապա փոխհատուցում չի տրամադրվում՝ եթե պատվիրատուն չորոշի տրամադրել փոխհատուցում անկախ այդ հանգամանքից:</i> |
| 7. Ծառերի/այգիների և ստացվող բերքի կորուստ | Ազդեցության ելթակա ծառեր և ստացվող բերք | Բոլոր ԱԵՏՏ-ները, ովքեր Վերջնաժամկետի օրվա դրությամբ մշակում են ծառերը/այգիները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության իրավունքից | Ծառի շուկայական արժեքով հաշվարկված դրամական փոխհատուցում՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա Համայնքային կամ պետական հողերի վարձակալները կամ փաստացի օգտագործողները կստանան իրենց ծառերի համար ամբողջական փոխհատուցում սեփականատիրոջ համաձայնությամբ: |
| 8. Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում | Ձեռնարկատիրական գործունեություն ազդակիր հողի վրա | Բոլոր ԱԵԼ-ները (գործունեությունը տնօրինող/ սեփականատեր)՝ անկախ հարկային հաշվետվությունների/հաշվարկի ներկայացումից և գործունեության իրավական կարգավիճակից | 1. Ձեռնարկատիրական գործունեության (հարկային հաշվետվություններ/հաշվարկներ կայացնող)³¹ ա) մշտական ազդեցության դեպքում (ձեռնարկատիրական գործունեության ընդհատում 1 տարի և ավելի ժամանակահատվածով)՝ միանվագ փոխհատուցում տարեկան զուտ շահույթի /եկամտի չափով. բ) ժամանակավոր ազդեցության դեպքում (ձեռնարկատիրական գործունեության ընդհատում մինչև 1 տարի ժամանակահատվածով)՝ զուտ շահույթի/եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման ամիսների համար: ³² ԵՎ Պետական գրանցման կամ լիցենզիայի վճարները նույնպես կփոխհատուցվեն (եթե այդպիսիք առկա են), բացի այդ գույքի օտարման հետ կապված հարկերը ևս հատուցում է ձեռք բերողը: 2. Ձեռնարկատիրական գործունեության (հարկային հաշվետվությունների/հաշվարկի բացակայության դեպքում) ա) մշտական ազդեցության դեպքում (ձեռնարկատիրական գործունեության ընդհատում 1 տարի և ավելի ժամանակահատվածով)՝ վերականգնման օժանդակություն ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափով (վերջնաժամկետի օրվա դրությամբ ՀՀ օրենքով սահմանված չափով) 1 տարվա համար. բ) ժամանակավոր ազդեցության դեպքում (ձեռնարկատիրական գործունեության ընդհատում մինչև 1 տարի ժամանակահատվածով)՝ վերականգնման օժանդակության տրամադրում, հիմնված ՀՀ նվազագույն աշխատավարձի չափի վրա (վերջնաժամկետի օրվա դրությամբ ՀՀ օրենքով սահմանված չափով)՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով մինչև առավելագույնը 1 տարվա համար: |
| 9. Աշխատանքի կորուստ | Աշխատանքի մշտական կորուստ կամ հարկադիր պարապուրդ (ոչ աշխատողի մեղքով) | Ազդակիր կազմակերպությունում կամ ԱԶ-ում աշխատանքային | 1. Դրամական փոխհատուցում՝ ա) մշտական ազդեցության դեպքում աշխատողի վեց ամսվա միջին ամսական աշխատավարձի չափով (համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի)՝ առանց հարկերի. բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով |

³¹ Կախված տվյալ գործունեության համար գործող հարկման ռեժիմից՝ կկիրառվի կամ զուտ շահույթը, կամ եկամուտը:

³² Եթե ազդեցությունը տևում է ավելի քան 1 տարի, ապա այն համարվում է մշտական:

| Կորստի տեսակը | Նկարագրություն | Իրավատերը (իրավունքի սուբյեկտը) | Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները |
|--|---|--|---|
| | | պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա աշխատող անձինք | մինչև առավելագույնը 6 ամսվա համար, միջին ամսական աշխատավարձի չափով (համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի)՝ առանց հարկերի: Փոխհատուցման ստացման հետ կապված հարկերը հատուցում է ձեռք բերողը: |
| 10. Ժամանակավոր ազդեցություններ | | Բոլոր ժամանակավոր ազդեցություն (որն առաջացել հողօգտագործման սահմանափակումներ հետևանքով) կրող ԱԵԱ/ԱԵՏՏ-եր | Կորուստների/վնասի փոխհատուցումը կտրամադրվի ժամանակավոր ազդեցությունների դեպքում փոխարինման լրիվ արժեքով՝ ՏՀ սահմանված փոխհատուցման իրավունքներին համապատասխան: |
| 11. Չնախատեսված տարաբնակեցման ազդեցություններ (առկայության դեպքում) | | Համապատասխան ազդեցություն կրող ԱԵԱ/ԱԵՏՏ-եր | Ծրագրի իրականացման ընթացքում Ջրային կոմիտեն կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը կամ օժանդակության տրամադրումը, ըստ ՏՀ դրույթների: Շինարարական աշխատանքների ընթացքում Կապալառուի (կամ Ենթակապալառուի) պատճառած վնասը կփոխհատուցվի սույն ՏՀ-ի համաձայն: |
| 12. Բարելավումների դիմաց փոխհատուցում | Բարելավումներ, որոնք ներառված չեն այս իրավունքի սխեմայում, սակայն առկա են ազդեցության ենթարկված հողի վրա (բացառությամբ շարժական գույքի) | Բարելավումները կատարած ԱԵԱ-ներ | Դրամական փոխհատուցում փոխարինման արժեքով: |
| 13. Տեղափոխման օժանդակություն | Տեղափոխման օժանդակություն | Բոլոր ԱԵԱ , ովքեր ունեն շարժական գույք, որը պետք է տեղափոխվի՝ անկախ սեփականության իրավունքից | Տեղափոխման, բեռնման/բեռնաթափման ծախսերը հոգալու համար դրամական օժանդակություն (կորոշվի տվյալ տարածքում շուկայի ուսումնասիրության հիման վրա և կտրամադրվի որպես միանվագ վճար): |
| 14. Խաչքարեր (մահացած անձանց հիշատակին նվիրված հուշարձաններ) | Խաչքարեր, որոնք գտնվում են ձեռք բերվող տարածքում | Անձինք, ովքեր կառուցել են և հոգ են տանում խաչքարի պահպանության համար | Ազդակիր խաչքարերի տեղափոխում՝ Ծրագրի հաշվին՝ համաձայնեցված խաչքարի խնամատար ընտանիքների և տեղական իշխանությունների հետ: |
| Կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները | | | |

| Կորստի տեսակը | Նկարագրություն | Իրավատերը (իրավունքի սուբյեկտը) | Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները |
|--|--|---|---|
| 1. Օժանդակություն գզալի ազդեցությունների դեպքում/ կենսամիջոցների վերականգնում | Տեղահանվող ԱԵՏՏ (Ֆիզիկապես տեղահանված ԱԵՏՏ-ներ) | Զգալի ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ, ներառյալ իրավական որևէ կարգավիճակ չունեցող անձինք՝ ինչպես սահմանված է ձախ կողմում | Վերականգնման օժանդակություն վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներին՝ վեց ամսվա նվազագույն աշխատավարձի (սույն նվազագույն աշխատավարձը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ) չափով: |
| | ԱԵՏՏ-եր, ովքեր կորցնում են գյուղատնտեսական բերք Եկամուտ ստեղծող գույք կորցնող ԱԵՏՏ-եր և ձեռնարկատիրական գործունեությունից զրկվող ԱԵՏՏ-եր | | Լրացուցիչ դրամական փոխհատուցում՝ ազդեցության ենթակա հատվածում առկա 1 տարվա բերքի չափով: Վերականգնման օժանդակություն՝ վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներին՝ վեց ամսվա նվազագույն աշխատավարձի (սույն նվազագույն աշխատավարձը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ) չափով: |
| 2. Օժանդակություն խոցելի ԱԵԱ/ԱԵՏՏ - ներին | | Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող, կանանց, տարեց կամ հաշմանդամ անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ | Դրամական օժանդակության տրամադրում՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի (սույն նվազագույն աշխատավարձը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ) չափով: Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց կտրվի նախապատվություն: ԵՎ Աջակցություն խոցելի անձանց, մասնավորապես՝ <ul style="list-style-type: none"> - Իրավական տեղեկատվության և իրավական աջակցության հասանելիություն հողերի ձեռք բերման և բանակցային գործընթացի ընթացքում, ներառյալ հողատարածքների և սեփականատերերի նույնականացման փուլում: - Անհատական հանդիպումների կազմակերպում՝ իրավունքների և փոխհատուցման իրավասուության չափանիշների, փոխհատուցման համաձայնագրերի դրույթների, ինչպես նաև բողոքարկման հնարավորությունների վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար: - Ֆիզիկապես վերաբնակեցվող անձանց համար՝ այլընտրանքային բնակության ապահովմանն ուղղված հատուկ աջակցություն, իսկ եթե ԱԵՏՏ-ում կան հաշմանդամություն ունեցող անձինք՝ ապահովել, որ նոր բնակարանը մատչելի լինի հաշմանդամության տեսանկյունից, անհրաժեշտության դեպքում կազմակերպել և ֆինանսավորել մատչելիության բարելավման աշխատանքները՝ յուրաքանչյուր դեպքը անհատապես ուսումնասիրելով: - Վճարման գործընթացում աջակցություն (փոխհատուցումը կատարող բանկ հասնելու փոխադրամիջոցների տրամադրում, վճարման ընթացակարգում աջակցություն և/կամ բանկային հաշիվ բացելու աջակցություն՝ անհրաժեշտության դեպքում, ֆինանսական կառավարման վերաբերյալ իրազեկում և վերապատրաստում, ինչպես նաև պետական աջակցության ծրագրերի ու կենսաթոշակների վերաբերյալ իրազեկում): - Կենսամիջոցների վերականգնման ծրագրերում առաջնահերթության տրամադրում՝ ներառյալ զբաղվածության բարձրացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ և |

| Կորստի տեսակը | Նկարագրություն | Իրավատերը (իրավունքի սուբյեկտը) | Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները |
|---|--|--|--|
| | | | <p>ինարավորության դեպքում ու ըստ շինարարական կազմակերպությունների գործառնական պահանջների՝ աշխատատեղերում նախապատվության տրամադրում:</p> <ul style="list-style-type: none"> - Գոյություն ունեցող պետական և համայնքային սոցիալական աջակցության մարմինների հետ համագործակցություն՝ խոցելի անձանց ապահովելու համար այն նպաստներով, որոնց իրենք իրավասու են՝ գործող պետական աջակցության ծրագրերի շրջանակում: |
| <p>3. Կենսամիջոցների վերականգնման աջակցություն</p> | <p>Կենսամիջոցների վրա ազդեցությունները, որոնք ներառված չեն այս իրավունքների սխեմայում, սակայն կարող են ի հայտ գալ ՍՏԻ -ի ընթացքում</p> | <p>ԱԵԱ-ներ, որոնց կենսամիջոցները ենթարկվում են ազդեցության</p> | <p>Կենսամիջոցների վերականգնման միջոցառումների իրականացում սույն ՏԾ-ի և ՎՁԵԲ պահանջներին համապատասխան, ինչպես մանրամասն ներկայացված Է ստորև Բաժին 2.2 -ում:</p> |

5.4 Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություն ստանալու իրավունքները

Ծրագրի հետ կապված հողերի օտարման հողօգտագործման սահմանափակումներ հետևանքով ազդեցություն կրող ԱԵԱ-ների փոխհատուցման իրավունքները պետք է ներառեն հողի, շինությունների, բերքի/մշակաբույսերի, ծառերի և բարելավումների մշտական և ժամանակավոր կորստի վերաբերյալ դրույթներ և վերաբնակեցման օժանդակություններ, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության դադարեցման համար փոխհատուցում՝ հարկերի մասին հաշվետվությունների հիման վրա կամ միանվագ դրամական օժանդակություն վճարելու միջոցով:

Տնտեսական տեղահանման իրավունքները ներառում են կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ և սահմանվում են ֆիզիկական տեղահանման և ակտիվների կորստի փոխհատուցումներից առանձին: Ծրագրի ազդեցությունները, որոնք հանգեցնում են տնտեսական տեղահանման, կարող են ներառել գործողություններ, որոնք ազդում են ԱԵԱ/ԱԵՏՏ-երի (ներառյալ ձեռնարկությունները) ապրուստ վաստակելու միջոցների վրա, ինչպիսիք են՝ աշխատողների աշխատավարձը, ծառայությունների մատուցումը, ապրանքների արտադրությունը, հողից կամ տարածքներից վարձավճարները, բերքից կամ անասնապահությունից եկամուտը, սեփական սպառման համար ապրանքները կամ մնուկը և պետական տարբեր նպաստները:³³

ԱԵՏՏ-ների/ԱԵԱ-ների վրա նման տնտեսական տեղահանման ազդեցությունների չափը, ինչպես նաև նրանց կենսամակարդակի փոփոխությունները կորոշվի ՏՊ-ի պատրաստման ընթացքում ՍՏՌ արդյունքների հիման վրա: Այն ԱԵՏՏ/ԱԵԱ-ները, որոնք կազմվեն տնտեսական տեղահանման ազդեցություններից և կենսամակարդակի փոփոխություններից, իրավասու կլինեն ստանալու կենսամիջոցների վերականգնման օժանդակություն, ինչպես նախատեսված է սույն ՏԾ-ում: Իրավունքների սխեման (**Աղյուսակ 8**) նաև նախատեսում է կենսամիջոցների վրա որոշ ազդեցություններից խուսափելու և դրանք նվազեցնելու միջոցներ, օրինակ՝ թույլ տալով բերքահավաքը մինչև հողը ձեռք բերողի կողմից զբաղեցնելը: Այս իրավունքները հետևյալն են.

5.4.1 Փոխհատուցման իրավունքներ

5.4.1.1 Հողի կորուստ

ա. Հողի կորուստը կփոխհատուցվի՝ 1) շուկայական արժեք գումարած 15%-ի չափով, կամ 2) եթե ԱԵՏՏ-ի ապրուստը հիմնված է հողի վրա, համայնքում առկա է նման և բավարար որակի հող և պահանջվում է սեփականատիրոջ կողմից, ինչպես նաև համայնքը համաձայն է տրամադրել այդ հողը ԱԵՏՏ-ին, ապա կտրամադրվի հավասար բնութագրերով փոխարինող հողատարածք (հաշվարկված փոխհատուցման սահմաններում՝ ինչպես նշված է վերևում): Այս դեպքում ձեռք բերողը կապահովի ԱԵԱ-ի փոխարինող հողի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը: «Նման և բավարար որակի հող» նշանակում է այնպիսի հողատարածք, որը՝ ա) ունի համարժեք գյուղատնտեսական ներուժ, բ) գտնվում է նույն հեռավորության վրա կամ ավելի մոտ ԱԵՏՏ-ի բնակության վայրից կամ ունի հուսալի տրանսպորտային կապ այդ վայրին, գ) ունի նման չափս (մեկ քառ.մետրի դիմաց մեկ քառ.մետր հաշվարկով): Փոխարինող հողի տրամադրումը ներառում է նաև այդ հողի նախապատրաստումը ԱԵՏՏ-ների կողմից օգտագործման համար: Վերջնական որոշումները պետք է ընդունվեն մասնակցային մոտեցման հիման վրա և փաստաթղթավորվեն:

Հողի չօտարվող հատվածները, որոնք սեփականատիրոջ համար կորցնում են տնտեսական կամ գործառույթային այն նշանակությունը, որն ունեին մինչև օտարվող մասի օտարումը կամ գույքի չօտարվող այն մասը, որը օտարվող մասի համեմատությամբ

³³ Օրինակ՝ ԱԵՏՏ-ները / ԱԵԱ-ները կարող են զրկվել պետական գործազրկության նպաստներից կամ կոմունալ ծառայությունների սուբսիդիաներից, եթե նրանք ստացել են եկամուտ:

աննշան է, ևս կարող է օտարվել, եթե դրա օտարման պահանջն ԱԵԱ-ի կողմից ներկայացվել է օրենքով սահմանված կարգով և ժամկետում և ձեռք բերողի կողմից ընդունվել է օրենքով սահմանված կարգով: Եթե ազդեցության է ենթարկվել մշակվող գյուղատնտեսական նշանակության հողը, ԱԵԱ-ները (սեփականատերերը, վարձակալները, հողօգտագործողները) պետք է զգալի ազդեցության համար լրացուցիչ կենսամիջոցների աջակցության (անցումային) օժանդակություն ստանան, որը համարժեք է կորցրած հողից ստացված բերքի տարեկան միջին եկամտի շուկայական արժեքին:

բ. Այն ԱԵԱ-ները, որոնց սեփականության իրավունքը ազդակիր հողամասի նկատմամբ ենթակա են ձևակերպման և պետական գրանցման (այսուհետ՝ օրինականացման), կարող են ձևակերպել իրենց իրավունքները, որից հետո նրանց կորուստներն ամբողջությամբ պետք է փոխհատուցվեն այնպես, ինչպես սեփականատերերինը: Այն ԱԵԱ-ները, որոնց իրավունքները չեն կարող օրինականացվել կամ այն ԱԵԱ-ները, որոնք ազդակիր հողն օգտագործում են առանց դրա նկատմամբ գրանցված իրավունքների (չձևակերպված օգտագործող) կստանան փոխհատուցում միայն հողի վրա առկա մշակաբույսերի (բերքի) և բարելավումների համար:

գ. Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալները (ևսև ենթավարձակալները), օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, կարող են ձեռք բերել հողամասի նկատմամբ սեփականության իրավունք և փոխհատուցվել որպես լիարժեք սեփականատեր և հողի սեփականության իրավունքը ձեռք բերելու հետ կապված վճարները պետք է վճարվեն վարձակալի կողմից: Նրանք նաև կստանան կենսամիջոցների վերականգնման օժանդակություն, ինչպես ներկայացված է ստորև (Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ների համար): Եթե դա հնարավոր չէ, նրանց կարող է տրվել նոր փոխարինող վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ իրականացնել, ապա վարձակալները (ևսև ենթավարձակալները) կստանան շուկայական արժեքին գումարած 15%-ին համարժեք փոխհատուցումից (վարձակալության մնացած տարիների թվից կախված) հետևյալ մասնաբաժինը՝ ա) մինչև 1 տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 5%-ի չափով, բ) մինչև 15 տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 14%-ի չափով, գ) մինչև 25 տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 20%-ի չափով, դ) 25 և ավելի տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 25%-ի չափով:

դ. Մասնավոր հողի վարձակալներին և ենթավարձակալներին կտրամադրվի դրամական փոխհատուցում արդեն վճարված վարձավճարի չօգտագործված մասի և վարձատուլի համաձայնությամբ կատարված անբաժանելի բարելավումների համար:

ե. Հողօգտագործողները (գրանցված և չգրանցված) նաև կստանան փոխհատուցում առկա մշակաբույսերի համար:

զ. Հողօգտագործողներին (գրանցված և չգրանցված) հողամասի ձեռք բերման մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի հողի ձեռք բերման պահից առնվազն երեք ամիս առաջ՝ հողօգտագործողներին օգտագործման համար այլ հող գտնելու հնարավորություն տալու համար:

է. Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքբերողի կողմից:

ը. Հողամասի օգտագործման սահմանափակման դեպքում, սեփականատերերը և իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ները կփոխհատուցվեն շուկայական արժեքով հողօգտագործման/ սերվիտուտի պայմանագրի հիման վրա հողամասի այն մասի/երի համար, որը չի կարող օգտագործվել իր նշանակությամբ՝ պայմանավորված կոմունալ ենթակառուցվածքների, բուժֆերային գոտիների կամ այլ պաշտպանական/ անվտանգության գոտիների պատճառով: Եթե հողամասը չի կարող օգտագործվել իր նշանակությամբ, քանի որ այն դառնում է տնտեսապես ոչ կենսունակ կամ անհասանելի, ապա ամբողջ հողամասը ձեռք կբերվի փոխարինման լրիվ արժեքով: Հակառակ դեպքում փոխհատուցման արժեքը կարող է հիմնվել հողի առկա կատեգորիայի և այն նոր կատեգորիայի միջև տարբերության վրա, որին ազդակիր հողատարածքը կվերափոխվի:

թ. Համայնքային հողամասը կփոխհատուցվի շուկայական արժեքով՝ գումարած 15%:

5.4.1.2 Բնակելի շենք, շինությունների կորուստ

ա. Բնակելի տուն կորցնող ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում՝ փոխարինման արժեքով գումարած 15%-ի չափով՝ անկախ շենք, շինության նկատմամբ ԱԵԱ-ների գրանցված իրավունքներից կամ գույքի իրավական կարգավիճակից: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց մաշվածության (ամորտիզացիոն) մասնահանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների՝ անկախ ազդեցության ենթակա գույքի գրանցման կամ հաշվառման հանգամանքից: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար այն դեպքում, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:

բ. Վերաբնակեցվող վարձակալներին կտրվի դրամական փոխհատուցում արդեն վճարված վարձավճարի չօգտագործված մասի և վարձատուի համաձայնությամբ կատարված անբաժանելի բարելավումների համար դրամական փոխհատուցում: Վերաբնակեցվող ԱԵՏՏ-ին կտրվի նաև վերաբնակեցման և զգալի ազդեցություն կրելու օժանդակություն՝ ՏՇ-ով սահմանված կարգով:

գ. Տան օտարման մասին գրավոր ծանուցումը պետք է տրամադրվի շինության ապամոնտաժումից առնվազն վեց ամիս առաջ՝ բնակիչներին այլ կացարան գտնելու հնարավորություն տալու համար:

դ. Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքբերողի կողմից:

5.4.1.3 Ոչ բնակելի շենքեր և շինությունների կորուստ

ա. Ոչ բնակելի շենքերի և շինությունների (բացառությամբ ինքնակամ կառույցների) համար փոխհատուցում պետք է տրամադրվի փոխարինման արժեքին գումարած 15%-ի չափով: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության ազդեցության ենթակա հատվածի համար գումարած շինության վերանորոգման ծախսերը, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է:

բ. ԱԵԱ-ներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող ինքնակամ ոչ բնակելի ինքնակամ կառույցների կորստի դիմաց ԱԵԱ-ին կտրամադրվի դրամական փոխհատուցում ինչպես նշված է վերևում, սակայն շինությունը օրինականացնելուց/գրանցելուց հետո՝ եթե դա հնարավոր է: Եթե հնարավոր չէ, ինքնակամ կառույցը կառուցած կամ օգտագործող ԱԵԱ-ին (ով կարող է լինել հողամասի սեփականատերը) կտրամադրվի վերականգնման օժանդակություն ինքնակամ շենքի կամ շինության փոխարինման լրիվ արժեքի չափով (ոչ պակաս, քան շուկայական արժեքը)՝ առանց 15 տոկոս հավելավճարի:

գ. Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառույց կառուցած կամ օգտագործող ԱԵԱ-ներին կտրամադրվի վերականգնման օժանդակություն՝ ինքնակամ շենքի կամ շինության փոխարինման արժեքի չափով (ոչ պակաս, քան շուկայական արժեքը)՝ առանց 15 տոկոս հավելավճարի:

դ. Ոչ բնակելի շինություններից տեղահանվող վարձակալներին կտրվի դրամական փոխհատուցում արդեն վճարված վարձավճարի չօգտագործված մասի համար:

ե. Սույն ենթակետի «բ» պարբերության մեջ նշված դեպքում ինքնակամ շինության օրինականացման/գրանցման պահանջը պարտադիր չէ:

զ. Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռք բերողի կողմից:

5.4.1.4 Հանրային գույքի կորուստ

Հանրային գույքը՝ համայնքային և պետական կառույցները և հանրային ենթակառուցվածքները, պետք է վերակառուցվեն և նրանց գործառույթները պետք է վերականգնվեն՝ համայնքային/ պետական իրավասու մարմինների հետ խորհրդակցելով: Եթե դա անհնար է կամ ապացուցվել է, որ դա անիրաժեշտ չէ, ապա՝ համայնքային շենքի կամ շինության դիմաց պետք է տրամադրվի փոխհատուցում փոխարինման լրիվ արժեքին գումարած 15%-ի չափով, առանց մաշվածության/ գործարքի ծախսերի և ապամոտաժված կյուրերի:

5.4.1.5 Կոմունալ ծառայություններ (գազ, ջուր, էլեկտրականություն և այլն) և մասնավոր կազմակերպություններին պատկանող ենթակառուցվածքային կառույցներ

Կոմունալ ծառայությունները (գազ, ջուր, էլեկտրականություն և այլն) և մասնավոր կազմակերպություններին պատկանող ենթակառուցվածքային կառույցները պետք է վերակառուցվեն և նրանց գործառույթները պետք է վերականգնվեն՝ համայնքային/ պետական իրավասու մարմինների և ենթակառուցվածքի սեփականատիրոջ կամ օպերատորի հետ խորհրդակցելով:

Բոլոր նման ենթակառուցվածքները կարտացոլվեն Գլխավոր կապալառուի մանրամասն նախագծում և աշխատանքների ծավալում և կտեղափոխվեն Ծրագրի հաշվին:

Ազդեցության ենթակա կոմունալ ենթակառուցվածքների տեղափոխման հետևանքով առաջացած ցանկացած գույքի վրա նոր ազդեցությունները կփոխհատուցվեն՝ համաձայն սույն ՏԾ իրավունքների:

5.4.1.6 Բերքի և մշակաբույսի կորուստ

Բերքի և մշակաբույսի կորուստի համար կտրամադրվի մեկ տարվա միջին բերքի (տարեկան բերք) ընթացիկ միջին շուկայական արժեքին համապատասխան փոխհատուցում այն ԱԵԱ/ ԱԵՏՏ-երին (սեփականատեր, վարձակալ, փաստացի հողօգտագործող), ով օգտագործում և մշակում է հողամասը վերջնաժամկետի դրությամբ: Նշված փոխհատուցման դրույթները կիրառելի չեն ծառերի և դրանցից ստացվող բերքի փոխհատուցման նկատմամբ (տես՝ ստորև ենթակետը): Եթե բերքի սեփականատերը կարողանում է հավաքել բերքը մինչև հողատարածքի փաստացի ձեռք բերումը Ծրագրի համար, ապա փոխհատուցում չի տրամադրվում՝ եթե պատվիրատուն չորոշի տրամադրել փոխհատուցում անկախ այդ հանգամանքից:

5.4.1.7 Ծառերի, այգիների և ստացվող բերքի կորուստ

Ծառերի և ստացվող բերքի համար հողի սեփականատերերին, վարձակալներին և փաստացի օգտագործողներին պետք է տրվի փոխհատուցում շուկայական արժեքին համապատասխան, հիմնվելով ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության ցուցանիշների վրա, հետևյալ կարգով՝

ա. համայնքային կամ պետական հողերի սեփականատերերը կստանան ծառերի համար ամբողջական փոխհատուցում, եթե առկա վարձակալն իրավասու չէ փոխհատուցում ստանալու համաձայն սույն ենթակետի «բ» պարբերության, կամ առկա փաստացի օգտագործողը իրավասու չէ փոխհատուցում ստանալու համաձայն սույն ենթակետի «գ» պարբերության.

բ. եթե հողամասը ծանրաբեռնված է վարձակալությամբ, ապա ծառերի համար ամբողջական փոխհատուցումը կտվի վարձակալին, եթե ծառերը մշակվում են վարձակալի կողմից՝ հողամասի սեփականատիրոջ համաձայնությամբ.

գ. եթե համայնքային կամ պետական հողերը փաստացի՝ առանց իրավաբանական ձևակերպման, օգտագործվում են սեփականություն կամ գույքային իրավունք չունեցող անձի կողմից, ապա ծառերի համար ամբողջական փոխհատուցումը կտրամադրվի հողամասը փաստացի օգտագործողին:

դ. Բոլոր ԱԵԱ-ները, ովքեր կորցնում են ծառեր՝ անկախ հողի սեփականության/օգտագործման կարգավիճակից կփոխհատուցվեն **Բաժին** **Error!**
Reference source not found. համաձայն:

5.4.1.8 Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում

Ձեռնարկատիրական գործունեության մշտական և ժամանակավոր դադարեցման դեպքում (որն առաջացել է ծրագրի հետ կապված հողերի օտարման կամ հողօգտագործման սահմանափակումների հետևանքով) տրամադրվում է փոխհատուցում՝ հարկային հաշվետվությունների/ հաշվարկի հիման վրա հետևյալ կարգով՝

ա. ձեռնարկատիրական գործունեության մշտական (1 տարի և ավելի) դադարեցման դեպքում կտրամադրվի փոխհատուցում մեկ տարվա զուտ շահույթի/եկամտի չափով՝ հարկային հաշվետվությունների/հաշվարկի հիման վրա.

բ. ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման (մինչև 1 տարի) դեպքում կտրամադրվի փոխհատուցում ամսական զուտ շահույթի/եկամտի չափով, հարկային հաշվետվությունների/հաշվարկի հիման վրա՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով.

գ. պետական գրանցման և լիցենզիայի վճարները նույնպես պետք է փոխհատուցվեն (եթե առկա են), բացի այդ գույքի օտարման հետ կապված հարկերը, տուրքերը և այլ վճարները ևս հատուցում է ձեռք բերողը:

Հարկային հաշվետվությունների/հաշվարկի բացակայության դեպքում, ձեռնարկատիրական գործունեության մշտական և ժամանակավոր դադարեցման համար փոխհատուցումը կիրականացվի վերոնշյալ սկզբունքով, սակայն հիմք ընդունելով ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձը (վերջնաժամկետի օրվա դրությամբ ՀՀ օրենքով սահմանված չափով):

Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման ամիսների քանակը և մշտական դադարեցման ամսաթիվը որոշվում են հիմնվելով ձեռնարկատիրական գործունեության վրա ազդող շինարարական աշխատանքների տևողության վրա:

5.4.1.9 Աշխատանքի կորուստ

ա. Ազդեցության ենթակա կազմակերպությունում կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ աշխատող ԱԵԱ-ների աշխատանքի մշտական կորստի դեպքում տրամադրվում է դրամական փոխհատուցում՝ աշխատողին 6 ամսվա միջին ամսական աշխատավարձի չափով (ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված)՝ առանց հարկերի, եթե աշխատանքային պայմանագիրը (հարաբերությունը) դադարում է ազդակիր հողում գործունեության մշտական դադարեցման հետևանքով: Վերոհիշյալ փոխհատուցումը կտրամադրվի այն աշխատողներին, որոնք վերջնաժամկետի դրությամբ առնվազն երկու ամսվա աշխատող են, գործունեության դադարեցման ամսաթվի դրությամբ հանդիսանում են տվյալ կազմակերպության կամ ԱԶ-ի աշխատակից և կներկայացնեն աշխատանքային հարաբերության դադարեցումը փաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան փաստաթուղթ:

բ. Աշխատանքի ժամանակավոր կորստի դեպքում (հարկադիր պարապուրդ) դրամական փոխհատուցում կտրվի նույն հիմունքներով՝ աշխատանքի հարկադրված դադարեցման (պարապուրդի) ամիսների համար՝ մինչև 6 ամիս:

գ. Փոխհատուցման ստացման հետ կապված հարկերը հատուցում է ձեռք բերողը:

դ. Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման ամիսների քանակը և մշտական դադարեցման ամսաթիվը որոշվում են հիմնվելով ձեռնարկատիրական գործունեության վրա ազդող շինարարական աշխատանքների տևողության վրա:

5.4.1.10 Ժամանակավոր ազդեցություններ

Ժամանակավոր ազդեցություն (որն առաջացել է հողօգտագործման սահմանափակումներ հետևանքով) կրող անձանց և տնային տնտեսություններին կտրամադրվի վնասների փոխհատուցում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ սույն ՏՇ Իրավունքների սխեմայով սահմանված փոխհատուցման իրավունքներին համապատասխան: Ժամանակավոր ազդեցություն կրող անձինք և տնային տնտեսություններին տրամադրվող փոխհատուցումը չի ներառի ՏՇ-ով սահմանված վերականգնման օժանդակությունները:

5.4.1.11 Չնախատեսված տարաբնակեցման ազդեցություններ (առկայության դեպքում)

Ծրագրի իրականացման ընթացքում Ջրային կոմիտեն կանդրադառնա չնախատեսված տարաբնակեցման ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը կամ օժանդակության տրամադրումը, ըստ ՏՇ դրույթների:

Չնախատեսված ազդեցությունների դեպքում կկիրառվեն ՏՇ-ով սահմանված բոլոր ընթացակարգերը (սոցիալական ազդեցության գնահատում և այլ անհրաժեշտ հետազոտություններ և իրավական ընթացակարգեր, ներառյալ թարմացված ՏՊ կամ ՏՊ հավելվածի պատրաստում (անհրաժեշտության դեպքում)):

Շինարարական աշխատանքների ընթացքում Կապալառուի (կամ ենթակապալառուի) պատճառած վնասը կփոխհատուցվի սույն ՏՇ-ի համաձայն:

5.4.1.12 Բարելավումների դիմաց փոխհատուցում

Բարելավումները, որոնք ներառված չեն իրավունքի սխեմայում, սակայն առկա են ազդեցության ենթարկված հողի վրա (բացառությամբ՝ շարժական գույքի) կփոխհատուցվեն փոխարինման լրիվ արժեքով:

5.4.1.13 Տեղափոխման օժանդակություն

ա) Տարաբնակեցման օժանդակություն՝ իրենց բնակության վայրից տեղահանված ԱԵՏՏ-երին (ներառյալ վարձակալները), կտրամադրվի տրանսպորտային ծախսերը հոգալու համար բավարար տարաբնակեցման օժանդակություն (կորոշվի տվյալ տարածքում շուկայի ուսումնասիրության հիման վրա և կտրամադրվի որպես միանվագ վճար):

բ) Շարժական գույքի տեղափոխման ծախսեր՝ ԱԵՏՏ-եր, որոնք ազդակիր հողամասում կամ շենքում ունեն շարժական գույք, որը պետք է տեղափոխվի՝ անկախ հողի կամ շենքի նկատմամբ իրավունքից, կստանան դրամական օժանդակություն շարժական գույքը տեղափոխելու բոլոր տրանսպորտային ծախսերը հոգալու համար:

5.4.1.14 Խաչքարեր (մահացած անձանց հիշատակին նվիրված

Եթե օտարման ենթակա տարածքում խաչքարեր հայտնաբերվեն, ապա դրանք կտեղափոխվեն Ծրագրի հաշվին՝ համաձայնեցված խաչքարի խնամատար ընտանիքների (ով տեղադրել և հոգ է տանում խաչքարի մասին) և տեղական իշխանությունների հետ: Սովորաբար նման խաչքարերը տեղադրվում են համայնքային հողերում, հետևաբար անհրաժեշտ կլինի տեղական իշխանությունների հետ համաձայնեցնել այլընտրանքային համայնքային հողի տրամադրումը օգտագործման համար: Նման ազդեցության դեպքում փոխհատուցում կամ կենսապահովման վերականգնման իրավունքներ նախատեսված չեն:

5.4.2 Կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները

Կենսամիջոցների վերականգնման օժանդակությունները ենթակա են պարզաբանման ՏՊ-ում՝ հիմնվելով USՀ-ի և գույքագրման արդյունքների վրա:

5.4.2.1 Հողի կորստի պատճառով եկամտի և/կամ ապրուստի միջոցների կորուստ

Կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը կորամադրվի գյուղատնտեսությամբ զբաղվող ԱԵԱ-ներին (սեփականատերեր և իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ներ /վարձակալներ, ովքեր կարող են ձեռք բերել սեփականության իրավունք՝

- գյուղատնտեսական փորձագետի կողմից արդյունավետ/բարելավված գյուղատնտեսություն վարելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում.
- վարձակալելու կամ ձեռք բերելու հնարավորություն (ունենան գնման կամ վարձակալելու նախապատվություն).
- դեպի արտադրական ռեսուրսներ և շուկաներ հասանելիության դյուրացում.
- աջակցություն ձեռք բերման նպատակով այլընտրանքային հողատարածք գտնելու համար.

Կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը կորամադրվի հողամասը գյուղատնտեսական նպատակով օգտագործող վարձակալներին (ու՛մ ապրուստի միջոցները հիմնված են հողի վրա՝

- աջակցություն օգտագործման նպատակով այլընտրանքային հողատարածք գտնելու համար.
- գյուղատնտեսական փորձագետի կողմից արդյունավետ/բարելավված գյուղատնտեսություն վարելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում:

Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ-ներին կորամադրվի կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը՝

- աջակցություն ԱԵԱ-ներին գրանցման հարցում, որպեսզի նրանք համայնքից հող վարձակալելու կամ ձեռք բերելու հնարավորություն (ունենան գնման կամ վարձակալելու նախապատվություն).
- գյուղատնտեսական փորձագետի կողմից արդյունավետ/բարելավված գյուղատնտեսություն վարելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում:

5.4.2.2 Բնակելի շենքերի և շինությունների կորստի պատճառով եկամտի և/կամ ապրուստի միջոցների կորուստ

Տարաբնակեցված տնային տնտեսությունները նաև կստանան կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը՝

- աջակցություն բնակության վայրի գրանցման և նոր բնակելի վայրում կոմունալ ծառայություններին միացման հարցում.
- բնակության տարածքի փոփոխման դեպքում՝ աջակցություն սոցիալական ենթակառուցվածքներին հասանելիության հարցում (օրինակ՝ գրանցում նոր դպրոցում, մանկապարտեզում կամ պոլիկլինիկաներում).
- աջակցություն զբաղվածության հասանելիության հարցում (շինարարության ընթացքում):

Տարաբնակեցված վարձակալները նաև կստանան կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը՝

- աջակցություն այլ վայրում բնակվելու համար նոր վարձակալություն գտնելու հարցում:

5.4.2.3 Ոչ բնակելի շենքերի ու շինությունների և ենթակառուցվածքի կորստի պատճառով եկամտի և/կամ ապրուստի միջոցների կորուստ

Ազդակիր ոչ բնակելի շենքերի սեփականատերերը կստանան կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը՝

- աջակցություն գույքի տեղափոխման թույլտվությունների ապահովմանը և խորհրդատվության տրամադրում, եթե պահանջվում են նոր շինարարական թույլտվություններ/էլեկտրաէներգիայի կամ ջրի վերամիացումներ:

Ոչ բնակելի շինությունների տեղահանված վարձակալները կստանան կենսամիջոցների վերականգնման օժանդակություն նոր վարձակալություն գտնելու հարցում աջակցության տեսքով:

5.4.2.4 Մշակաբույսի կորստի պատճառով եկամտի և/կամ ապրուստի միջոցների կորուստ

Մշակաբույսեր ցանած և բարելավումներ կատարած բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության իրավունքներից, նաև կստանան կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը՝

- հողը ձեռք բերողի կողմից զբաղեցնելուց առաջ բերքահավաքի հնարավորություն.
- աջակցություն օգտագործման նպատակով այլընտրանքային հողատարածք գտնելու համար՝ եթե կիրառելի է.
- գյուղատնտեսական փորձագետի կողմից արդյունավետ/բարելավված գյուղատնտեսություն վարելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում:
- աջակցություն զբաղվածության հասանելիության հարցում (շինարարության ընթացքում):

5.4.2.5 Ծառերի/այգիների և ստացվող բերքի կորստի պատճառով եկամտի և/կամ ապրուստի միջոցների կորուստ

Բոլոր ԱԵՏՏ-ները, ովքեր ունեն ծառեր/այգիներ և կատարել են բարելավումներ՝ անկախ հողի նկատմամբ սեփականության իրավունքից, կստանան կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը՝

- խորհրդատվություն այն շուկաների վերաբերյալ, որտեղ կարելի է գնել պտղատու ծառերի տնկիներ, և խորհրդատվություն սելեկցիայի և խնամքի վերաբերյալ.
- գյուղատնտեսական փորձագետի կողմից արդյունավետ/բարելավված գյուղատնտեսություն վարելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում:
- աջակցություն զբաղվածության հասանելիության հարցում (շինարարության ընթացքում):

5.4.2.6 Աշխատանքի կամ ձեռնարկատիրական գործունեության կորստի պատճառով եկամտի և/կամ ապրուստի միջոցների կորուստ

Ձեռնարկատիրական գործունեություն կորցնող կամ ազդակիր կազմակերպությունում կամ ԱԶ-ում աշխատանքային պայմանագրի (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի) հիման վրա աշխատող ԱԵԱ-ները կստանան:

ա) Աշխատանքի կամ Ձեռնարկատիրական գործունեության մշտական կորստի դեպքում ապրուստի միջոցների վերականգնման աջակցություն՝

- աջակցություն ծրագրի հետ կապված զբաղվածության հասանելիության հարցում.
- աջակցություն մասնագիտական ուսուցման, գյուղատնտեսական ուսուցման.
- համակարգչային դասընթացների կամ այլ հասանելիության հարցում:

բ) Ապրուստի միջոցների վերականգնման աջակցություն աշխատանքի կամ Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր կորստի դեպքում՝

- աջակցություն մասնագիտական ուսուցման, գյուղատնտեսական ուսուցման, համակարգչային դասընթացների կամ այլ հասանելիության հարցում:

5.4.2.7 Օժանդակություն զգալի ազդեցության դեպքում

ա. Ծրագրի զգալի ազդեցության համար կենսամիջոցների վերականգնման օժանդակությունը տրամադրվում է ազդեցության ենթակա այն ԱԵՏՏ-ներին (ներառյալ՝ վարձակալներին և հողի փաստացի օգտագործողներ հանդիսացող ԱԵՏՏ-ներին), որոնց պատկանող կամ որոնց կողմից մշակվող գյուղատնտեսական նշանակության հողը ազդակիր է, և տվյալ հողամասի օգտագործման արդյունքում տվյալ ԱԵՏՏ-ները ստանում են օգուտներ՝ պտուղների, բերքի, մշակաբույսի տեսքով:

Վերոհիշյալ օժանդակության հաշվարկման համար հիմք է հանդիսանում հողերի փաստացի գործառնական նշանակությունը, անկախ անշարժ գույքի կադաստրային տվյալներում, իրավունքի վկայականներում և իրավունքը հաստատող այլ փաստաթղթերում հողամասի համար սահմանված նշանակությունից: Այն դեպքում, երբ ազդեցության ենթակա հողամասը թեև չի հանդիսանում գյուղատնտեսական նշանակության հողամաս, սակայն փաստացի օգտագործվում է գյուղատնտեսական արտադրանք ստանալու համար, և որից փաստացի բերք և մշակաբույս է ստացվում, ապա վերջինս ենթակա է փոխհատուցման՝ վերոհիշյալ սկզբունքների համաձայն՝ առանց օրինականացման պահանջի ապահովման:

բ. Տարաբնակեցվող ԱԵՏՏ-երը (ներառյալ՝ վերաբնակեցվող վարձակալները) կստանան կենսամիջոցների վերականգնման օժանդակությունն զգալի ազդեցության համար ամսական նվազագույն աշխատավարձի (ՀՀ օրենսդրությամբ սահմանված) 6-ապատիկի չափով:

գ. Եկամուտ ստեղծող գույքը կորցնող ԱԵՏՏ-երը և ձեռնարկատիրական գործունեությունից զրկվող ԱԵՏՏ-երը կստանան կենսամիջոցների վերականգնման օժանդակությունն զգալի ազդեցության համար՝ ամսական նվազագույն աշխատավարձի (ՀՀ օրենսդրությամբ սահմանված) 6-ապատիկի չափով:

5.4.2.8 Օժանդակություն խոցելի անձանց/ԱԵՏՏ-ների

խոցելի անձանց կտրվի վերականգնման օժանդակություն ամսական նվազագույն աշխատավարձի (ՀՀ օրենսդրությամբ սահմանված) 6 (վեց)-ապատիկի չափով, ինչպես նաև ծրագրի շրջանակներում նախատեսվող աշխատատեղերում աշխատելու համար գերակայություն:

Սոցիալապես խոցելի անձինք են՝

ա. այն տնային տնտեսությունները, որոնք հաշվառված են ընտանիքի անապահովության գնահատման համակարգում (ԸԱԳՀ) և ստանում են նպաստ.

բ. միայնակ ծնողի կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ տարիքային կենսաթոշակառու հանդիսացող կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ եթե ընտանիքը նպաստառու չէ համաձայն սույն ենթաբաժնի «ա» պարբերության.

գ. տարիքային կենսաթոշակառու հանդիսացող անձանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ կենսաթոշակառու կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ եթե ընտանիքը նպաստառու չէ համաձայն սույն ենթաբաժնի «ա» պարբերության

դ. 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ կենսաթոշակառու կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ եթե ընտանիքը նպաստառու չէ համաձայն սույն ենթաբաժնի «ա» պարբերության.

ե. կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ տարիքային կենսաթոշակառու հանդիսացող կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս,

աշխատունակ տարիքի անձ չկա՝ եթե ընտանիքը նպաստառու չէ համաձայն սույն ենթաբաժնի «ա» պարբերության.

5.4.2.9 Կենսամիջոցների վերականգնման աջակցություն

ՄՏԻ-ի ընթացքում հայտնաբերված ԱԵԱ-ները (ՏՊ մշակման ընթացքում), որոնց կենսամիջոցները ենթարկվում են ազդեցության, որոնք ներառված չեն սույն ՏՇ իրավունքների սխեմայում, կստանան կենսամիջոցների վերականգնման օժանդակություն սույն ՏՇ-ի և ՎՉԵԲ պահանջներին համապատասխան:

5.4.3 Միավորի փոխհատուցման արժեքի գնահատումը

Անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման Հայաստանի ազգային ստանդարտով, Կիրառելի չափանիշների և սույն ՏՇ-ի պահանջների համաձայն, որից էլնելով տարբեր ազդեցությունների՝ միավորի դիմաց փոխհատուցման արժեքի գնահատման ՎՉԵԲ և ՀՀ կառավարության համար փոխհամաձայնեցված մեթոդաբանությունը հետևյալն է՝

ա. Հողամասը պետք է գնահատվի փոխարինման արժեքով, այսինքն՝ շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է) գումարած 15 տոկոս:

բ. Շենքերը և շինությունները պետք է գնահատվեն փոխարինման արժեքով՝ շինության տեսակի, շինանյութերի արժեքի, շինարարության տեսակի, աշխատուժի, տրանսպորտի ու այլ շինարարական և գրանցման (եթե կիրառելի է) ծախսերի հիման վրա: Մաշվածության (ամորտիզացիոն) մասհանումներ կամ գործարքի դիմաց ծախսերը չեն կիրառվում և չեն նվազեցվում: Ազդեցության ենթակա հողի վրա առկա ինքնակամ շինությունների օրինականացման ծախսերը հաշվարկվում են անկախ գնահատողի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված դրույքաչափերով:

գ. Մեկ տարվա մշակաբույսից ստացվող բերքի փոխհատուցման արժեքը պետք է գնահատվի գյուղատնտեսական ապրանքների նախորդ 3 տարիների միջին գների և միջին բերքատվության ցուցանիշների վրա: Այն դեպքում, երբ ԱԵԱ-ին վճարման ենթակա է ավելի քան մեկ տարվա փոխհատուցում, առաջին տարուց հետո բերքի դիմաց փոխհատուցում պետք է տրամադրվի շուկայական միջին արժեքին համապատասխան:

դ. Ծառերը (թփերը) պետք է գնահատվեն տարբեր մեթոդաբանությամբ՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք կորցրած ծառը (թուփը) ոչ պտղաբեր ծառ (թուփ) է, թե՛ պտղաբեր:

- Ոչ պտղաբեր՝ փայտանյութ տվող և դեկորատիվ ծառերը (թփերը)՝ պետք է գնահատվեն ըստ հետևյալ խմբերի. ա) մանր ծառեր, բ) միջին ծառեր և գ) խոշոր ծառեր, հիմք ընդունելով ծառատեսակը (թփատեսակը) և գնահատման հետևյալ չափման միավորները՝ փայտանյութի (վառելափայտի կամ շինափայտի) ծավալը, ծառի (թփի) բարձրությունը, ինչպես նաև տվյալ ծառատեսակի (թփատեսակի) համար կիրառելի այլ չափման միավորներ, որոնք կսահմանվեն ՏՊ-ով:

- Պտղաբեր ծառերը (թփերը, խաղողը) պետք է գնահատվեն այգետնկման տարիքի հիման վրա: Պտղաբեր ծառերի (թփեր, պտղատու կամ խաղողի այգիներ) դիմաց փոխհատուցում պետք է տրամադրվի ներդրված արժեքի հիման վրա, և այնքան, որքան կազմում է տվյալ ծառատեսակի (թփատեսակի) մեկ տարվա բերքի փոխհատուցման շուկայական արժեքը՝ բազմապատկած տվյալ ծառի (թփի) այգետնկման օրվանից հաշված տարիների քանակով, սակայն ոչ ավելի քան այն տարիների քանակն է, որն անհրաժեշտ է տվյալ ծառատեսակին (թփատեսակին) լիարժեք բերքատվության տարիքի հասնելու համար:

Միավորի դիմաց փոխհատուցման դրույքաչափերը պետք է գնահատվեն որակավորված անկախ գնահատողի կողմից՝ ՎՉԵԲ-ի կողմից ընդունելի հստակ և թափանցիկ մեթոդաբանության հիման վրա: Որակավորված անկախ գնահատողը գույքի բոլոր

տեսակների համար կազմում է գնահատման և հաշվարկման հաշվետվություններ, որտեղ անկախ գնահատվող գույքի տեսակից, պետք է նշվեն բոլոր ելակետային տվյալների ստացման աղբյուրները և գնահատման ժամանակահատվածը:

6 ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

6.1 Լախաբան

ՎՉԵԲ-ի ԻՊՏ-ի համաձայն, ԾԱԵԱ-ների հետ պետք է խորհրդակցել և նրանց հնարավորություն ընձեռել մասնակցելու հողի օտարման և տարաբնակեցման պլանավորմանը և իրականացմանը: Նրանք նաև պետք է պատշաճ կերպով և ժամանակին տեղեկացվեն պլանավորման գործընթացի արդյունքների, ինչպես նաև ՏՊ-ի իրականացման ժամանակացույցի և ընթացակարգերի մասին: Հանրության տեղեկացման և խորհրդատվության միջոցառումները պետք է իրականացվեն Պատվիրատուի (և իր խորհրդատուների) կողմից հողի օտարման և տարաբնակեցման գործընթացի բոլոր փուլերում: Բացի այդ, Պատվիրատուն (իր խորհրդատուների հետ) պետք է նաև կազմակերպի հանրության տեղեկատվական հանդիպումներ, ԾԱԵԱ-ների մասնակցությունը գույքագրմանը և սոցիալ-տնտեսական հետազոտություններին, ՏՊ-ների հրապարակումը և ԾԱԵԱ-ների տեղեկացումը փոխհատուցման վճարման և տարաբնակեցման ընթացակարգերի մասին:

6.2 Սույն ՏՇ-ի մշակման համար իրականացված խորհրդակցություններ

2024 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին Ծրագրի ազդակիր համայնքներում և բնակավայրերում անցկացվել են խորհրդակցական հանդիպումներ և հարցազրույցներ՝ սույն ՏՇ-ի մշակման գործընթացին տեղեկատվություն տրամադրելու համար (**Աղյուսակ 9**): Դրանց նախորդել են պաշտոնական գրությունները, որոնք ուղարկվել ջրամբարների կառուցման համար ընտրված Արենի, Արթիկ, Աշտարակ, Խոյ, Մեղրի և Մարտունի համայնքների ղեկավարներին: Այդ գրություններում նկարագրված էին Ծրագիրը և դրա բաղադրիչները, ՏՇ մշակման պահանջը, Ծրագրի տարածքում սոցիալ-տնտեսական ելակետային վիճակի և ընթացիկ հողօգտագործման, ջրապաշտպան, սանիտապաշտպանիչ և այլ բուֆերային գոտիներում հողօգտագործման սահմանափակումների առկա գործելակերպերի և այլ հարցերի վերաբերյալ հարցազրույցներ և խորհրդակցություններ անցկացնելու անհրաժեշտությունը:

Բոլոր համայնքային վարչակազմերը, բացառությամբ Արթիկ համայնքի, հայտնեցին իրենց պատրաստակամությունը մասնակցելու և աջակցելու սոցիալ-տնտեսական հարցազրույցներին և խորհրդակցություններին: Արդյունքում, բոլոր հինգ տարածաշրջաններում տեղի ունեցան այցելություններ, շահագրգիռ կողմերի հետ անցկացվեցին հարցազրույցներ և խորհրդատվական հանդիպումներ, ինչպես նշված է **Աղյուսակ 9**-ում: Բացի այդ, տեղի ունեցավ Արթիկի ջրամբարի տարածքով շրջայց, սակայն առանց համայնքային մարմինների (ովքեր չհաստատեցին հանդիպման հնարավորությունը՝ չնայած հայցումների) և բնակիչների (որոնց հետ հանդիպումներ չեն եղել տարածքում և դրա շրջակայքում) հետ հարցազրույցների:

Տարբեր ջրամբարներին բնորոշ և հողօգտագործմանը վերաբերող տեղեկատվությունը ու խնդիրները ամփոփված են **Բաժին Error! Reference source not found.**-ում՝ յուրաքանչյուր ջրամբարի համառոտ նկարագրում: Համայնքային մարմինների կողմից հնչեցված հիմնական ուղերձները, որոնք, կարծես, ընդհանուր են բոլոր տեղամասերի համար, հետևյալն են.

- Համայնքային վարչակազմերի տվյալներով՝ բոլոր համայնքների բնակչությունը մեծ ակնկալիքով է սպասում Ծրագրի իրականացմանը, քանի որ ոռոգման ջրի սակավությունը լուրջ խնդիր է:
- Համայնքային վարչակազմերը հայտնել են իրենց պատրաստակամությունը աջակցելու Ծրագրին թե՛ նախապատրաստման/նախագծային ուսումնասիրման, թե՛ իրագործման փուլերում:

- Որոշ համայնքային վարչակազմեր նշել են, որ ջրամբարների կառուցման հարցը քննարկվել է տարիներ շարունակ, և լավ կլինի, որ այն վերջապես իրականացվի: Նրանք նաև նշել են մեխանիկական ջրամատակարարումից ինքնահոս ջրամատակարարման անցնելու կարևորությունը:
- Ծրագիրը, ենթադրաբար, զգալի օգուտներ կբերի ջրամբարներից ներքև և դուրս գտնվող համայնքների գյուղատնտեսության զարգացմանը և բարեկեցությանը: Որոշ հարցվածներ նաև նշել են, որ ջրամբարները կարող են զբոսաշրջային տեսարժան վայր լինել:

Աղյուսակ 9. ՏԾ-ի մշակման համար Ծրագրի տարածաշրջաններում շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունները

| № | Տարեթիվը | Վայրը | Ներգրավման տեսակը | Հարցվողներ / խորհրդակցվողներ / դիրքը / պաշտոնը | |
|---------------------------|------------|------------------|-------------------------|--|---|
| | | | | | |
| ԼԻՃՔԻ ՋՐԱՄԲԱՐ | | | | | |
| 1 | 31.07.2024 | Մեղրի համայնք | Խորհրդատվական հանդիպում | Մեղրի համայնքի ղեկավար Մեղրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալ Մամուլի քարտուղար | |
| 2 | 31.07.2024 | | Հարցազրույց | Տարածքային զարգացման, հողօգտագործման և գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ | |
| 3 | 16.08.2024 | Լիճք գյուղ | Հարցազրույց | Լիճք բնակավայրի վարչական ղեկավար | |
| 4 | 28.08.2024 | | Հարցազրույց | Լիճքի բնակիչ (օտարվող հողատարածքի սահմաններում ընկույզի այգու սեփականատեր) | |
| 5 | 28.08.2024 | | Հարցազրույց | Լիճքի բնակիչ (օգտագործում է օտարվող տարածքում հողը վարելու և խոտհունձի համար) | |
| 6 | 28.08.2024 | | Հարցազրույց | Լիճքի բնակիչ (օգտագործում է օտարվող տարածքում հողը վարելու և խոտհունձի համար) | |
| ԱՍՏՈՂԱԾՈՐԻ ՋՐԱՄԲԱՐ | | | | | |
| 7 | 07.08.2024 | Մարտունի համայնք | Խորհրդատվական հանդիպում | Մարտունի համայնքի ղեկավար Մարտունի համայնքի ղեկավարի տեղակալ Աշխատակազմի ղեկավար | |
| 8 | 07.08.2024 | | Հարցազրույց | Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի ղեկավար | |
| 9 | 07.08.2024 | Աստղածոր գյուղ | Հարցազրույց | Աստղածոր բնակավայրի վարչական ղեկավար | |
| 10 | 26.08.2024 | | Հարցազրույց | Աստղածորի բնակիչ (ծեռքբերվող տարածքում համայնքային հողերի ոչ պաշտոնական օգտագործող, մշակում է անասնապահական մշակաբույսեր և ագնվամորի) | |
| 11 | 26.08.2024 | | Հարցազրույց | Աստղածորի բնակիչ (օտարվող տարածքում գտնվող հողի սեփականատեր, օգտագործում է հողը վարելու և խոտհունձի համար) | |
| 12 | 26.08.2024 | | Հարցազրույց | Աստղածորի բնակիչ (անասնապահ, որը հաճախ անասունների հետ անցնում է ջրամբարի տարածքով՝ արոտավայրեր տանող ճանապարհին) | |
| ՔԱՍԱԿԻ ՋՐԱՄԲԱՐ | | | | | |
| 13 | 09.08.2024 | Խոյ համայնք | Խորհրդատվական հանդիպում | Խոյ համայնքի ղեկավար Խոյ համայնքի ղեկավարի տեղակալ Փորձագետ Այգեշատ բնակավայրի վարչական ղեկավար Ամբերդ բնակավայրի վարչական ղեկավար | |
| 14 | 06.09.2024 | | Աշտարակ համայնք | Խորհրդատվական հանդիպում | Աշտարակ համայնքի աշխատակազմի ղեկավար Աշտարակ համայնքի ղեկավարի տեղակալ |
| 15 | 13.09.2024 | Ռսկեվազ գյուղ | Հարցազրույց | Ռսկեվազ բնակավայրի վարչական ղեկավար | |
| 16 | 13.09.2024 | | Հարցազրույց | Ռսկեհատ բնակավայրի վարչական ղեկավար | |
| 17 | 13.09.2024 | | Հարցազրույց | Օշական բնակավայրի վարչական ղեկավար | |
| 18 | 13.09.2024 | Ռսկեվազ գյուղ | Հարցազրույց | Ռսկեվազի բնակիչ (օտարվող տարածքում գտնվող մրգատու այգու (ծիրան, դեղձ, խնձոր) և կիսակառույց կառույցի սեփականատեր) | |
| 19 | 13.09.2024 | | Հարցազրույց | Ռսկեվազի բնակիչ (օգտագործում է տարածքը որպես արոտավայր) | |
| 20 | 13.09.2024 | | Հարցազրույց | Ռսկեվազի բնակիչ (հողի սեփականատեր) | |

| № | Տարեթիվը | Վայրը | Ներգրավման տեսակը | Հարցվողներ / խորհրդակցվողներ / դիրքը / պաշտոնը |
|------------------------------------|------------|---|-------------------------|---|
| | | | | 21 |
| 22 | 13.09.2024 | Ոսկեհատի բնակիչ (օտարվող տարածքում գտնվող պտղատու այգու (ծիրանի, դեղձի, խնձորի, ելակի) սեփականատեր) | | |
| 23 | 13.09.2024 | Օշական գյուղ | Հարցագրույց | Օշականի բնակիչ (օտարվող տարածքում գտնվող պտղատու այգու (բալենու, դեղձենու, խնձորենու) և արոտավայրի սեփականատեր) |
| ԵԼՓԻՆ ՋՐԱՄԲԱՐ | | | | |
| 24 | 22.08.2024 | Արենի համայնք | խորհրդատվական հանդիպում | Արենի համայնքի ղեկավար |
| 25 | 22.08.2024 | Ելփին գյուղ | Հարցագրույց | Ելփին բնակավայրի վարչական ղեկավար |
| ԱՐԳԻՉԻ ՋՐԱՄԲԱՐ³⁴ | | | | |
| 26 | 07.08.2024 | Արգիչի գյուղ | խորհրդատվական հանդիպում | Արգիչի բնակավայրի վարչական ղեկավար |
| 27 | 07.08.2024 | Արգիչի գյուղ | Հարցագրույց | Հոռօգտագործման գծով մասնագետ և հաշվապահ |

6.3 Տեղեկատվության հրապարակումը

Ծրագրի իրականացման և հողի օտարման ողջ գործընթացի ընթացքում պետք է ապահովվի շահագրգիռ կողմերի բազմաբովանդակ ներգրավվածությունը և ԾԱԵԱ-ների տեղեկացված մասնակցությունը: Այս նպատակով կարևոր է համապատասխան տեղեկատվության ժամանակին հրապարակումը:

Պատվիրատուն պարտավորվում է հանրությանը և ԾԱԵԱ-ներին տրամադրել ամբողջ կիրառելի տեղեկատվությունը՝ նրանց տեղեկացված մասնակցությունը հնարավոր դարձնելու համար: Տեղեկատվության հրապարակումը, հանրային հանդիպումները և ԾԱԵԱ-ների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, համայնքային իշխանությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունները կկազմակերպվեն Ծրագրի Շահագրգիռ կողմերի ներգրավման Պլանին (ՇԿՆՊ) համապատասխան: Այն նախատեսում է ազդեցության ենթարկված շահագրգիռ խմբերի, այդ թվում՝ խոցելի խմբերի, և ԾԱԵԱ-ների հետ շարունակական համագործակցություն՝ Ծրագրի մշակման, իրականացման և մշտադիտարկման շրջանակներում:

Սույն ՏՇ-ը կիրառարակվի հայերեն և անգլերեն լեզուներով՝ 2025 թվականին ՎՉԵԲ-ի և Ջրային կոմիտեի կայքերում կից «Հողերի օտարման և կենսամիջոցների վերականգնման թերթիկ»-ի հետ միասին: Թղթային տարբերակները հասանելի կլինեն Պատվիրատուի գրասենյակում՝ Երևանում (տես կոնստակտային տվյալները **Գլուխ Error! Reference source not found.**-ում): Թերթիկը կօգտագործվի ՏՊ-երի մշակման վաղ փուլում նախնական խորհրդակցությունների համար (համապատասխան թարմացումներով, եթե անհրաժեշտ է):

Յուրաքանչյուր ջրամբարի նախագծային փաստաթղթերը, ներառյալ ոչ տեխնիկական ամփոփագիրը, ՇՄՍԱԳ հաշվետվությունները և ՇԿՆՊ-ը, նույնպես հասանելի կլինեն հանրությանը հայերեն և անգլերեն լեզուներով:

ՎՉԵԲ-ի և Պատվիրատուի կողմից մշակելուց և հաստատվելուց հետո, ջրամբարի համար նախատեսված ՏՊ-ները ենթակա կլինեն հրապարակման հայերեն և անգլերեն լեզուներով Պատվիրատուի և ՎՉԵԲ-ի կայքերում:

³⁴ Արգիչիի շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններ են անցկացվել, սակայն առաջարկվող ջրամբարների ճշգրիտ գտնվելու վայրի բացակայության պատճառով նրանք չեն կարողացել տրամադրել համապարփակ տեղեկատվություն

6.4 Լեռագրավումը և խորհրդակցությունները ՏՊ-ի շրջանակում

Ծրագրի մշակման փուլում բոլոր ազդակիր համայնքներում կիրականացվեն հանրային խորհրդակցություններ ԾԱԵԱ-ների հետ՝ ներկայացնելու Ծրագրի նպատակները, հողի օտարման և փոխհատուցման գործընթացի փուլերը, «վերջնաժամկետի» հայեցակարգը, հիմնական իրավասությունը և իրավունքները, հարցումների և տարաբնակեցման ժամանակացույցները և բողոքարկման մեխանիզմը: Նախկինում մշակված թերթիկը կթարմացվի և կբաժանվի հանդիպումների մասնակիցներին (թե՛ համայնքային, թե՛ անհատական): ԾԱԵԱ-ները կմասնակցեն սոցիալ-տնտեսական ելակետային ուսումնասիրություններին, մարդահամարին և ազդակիր գույքի օբյեկտների գրանցմանը (գույքագրմանը): Անհատական խորհրդակցություններ կանցկացվեն ԾԱԵԱ-ների, այդ թվում՝ խոցելի ԾԱԵԱ-ների հետ ՏՊ-երի մշակման և իրականացման փուլում: ԾԱԵԱ-ների մտահոգություններն ու կարծիքները հաշվի կառնվեն ՏՊ-երի պլանավորման և իրականացման գործընթացում:

Համայնքային իշխանությունները կտեղեկացվեն Ծրագրի մասին և նրանց աջակցությունը ակնկալվում է ԾԱԵԱ-ի սոցիալ-տնտեսական հետազոտության, ԾԱԵԱ-երի մարդահամարի և ազդակիր գույքի գույքագրման գործընթացներում: Բացի այդ, ՏՊ-երի ավարտից և Ջրային կոմիտեին ներկայացնելուց առաջ, ԾԱԵԱ-ները կտեղեկացվեն հետազոտությունների և գնահատման արդյունքների մասին (օրինակ՝ միավոր գների տեսքով):

Բողոքների վերաբերյալ հաղորդակցությունը կշարունակվի ՏՊ-երի մշակման և իրականացման ողջ ընթացքում:

ԾԱԵԱ-երի և այլ շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվածությունն ապահովող գործընթացներն ու մեխանիզմները կմանրամասնվեն ՏՊ-երում, ներառյալ ամսաթիվը, մասնակիցների ցանկը և խորհրդակցական հանդիպումների արձանագրությունները:

7 ԲՈՂՈՋԱՐԿԱՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Ըստ ՎՁԵԲ-ի պահանջների, պետք է ստեղծվի բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերից Ծրագրի վերաբերյալ բարձրացված մտահոգությունները և/կամ հարցերը քննարկելու և լուծելու համար՝ արդյունավետ, ժամանակին, թափանցիկ, ոչ խտրական/արդարացի և ծախսարդյունավետ եղանակով:

Պատվիրատուն՝ Ջրային կոմիտեն, որպես պետական սեփականություն հանդիսացող կառույց, հետևում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հարցումներին և բողոքներին արձագանքելու ազգային կանոնակարգերին: Ազգային օրենքը սահմանում է, որ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է և նշում է հատուկ ժամկետներ (30 օրից կարճ կամ ավելի երկար ժամանակահատվածներ): Օրենքի համաձայն, վարչական մարմինն ուղղված դիմումները պետք է ներկայացվեն գրավոր և պետք է պարունակեն դիմորդի (ֆիզիկական կամ իրավաբանական անձ) լրիվ անունը, հասցեն, այն վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է դիմումը և այլն:

Ջրային կոմիտեն կթարմացնի իր գործող բողոքարկումների կառավարման ընթացակարգերն ու գործելակերպը՝ համապատասխանեցնելով ՎՁԵԲ-ի պահանջներին և կստեղծի **Ծրագրի բողոքարկման մեխանիզմ** արտաքին շահագրգիռ կողմերի համար (տես Ծրագրի համար մշակված շրջանակային ՇԿՆՊ-ը):

Ճանաչելով հողերի օտարման հարցերի կարևորությունն ու բարդությունը, Պատվիրատուն հետագայում մշակել է բողոքարկման մեխանիզմը՝ ներառելով ստորև նկարագրված արտադատական, բարեկամական բողոքարկումների քննարկման և լուծման երկու հաջորդական մակարդակներ:

Բողոքների կառավարման առաջին մակարդակ

- ԾԱԵԱ-ն կարող է ներկայացնել հողի օտարման հետ կապված բողոք՝
 - Պատվիրատուի գրասենյակում կամ լիազոր ներկայացուցչի մոտ (**Աղյուսակ 10**),

- Ազդակիր համայնքների (բնակավայրերի) վարչական շենքերում, որտեղ կոնտակտային անձը կլինի ազդակիր համայնքի/բնակավայրի վարչական ղեկավարը,
- Ցանկացած շինհրապարակում կամ շինարարական կապալառուի ներկայացուցչի մոտ (եթե շինարարական կապալառուն ընտրվի):
- Բողոքը կարող է ներկայացվել բանավոր (այցելությամբ կամ հեռախոսով) կամ գրավոր՝ օգտագործելով, օրինակ, Բողոքարկման ձևաթուղթը (տես **Հավելված 3-ը**)՝ առձեռն առաքմամբ, փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով: Բողոքները կարող են ներկայացվել անանում³⁵:
- Պատվիրատուն կօգտագործի գործող բողոքարկման ընթացակարգը (որը կիրառվում է ցանկացած վայրում՝ բողոքները գրանցելու համար՝ համաձայն ՇԿԼՊ-ի): Ցանկացած բողոք կգրանցվի՝ այն ներառելով բողոքարկման գրանցամատյանում³⁶ և կհաստատվի հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
- Այս մակարդակում փորձ կկատարվի լուծումը գտնել Պատվիրատուի և/կամ Ծրագրի Իրականացման Միավորի (ԾԻՄ) և, անհրաժեշտության դեպքում, շինարարական կապալառուի, համայնքապետարանի ու Պատվիրատուի իրավաբանի մասնակցությամբ:
- Պատվիրատուն կպատասխանի բողոքը ստանալուց հետո 14 օրվա (երկու շաբաթվա) ընթացքում ԾԱԵԱ-ին ուղարկելով բողոքի լուծման նամակը: Նամակում կներկայացվեն առաջարկվող ուղղիչ/բողոքարկման լուծման գործողություններ: Ուղղիչ գործողությունների իրականացումը կարող է սկսվել և շարունակվել անհրաժեշտության դեպքում:
- Եթե բողոքը լուծել հնարավոր չէ, Պատվիրատուն կպատասխանի բողոքը ստանալուց հետո 14 օրվա (երկու շաբաթվա) ընթացքում ԾԱԵԱ-ին ուղարկելով բացատրական նամակ՝ ներկայացնով, թե ինչ է ձեռնարկվել խնդիրը քննարկելու և լուծելու համար, և ինչու հնարավոր չէ այն լիովին լուծել:

Բողոքների կառավարման երկրորդ մակարդակ

- Եթե խնդիրը չլուծվի, ԾԱԵԱ-ի բողոքը կուղղվի ներքին բողոքների լուծման խմբին, որը կունենա 15 օր՝ գործը քննարկելու և որոշում կայացնելու համար: Այս խումբը կստեղծվի և կղեկավարվի Պատվիրատուի ԾԻԳ-ի կողմից: Այն բաղկացած կլինի ՏԿԵՆ-ի և Պատվիրատուի բարձրագույն ղեկավարության ներկայացուցիչներից, Պատվիրատուի իրավաբանից, բնապահպանական ու սոցիալական և ԾԻԳ-ի համապատասխան աշխատակիցներից, տարաբնակեցման խորհրդատուից, համապատասխան համայնքապետարանի/համայնքի ղեկավարի և շահագրգիռ ԾԱԵԱ-ների ներկայացուցիչներից: Խումբը, անհրաժեշտության դեպքում, կխորհրդակցի կադաստրի մարմինների ներկայացուցիչների հետ՝ բողոքի լուծումը հեշտացնելու համար:
- Բողոքարկողը կտեղեկացվի առաջարկվող այլընտրանքային ուղղիչ գործողությունների և նախատեսվող հետագա միջոցառումների մասին բողոքը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում: Եթե անհրաժեշտ են լրացուցիչ

³⁵ Պատվիրատուի կընդլայնի և կհարմարեցնի իր բողոքարկման մեխանիզմը՝ ՎՇԲ-ի 10-րդ և 5-րդ ԻՊ-ների հետ կապված բացթողումները լրացնելու համար: Օրինակ, օրենքի համաձայն, վարչական մարմինն ուղղված դիմումները պետք է ներկայացվեն գրավոր ձևով և պետք է պարունակեն դիմորդի (Ֆիզիկական կամ իրավաբանական անձ) լիով անունը, հասցեն, այն վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է դիմումը և այլն: Մինչդեռ, ՎՇԲ-ը ակնկալում է, որ մեխանիզմը նաև հնարավորություն կտա բարձրացնել և հասցեագրել անանում բողոքները:

³⁶ Յուրաքանչյուր բողոք կգրանցվի գրանցամատյանում՝ ներառելով հետևյալ տեղեկությունը. բողոքի նկարագրությունը, բողոքի ստացման և բողոքարկողին պատասխանի հանձնման ամսաթվերը, ձեռնարկված գործողությունների նկարագրությունը (վերլուծություն, ուղղիչ միջոցառումներ, կանխարգելիչ միջոցառումներ), և լուծման և փակման/բողոքարկողին հետագարձ կապի տրամադրման ամսաթիվը:

ուսումնասիրություններ, ապա պատասխանելու համար կտրվի մինչև 30 օր (բողոքարկողը պետք է տեղեկացվի պահանջվող լրացուցիչ ժամանակի մասին):

- Պատվիրատուն բողոքարկողին կուղարկի մեկ այլ նամակ՝ հետագա լուծման գործողություններով:
- Եթե հնարավոր չի լինում լուծել բողոքը, Պատվիրատուն կպատասխանի բողոքը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում ԾԱԵԱ-ին ուղարկելով մեկ այլ բացատրական նամակ՝ ներկայացնելով, թե ինչ է ձեռնարկվել խնդիրը լուծելու համար և ինչու հնարավոր չէ այն լիովին լուծել:

Լրացուցիչ/նոր տեղեկատվությամբ հիմնավորված կրկնվող բողոքի դեպքում, Պատվիրատուն կկազմակերպի բողոքների քննարկման հատուկ խումբ (վերաբողոքարկման մեխանիզմ)՝ վեճերի անաչառ լուծման համար՝ չեզոք երրորդ կողմի օգնությամբ:

Ցանկացած պահի բողոքարկողը կարող են դիմել այլ իրավական միջոցների՝ համաձայն Հայաստանի օրենսդրության, ներառյալ պաշտոնական դատական բողոքարկումը:

Կոնտակտային տվյալներ

Հողերի օտարման հետ կապված բոլոր հարցումներն ու բողոքները կարող են ուղղվել Պատվիրատուին՝ օգտագործելով **Աղյուսակ 10**-ում նշված կոնտակտային տվյալները:

Կոնտակտային տվյալները նաև առա են՝ i) Պատվիրատու կայքում (<https://www.scws.am>), և ii) կտեղադրվեն շինհրապարակներում տեղադրված հատուկ ցուցանակների վրա (Պատվիրատու շինարարության կապալառուների պայմանագրային տվյալների հետ միասին) և ազդակիր համայնքների վարչական շենքերում և ազդակիր բնակավայրերում տեղադրված տեղեկատվական ցուցանակների վրա:

Աղյուսակ 10. Ջրային կոմիտեի հողերի օտարման, կամ բողոքների և ընդհանուր հարցերով կոնտակտային տվյալներ

| | |
|--|---|
| <p>Ջրային կոմիտեի կոնտակտային անձ Ծրագրին առնչվող հողերի օտարումների և բողոքների հարցերով</p> | <p>Մարտիրոս Նալբանդյան Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ Հասցե՝ Հայաստան, Երևան, 0010, Վարդանանց փող. 13ա Հեռ. (+37410) 540763 Էլ.փոստ. martiros.nalbandyan@gov.am</p> |
| <p>Ջրային կոմիտեի կոնտակտային անձ հողերի օտարման և բողոքների հարցերով</p> | <p>Նահրա Ավետյան Ռոճգման և կոլեկտորադրենաժային համակարգերի վարչության գլխավոր մասնագետ Հասցե՝ Հայաստան, Երևան, 0010, Վարդանանց փող. 13ա Բջջ. (+37491) 726111 Հեռ. +(37410) 540135 Էլ.փոստ. nairavetyan2013@gmail.com</p> |
| <p>Ջրային կոմիտեի ընդհանուր հարցերով կոնտակտային տվյալներ</p> | <p>Հասցե՝ Հայաստան, Երևան, 0010, Վարդանանց փող. 13ա Թեժ գիծ. (+37410) 547283, (+37410) 540135 Ընդունարան. (+37410) 540909 Ֆաքս. (+37410) 540613 Էլ.փոստ. scws@scws.am</p> |

8 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵ

8.1 Դերերը և պատասխանատվությունը

Ջրային կոմիտեն ՏԿԵՆ- ի անունից պատասխանատու կլինի սույն ՏՇ-ի և ջրամբարներին առնչվող ՏՊ-ների իրականացման համար: Ծրագրի իրականացմանը ներգրավված բոլոր կողմերը, ներառյալ շինարարական կապալառուները, պարտավոր են պահպանել սույն ՏՊ-ում սահմանված պահանջները:

Ծրագրի ՏՇ-ի և Ծրագրին առնչվող առաջիկա ՏՊ-ների իրականացմանը ներգրավված հաստատությունների և կազմակերպությունների դերերն ու պատասխանատվությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 11. ՏՇ/ՏՊ համար կազմակերպչական կարգավորումները

| № | Կառույցի անվանումը | Դերերն ու պատասխանատվությունը |
|---|--------------------------------|--|
| 1 | ՀՀ կառավարություն | <ul style="list-style-type: none"> • ՀՀ հողային օրենսգրքի դրույթների հիման վրա, կառավարությունը հաստատում է Ծրագրի ազդեցության ենթարկված հողամասերի համար գերակա շահ ճանաչելու որոշումը: • ՀՀ կառավարությունը հաստատում է Ծրագրի ՏՇ-ն և ՏՊ-ները: |
| 2 | ՏԿԵՆ ՀՀԶԿ | <ul style="list-style-type: none"> • Ծրագրի ընդհանուր պատասխանատվություն և վերահսկողություն: • Գործում է որպես ջրային ոլորտի պետական լիազոր մարմին: • Ներկայացնում է ՏՇ և ՏՊ փաստաթղթերը ՀՀ կառավարության հաստատմանը: • Դիմում է ՀՀ կառավարություն / Ֆինանսների նախարարություն ՏՊ իրականացման բյուջետային հատկացումների համար: • Միջգերատեսչական համակարգում և փոխադարձ կապ: |
| 3 | ԾԻՄ (գործում է ՀՀԶԿ-ի անունից) | <ul style="list-style-type: none"> • Համակարգում է ՏՊ-ի մշակումը, ապահովում է, որ այն մշակվի հիմնական շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ազդակիր համայնքների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ խորհրդակցելով: • Համակարգում է հողերի օտարման և տարաբնակեցման գործողությունները Կադաստրի կոմիտեի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: • Վերանայում է ՏՊ-ների նախագծերը և ներկայացնում է դրանք համապատասխան մարմինների համաձայնեցմանը և հաստատմանը: • Ապահովում է, որ ԾԱԵԱ-ները տեղեկացված լինեն տարաբնակեցման գործընթացի, փոխհատուցման ընթացակարգերի և Ծրագրի այլ զարգացումների մասին: • Կազմակերպում է հանրային խորհրդակցություններ և համայնքային հանդիպումներ՝ ապահովելու համար, որ ազդակիր համայնքները տեղեկացված լինեն ՏՊ-ի մասին և կարողանան արտահայտել իրենց մտահոգությունները կամ տրամադրել հետադարձ կապ: • Ներգրավում և համագործակցում է արտաքին խորհրդատուների հետ, ինչպիսիք են ՏՊ-ի մշակման և իրականացման խորհրդատուները, ինչպես նաև անկախ արտաքին մշտադիտարկման գործակալությունը՝ ապահովելու համար, որ ՏՊ-ն արդյունավետորեն մշակվում և իրականացվում է: • Պլանավորում և կառավարում է ՏՊ-ի իրականացումը և փոխհատուցման բաշխումը: • Վերահսկում է ՏՊ-ի իրականացման առաջընթացը, ներառյալ հողի օտարումը, փոխհատուցման բաշխումը և տարաբնակեցման գործողությունները, որպեսզի ապահովվի դրանց ըստ նախատեսվածի ընթացքը: • Ապահովում է, որ ՏՊ-ի իրականացման համար հատկացվեն անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: • Համագործակցում է անկախ մշտադիտարկման գործակալությունների և խորհրդատուների հետ: • Ապահովում է պատշաճ ներքին մշտադիտարկում և հնարավոր բռնագրավման գործերի նախաձեռնության արդյունքների հրապարակում: |

| № | Կառույցի անվանումը | Դերերն ու պատասխանատվությունը |
|-----|---|---|
| | | <ul style="list-style-type: none"> Այահովում է մատչելի և արդյունավետ բողոքարկման մեխանիզմի (ԲՄ) գործունեությունը և որ ԾԱԵԱ-ների կողմից բարձրացված բողոքներին արձագանք է տրվում և, եթե հնարավոր է, լուծվում է թափանցիկ և ժամանակին: Կազմակերպում է ուսուցում և կարողությունների զարգացում գործընթացում ներգրավված շահագրգիռ կողմերի համար: |
| 4 | Տեղական ինքնակառավարման մարմիններ | <p>Տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքները) ունեն հողերի կառավարման և օրենքով սահմանված հողային հարաբերությունների կարգավորման ուղղակի իրավասություն: Ծրագրի ազդակիր համայնքները նաև՝</p> <ul style="list-style-type: none"> Աջակցում են Ծրագրի խորհրդատուներին հարցումներ անցկացնելու, համայնքին վերաբերող սոցիալ-տնտեսական տվյալներ և զարգացման ծրագրեր տրամադրելու հարցում, Աջակցում են բողոքների լուծմանը և անհրաժեշտության դեպքում մասնակցում այլ հարցերի քննարկմանը: Աջակցում են ՀՀԶԿ-ին կամ ԾԻՄ-ին՝ ՏՊ-րի իրականացման ընթացակարգերի և վճարումների մասին ԾԱԵԱ տեղեկացմանը, անհրաժեշտության դեպքում օգնում են կազմակերպել խորհրդակցություններ, տեղեկատվության հրապարակում և փոխհատուցման տրամադրում: |
| 5 | Այլ գործակալություններ և հաստատություններ | |
| 5.1 | ՀՀ ֆինանսների նախարարություն | <ul style="list-style-type: none"> Ֆինանսների նախարարությունը տարաբնակեցման պլանների իրականացման համար պետական բյուջեում պլանավորում է անհրաժեշտ ֆինանսական միջոցները և սահմանված կարգով տրամադրում է դրանք ՏԿԵՆ-ին (ՀՀԶԿ)՝ ՀՀ կառավարության կողմից ՏՊ-ների հաստատումից հետո: |
| 5.2 | ՀՀ կադատրի կոմիտե | <ul style="list-style-type: none"> Կադատրի կոմիտեն պատասխանատու է անշարժ գույքի սեփականության կարգավիճակի և այլ համապատասխան տվյալների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար, և իր իրավասության շրջանակներում պատասխանատու է հողի սեփականության պետական գրանցման համար: |
| 5.3 | Ղատարաններ | <ul style="list-style-type: none"> Վերանայում է բռնագրավման գործերը, Անցկացնում է լուծումներ և որոշում է, թե արդյոք հողը կարող է բռնագրավվել և ինչ արժեքով: <p><i>Հանրային կարիքների համար գույքի օտարման հետ կապված ինտրահարույց գործերը լուծելիս հիմքը պետք է հանդիսանա դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը:</i></p> |
| 6 | Խորհրդատուներ | |
| 6.1 | ՏՊ-ի մշակման խորհրդատու (Ալտա Վիպ) | <ul style="list-style-type: none"> Մշակում է ՏՊ-ներ, որոնք համապատասխանում են ՎՁԵԲ-ի պահանջներին և ազգային օրենքներին: ՏՊ-ն պետք է անդրադառնա տարաբնակեցման, փոխհատուցման և կենսապահովման վերականգնման բոլոր ասպեկտներին: Հավաքագրում է սոցիալ-տնտեսական ելակետային տվյալներ ազդակիր բնակչության, այդ թվում՝ խոցելի խմբերի (օրինակ՝ կանայք, տարեցներ, հաշմանդամներ), հողի տիրապետման և կենսապահովման վերաբերյալ, և անցկացնում է ԾԱԵԱ-ների մարդահամար: Բացահայտում է նրանց, ովքեր ուղղակիորեն կամ անուղղակիորեն կազդվեն Ծրագրից: Այահովում է, որ նախապատրաստման գործընթացում խորհրդակցություններ անցկացվեն ազդակիր անձանց հետ, և նրանց կարծիքները հաշվի առնվեն պլանում: Սահմանում է ազդակիր անձանց համար փոխհատուցման |

| № | Կառույցի անվանումը | Դերերն ու պատասխանատվությունը |
|-----|---|---|
| | | <p>դրույքաչափերը և մեխանիզմները, ներառյալ դրամական կամ բնեղեն փոխհատուցումը:</p> <ul style="list-style-type: none"> • Առաջարկում է միջոցառումներ ազդակիր անձանց կենսապահովման վերականգնման կամ բարելավման համար: • Առաջարկում է հասանելի ԲՄ ազդակիր անձանց համար՝ հողի օտարման և տարաբնակեցման գործընթացի վերաբերյալ մտահոգությունները կամ բողոքները բարձրացնելու համար: |
| 6.2 | <p>ՏՊ-ի իրականացման խորհրդատու (պետք է ներգրավվի կամ Ալտա Վիպ-ը կարող է շարունակել)</p> | <ul style="list-style-type: none"> • ՏՊ-ի իրականացման կարգավիճակի կանոնավոր մշտադիտարկում, ներառյալ բարձրացված ցանկացած բողոքի մանրամասները և դրանց լուծման եղանակը: • Հողերի օտարման, փոխհատուցման տրամադրման և տարաբնակեցման գործողությունների առաջընթացի հետևում: • Եթե մարդահամարի ավարտից հետո բացահայտվեն խոցելի ազդակիր անձինք, ՏՊ իրականացման խորհրդատուն կներգրավվի իրավաբաններ՝ ամբողջ գործընթացի ընթացքում նրանց օգնելու և որպես անկախ պաշտպաններ գործելու համար, եթե առաջանան բողոքներ: • Աջակցում է հողի օտարման և տարաբնակեցման գործընթացում առաջացող իրավական խնդիրների լուծմանը: • Ապահովում է, որ բողոքարկման մեխանիզմը արդյունավետորեն հաղորդակցվի և գործի, որպեսզի շահագրգիռ կողմերը կարողանան ներկայացնել իրենց բողոքները և մտահոգությունները: |
| 6.3 | <p>Մանրամասն նախագծման խորհրդատուներ / տեխնիկական խորհրդատու</p> | <ul style="list-style-type: none"> • Տրամադրել Ծրագրի նախագծային և տեխնիկական տվյալներ, ներառյալ ջրապահպան գոտիների, GIS, Ծրագրի բաղադրիչների և կառույցների վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև ՏՊ-ի կազմման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն: |
| 6.4 | <p>Անկախ Արտաքին Մշտադիտարկման Գործակալություն (ԱԱՄԳ)</p> | <ul style="list-style-type: none"> • Մշտադիտարկում է ՏՊ-ի իրականացման գործընթացը: • Վերահսկում է անհատական փոխհատուցման և տարաբնակեցման փաթեթների վճարումը և անհատական բողոքների քննարկումը ԲՄ-ի շրջանակներում: • Նույնականացնում է ՏՇ-ի և ՏՊ-ի դրույթների անհամապատասխանությունը և խախտումները: • Տրամադրում է պարբերական մշտադիտարկման հաշվետվություններ Ծրագրի շահագրգիռ կողմերին, ներառյալ ՀՀԶԿ-ին (ԾԻՄ) և ՎՉԵԲ-ին: Այս հաշվետվությունները պետք է ներառեն եզրակացությունները, առաջընթացի թարմացումները և իրականացման ընթացքում առաջացած ցանկացած խնդիրները: • ՏՊ-ի ավարտական աուդիտի հաշվետվության մշակում: |
| 7 | <p>ՎՉԵԲ</p> | <ul style="list-style-type: none"> • Համապատասխանության մշտադիտարկում, Ծրագրի պարբերական վերահսկում, Ծրագրի ՏՇ-ի, ՏՊ-ի և ԱԱՄԳ-ի կողմից մշակված մշտադիտարկման հաշվետվությունների հաստատում, ՏՊ-ի նախաձեռնում և վերանայում, շնորհված պայմանագրերի վերաբերյալ պարզաբանումների տրամադրում և շինարարական աշխատանքները շարունակելու մասին ծանուցումներ տրամադրելը՝ հիմնվելով ԱԱՄԳ-ի կողմից մշակված մշտադիտարկման հաշվետվությունների արդյունքների վրա: |

8.2 Ժամանակագրվյալ

Արթիկից բացի չորս ջրամբարների համար ՏՊ-ների մշակումը մեկնարկել է 2024 թվականի ամռանը և կշարունակվի 2025 թվականին: Արթիկի ՏՊ-ն նույնպես կմշակվի 2025 թվականին:

Ստորև բերված աղյուսակում ամփոփված է ՏՊ-ի մշակման շրջանակներում իրականացվող գործողությունների օրինակելի ժամանակացույցը:

Աղյուսակ 12. ՏՊ-ի իրականացման նախնական ժամանակացույց

| # | Գործունեություն / Ամիս | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 7 | 8 | 9 | 10... |
|-----|---|---|---|---|---|---|---|---|---|---|--|
| 1. | ՏՊ-ի տեխնիկական առաջադրանքի կազմում (Պատվիրատուի կողմից) | | | | | | | | | | |
| 2. | Տարաբնակեցման / ՏՊ խորհրդատուի հետ պայմանագրի կնքում (Պատվիրատուի կողմից) ՏՊ-ների մշակման գործողությունների ծրագրի և ժամանակացույցի մշակում | | | | | | | | | | |
| 3. | ՏՊ նախագծի մշակում, ներառյալ սոցիալ-տնտեսական հետազոտություն, խորհրդակցություններ, ԾԱԵԱ-ների մարդահամար, ակտիվների գույքագրում և գնահատում | | | | | | | | | | |
| 4. | ՏՊ-ի նախագծի ներկայացումը ՎՁԵԲ-ին | | | | | | | | | | |
| 5. | ՏՊ-ի վերջնականացումը և հաստատումը ՎՁԵԲ-ի կողմից | | | | | | | | | | |
| 6. | ՏՊ-ի թարգմանությունը հայերեն, դրա հաստատումը ՀՀ կառավարության կողմից և հրապարակումը | | | | | | | | | | |
| 7. | Բողոքների կառավարում | | | | | | | | | | Շարունակական պարտավորություն |
| 8. | ԾԱԵԱ փոխհատուցման իրավունքների տրամադրում | | | | | | | | | | |
| 9. | Կենսապահովման վերականգնման գործողություններ | | | | | | | | | | Շարունակել համաձայն ՏՊ-ների |
| 10. | Մշտադիտարկման և գնահատման գործողություններ | | | | | | | | | | ՏՊ-ի իրականացման ընթացքում և մինչև կենսապահովման վերականգնման գործողությունների ավարտը |
| 11. | Արտաքին ավարտական աուդիտ (կենսամիջոցների վերականգնման գործողությունների ավարտից/ավարտին մոտ լինելուց հետո) | | | | | | | | | | Փոխհատուցումների վճարումից հետո, մինչ կենսապահովման վերականգնման աշխատանքների ավարտը |

8.3 Իրականացման ծախսերը և բյուջեն

Հողերի օտարման և տարաբնակեցման հետ կապված գործողությունների ծախսերը լիովին կծածկվեն Ջրային կոմիտեի կողմից: ՏՊ-ի մշակման և իրականացման ծախսերը կներառվեն Ծրագրի ընդհանուր բյուջեում՝ պետական ներդրման շրջանակներում:

Հողերի օտարման և տարաբնակեցման ծախսերը կներառեն առնվազն հետևյալը.

- Հողերի մշտական կորստի համար փոխհատուցում,
- Հողերի ժամանակավոր կորստի համար փոխհատուցում,
- Միամյա/բազմամյա մշակաբույսերի և ծառերի կորստի համար փոխհատուցում,
- Ոչ բնակելի կառույցների (ցանկապատեր, գոմեր, տնակներ) և ենթակառուցվածքների (օրինակ՝ ոռոգում, ստորգետնյա հաղորդակցություններ) կորստի համար փոխհատուցում:
- Բիզնես կառույցների (խանութներ, արհեստանոցներ և այլն) կորստի փոխհատուցում:

- Ձեռնարկատիրական գործունեությունից եկամտի և/կամ կենսապահովման աղբյուրի կորստի փոխհատուցում:
- Հատուկ օգնություն խոցելի ԾԱԵԱ-ների համար,
- Բացակա սեփականատերերի փոխհատուցում,
- Կենսապահովման վերականգնման միջոցառումներ,
- ՏՊ-ի մշակման և ՏՇ-ի, ՏՊ-ի դրանց առնչվող այլ փաստաթղթերի հրապարակման արժեքը,
- ՏՊ խորհրդատուի ծառայությունների արժեքը,
- Պետական կադաստրի մարմինների ծառայությունների արժեքը,
- Դատական վարույթների արժեքը,
- Արտաքին ավարտական աուդիտի ծախսերը:

Ակտիվների գույքագրման և գնահատման, մարդահամարի և USՀ-ի ավարտի հետ մեկտեղ հնարավոր են որոշ փոփոխություններ, որոնք մանրամասն կներկայացվեն Ծրագրին հատուկ ՏՊ-ներում: Ընդհանուր առմամբ, ՏՊ-ի ճշգրիտ բյուջեն կսահմանվի հետազոտությունների և գնահատման ավարտից հետո:

8.4 ՏՇ-ի և ՏՊ-ի իրականացման կարողությունների ստեղծում

Պատվիրատուն փորձառություն ունի միջազգային վարկատուների կողմից ֆինանսավորվող Ծրագրերի շրջանակներում հողերի օտարման ընթացակարգերի կիրառման ոլորտում: Այնուամենայնիվ, ՎՉԵԲ-ի պահանջների համաձայն հողերի օտարման և կենսապահովման վերականգնման գործողությունների, ինչպես նաև դրանց հետ կապված բողոքների կառավարման բնագավառում վերջինիս իրազեկվածությունը սահմանափակ է:

Պատվիրատուի ԾԻՄ-ի սոցիալական և տարաբնակեցման մասնագետը կունենա տարաբնակեցման բավարար փորձառություն և կապահովի ՏՊ-ի պլանավորման և իրականացման նախնական կարողությունների զարգացում: Ջրային կոմիտեի և դրա ՏՊ խորհրդատուի թիրախային խումբը, անհրաժեշտության դեպքում, կներառի սոցիալական, բնապահպանական և իրավաբանական անձնակազմը ինչպես նաև հողերի օտարման գործընթացին առնչվող ցանկացած այլ միավոր և ենթակապալառու(ներ):

Տարաբնակեցման կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում քննարկվող թեմաները կարող են ներառել՝

- Հողերի օտարման սկզբունքներն ու ընթացակարգերը (ազգային և ՎՉԵԲ),
- Ծրագրի շահագրգիռ կողմերը,
- Հողերի օտարման և տարաբնակեցման գործընթացում ներգրավված կազմակերպությունները և նրանց դերերը,
- Հանրային խորհրդակցությունների և մասնակցության գործընթացը,
- Իրավունքների, փոխհատուցման և բաշխման մեխանիզմները,
- Խոցելիության գնահատումը և խոցելիության աջակցության անհատական միջոցառումների մշակումը,
- Կենսամիջոցների վերականգնման գործողությունների իրականացումը,
- Բողոքարկման մեխանիզմը, և
- Հողերի օտարման և տարաբնակեցման գործողությունների մշտադիտարկումը և դրանց վերաբերյալ հաշվետվությունը:

9 ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

9.1 Ներքին մշտադիտարկում

Պատվիրատուն և նրա ԾԻՄ-ը կմշտադիտարկեն վերոնշյալ իրականացման ժամանակացույցով նախատեսված գործողությունների իրականացումը և կզեկուցեն ՎՉԵԲ-ին՝ ժամանակացույցով նախատեսված առաջընթացի մասին: Մշտադիտարկման հիմնական նպատակը կլինի գնահատել ՏՊ-ի իրականացման առաջընթացը՝ հողի օտարման, կենսապահովման վերականգնման արդյունքները, դրանց ազդեցությունը ԾԱԵԱ-ների կենսամակարդակի վրա և արդյոք ՏՊ-ի նպատակները իրականացվել են և/կամ անհրաժեշտ են որևէ ուղղիչ գործողություններ:

Մշտադիտարկման հատուկ միջոցառումներն ու ցուցանիշները կմշակվեն ՏՊ-ներում: Մշտադիտարկման ցուցանիշները կներառեն մուտքային, ելքային և արդյունքային ցուցանիշները և կառաջարկվեն վավերացման ժամանակացույցի, մշտադիտարկման հաճախականության, ինչպես նաև մշտադիտարկումը իրականացնելու, դրա արդյունքները գնահատելու և անհրաժեշտության դեպքում ուղղիչ կառավարման որոշումներ կայացնելու դերերի/պարտականությունների հետ մեկտեղ: Մշտադիտարկման ցուցանիշները կարող են ներառել հետևյալը՝

- ՏՊ-ի նպատակների իրականացումը և արդյոք ՏՊ-ում նշված բոլոր ներդրումները կատարվել են:
- Մեղմացնող միջոցառումների իրականացման և դրանց արդյունավետության գնահատումը և արդյոք դրանք համապատասխանում են Հայաստանի և ՎՉԵԲ-ի պահանջներին:
- Կենսամիջոցների վերականգնման ընդհանուր ծախսերը՝ համաձայն վճարման ժամկետների:
- Անհատական փոխհատուցման պայմանագրերի քանակը:
- Անցումային աջակցություն հայցող ԾԱԵԱ քանակը և նրանց տրամադրվող աջակցության տեսակը:
- Կանխիկ փոխհատուցում ստացած ԾԱԵԱ թիվը և դրանց բաշխման եղանակը:
- Խոցելի դասակարգված ԾԱԵԱ ցանկը և նրանց տրամադրված աջակցությունը:
- ԾԱԵԱ կենսապահովման վերականգնման աջակցություն տրամադրելու համար վարձված փորձագետների հաշվետվությունները:
- ԾԱԵԱ-ների սոցիալ-տնտեսական կարգավիճակը՝ համեմատած տնտեսական տեղահանումից առաջ եղած նախնական պայմանների հետ (ներառյալ ԾԱԵԱ վերաբերյալ հավաքագրված տվյալների սեռային և խոցելիության տարանջատումը):
- Բողոքարկման մեխանիզմի արդյունավետությունը.
 - ստացված բողոքների քանակը, Ծրագրի մակարդակով լուծված բողոքները և դրանց լուծման տևողությունը,
 - չլուծված (ընթացքի մեջ գտնվող) բողոքների քանակը,
 - դատարան ներկայացված բողոքների քանակը և դատարանում հարցը լուծելու համար սահմանված ժամանակացույցը և այլն:
- ՏՊ-ի իրականացմանը ներգրավված շահագրգիռ կողմերի հետ շարունակական խորհրդակցությունների օրակարգը և արդյունքները, ներառյալ նիստերի արձանագրությունները և ստորագրված մասնակցության թերթիկները:
- Գնահատում այն մասին, թե արդյոք ԾԱԵԱ կենսապահովման միջոցները վերականգնվել են:

9.2 Արտաքին ավարտական աուդիտ

Արտաքին ավարտական աուդիտը կպատվիրվի Պատվիրատուի կողմից մոտավորապես մեկ տարի անց՝ փոխհատուցումների վճարումից և կենսապահովման միջոցների վերականգնման աշխատանքների մեծ մասի ավարտից հետո:

Ավարտական աուդիտը պետք է անցկացնի անկախ տարաբնակեցման/կենսապահովման վերականգնման փորձագետի (կազմակերպության) կողմից:

Ավարտական աուդիտի նպատակն է ստուգել, որ իրականացված ՏՊ-ն արդյունավետ է եղել Ծրագրի ազդակիր անձանց կենսամակարդակի և կենսապահովման վերականգնման գործում, իսկ եթե ոչ, ապա առաջարկել անհրաժեշտ ուղղիչ գործողություններ: Հետևաբար, այս աուդիտն ունի հետևյալ նպատակները՝

- Գնահատել տեղահանման հետևանքները կանխելու և նվազագույնի հասցնելու միջոցառումների արդյունավետությունը՝ համեմատելով Ծրագրի հողերի և մարդկանց վրա իրական ազդեցությունը ՏՊ-ում փաստաթղթավորվածների հետ,
- Ստուգել, որ ՏՊ-ում նկարագրված բոլոր իրավունքներն ու պարտավորությունները կատարվել են,
- Որոշել, թե արդյոք ՏՊ միջոցառումները արդյունավետ են եղել ազդակիր մարդկանց կենսամակարդակը և կենսապահովման մակարդակը վերականգնելու կամ բարելավելու հարցում: Դա անելիս մանրամասնորեն վերանայել այն ԾԱՏՏ-ների տնտեսական, սոցիալական և անձնական հանգամանքները³⁷, որոնք չէին վերականգնի իրենց կենսապահովման միջոցները,
- Ստուգել համակարգային բողոքները, որոնք կարող են լուծված չլինել:
- Նույնականացնել ՏՊ պարտավորությունների կատարմանը հասնելու և հետագա օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ բոլոր ԱԵՏՏ-ներին (մասնավորապես՝ խոցելի ԱԵՏՏ-ներին), որոնք չեն կարողացել վերականգնել իրենց կենսապահովման միջոցները:

Ավարտական աուդիտը կկենտրոնանա կենսապահովման վերականգնման վրա: Կենսապահովման չափման արդյունքները մեկնաբանելիս անհրաժեշտության դեպքում հաշվի կառնվեն մակրոտնտեսական գործոնները (օրինակ՝ գնաճ, անշարժ գույքի արժեք, տնտեսության ընդհանուր աճ կամ անկում): Հատուկ ուշադրություն կդարձվի հողի օտարման ազդեցության գնահատմանը խոցելի ազդակիր տնտեսությունների հանգամանքների և գենդերային հնարավոր ազդեցության վրա:

Ավարտական աուդիտի հաշվետվությունը կներկայացնի եզրակացություններ կենսապահովման վերականգնման արդյունավետության վերաբերյալ և կնույնականացնի ցանկացած ուղղիչ միջոցառում, որը անհրաժեշտ կլինի ԾԱԵԱ-ների վերականգնումն ավարտելու համար:

³⁷ Զանի որ Ծրագրին չառնչվող բազմաթիվ գործոններ կարող են դեր ունենալ որոշ տնային տնտեսությունների կողմից իրենց ապրուստը վերականգնելու անկարողության վրա: